

ՄԻՈՆ

ԱՊՐԻԼ

ՄԱՅԻՍ

ՅՈՒՆԻՍ

ԹԻԻ 4-5-6

1994



2013

ՄԻՈՒՆ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

ԿԸ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1994

Ապրիլ - Մայիս - Յունիս

Թիւ 4 - 5 - 6

1994

April - May - June

No. 4 - 5 - 6

SION

VOL. 68

A MONTHLY OF RELIGION LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

Proprietor : His Beatitude The Armenian Patriarch Of Jerusalem



St. James Press, Jerusalem

ԽՐԱԳՐԱԿԱՆ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑPATRIARCHE SUPREME
CATHOLICOS DE TOUS LES ARMÉNIENSN^o

Ս. Էջմիածին

19

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա.
ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՋԸ
ՓՐԿՁԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻՒՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(1994 թ. ապրիլ 3)

„Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի“

Սիրելի հաւատացեալներ, Սուրբ Զատիկ է այսօր, տօնն է Յիսուսի յարութեան հրաշխի:

Ամէն գարնան, մեր սրտերում բոլոր, ծաղկում է փառք ուրախութիւնը յարութեան աւետիսի: Մեծ աւետիսի, որ երկու հազար տարիներից ի վեր, իբրև գերագոյն բարի լուր, անցնում է դարերի միջով, անցնում է սերնդից սերունդ, միշտ նոյն հոգեցունց ու ժականութեամբ: Հոգիների փրկութեան և արդարութեան ծարաւի մահախուճապ բազմութիւնները մարդկային, յաւիտապրելու տեսիլքը իրենց սրտերի մէջ ծրարած, յոյսի լապտերները վառ պահած, ցնծութեամբ են դիմաւորում բարի լուրը աշխարհաստան:

Մահուան ու չարի դէմ՝ Քրիստոսի յաղթանակով, ամէն տարի վերստին լուսաւորում է ճանապարհը մարդկային կեանքի, մեր կեանքի, ձեր բոլորի կեանքի:

Քրիստոսի յարութեան խորհրդի մէջ, մի՛ փորձէք թափանցել մարդկային մտքի չափանիշերով, կաղապարներով: Միայն սիրտն է, այսինքն՝ մարդկային հոգու յոյգերի աշխարհը, որ կարող է մեզ բաց անել արահետներ դէպի կատարները յարութեան հրաշխի: Այն սիրտը, որի առաջին զարկով սկիզբ է առնում մեր կեանքն այս անցաւոր, այն սիրտը, որ կարող է լուսաւորել ու առաջնորդել մեր գործերը, մեր մտքերը, այն սիրտը, որ կարող է մարդուն դարձնել բարի սերմերի սերմնացան երկրային կեանքի անդաստաններում:

Արդ, սիրելի՛ ժողովուրդ, կանգնած այսօր կեանքի ու մահուան սահմանների վրայ, ցնծագին ուրախութեամբ աւետենք Քրիստոսի յարութիւնը: Թող մեր սրտերում վերստին պայծառանայ մեծ յոյսը մեր հոգիների փրկութեան ու անմահութեան, իբրև յաղթանակը արդարութեան:

Այո, այսօր, Ս. Զատիկի առաւօտեան, հրամայականօրէն այժմէական է խօսել արդարութեան յաղթանակի մասին նաև մեր ժամանակների մարդկային կեանքում, որովհետև չարի խափանումով, արդարութեան

յադրութեամբ է, որ հնարաւոր պէտք է դառնայ պահպանումը և ամրապնդումը աշխարհի խաղաղութեան և պետութիւնների համերաշխ գոյակցութեան: Արդարութիւն և խաղաղութիւն իրարից անբաժանելի, իրար պայմանաւորող քրիստոնէական սրբազան գաղափարներ են, որոնք, ինչպէս անցեալում, նաև այսօր, ամենաֆաղցր երազանքներն են հանդիսանում բոլոր ժողովուրդների լայն զանգուածների:

Այսօր Ս. Զատկի օրով, երբ ոգեկոչում ենք նուիրական յիշատակը Յիսուսի, որ Գողգոթայի բարձունքի վրայ իր արիւնը թափեց՝ սիրոյ, խաղաղութեան և արդարութեան պատգամները իր շրթներից, մեր քրիստոնէական խիղճը թելադրում է մեզ՝ մատնանշել չարիքի արմատները, որոնք դարերից ի վեր արգելափակում են բնական զարգացման ընթացքը ընկերային ու միջազգային կեանքի, դէպի ստեղծումը և ամրապնդումը մի արդար ու խաղաղ աշխարհի: Այդ օրը պիտի գայ այն ժամանակ միայն, երբ մարդկային ընկերային ու միջազգային կեանքը վերակառուցուի ճշմարտապէս Քրիստոսի Աւետարանի բարոյականութեան հիմքերի վրայ: Երբ մարդիկ իրենց համար հոգեկան պահանջ նկատեն բարօրութիւնը իրենց նմանների: Երբ ժողովուրդները իրենց սեփական ապահովութիւնը և ազգային շահերի պահպանումը տեսնել սովորեն՝ աշխարհի բոլոր ազգութիւնների եղբայրութեան, անվտանգութեան և փոխադարձ շահերի միասնութեան գիտակցութեան մէջ:

Սէր դէպի Արարիչը բարեխնամող և դէպի Նրա արարչագործութիւնը հիասփանչ, սէր դէպի մարդը, դէպի բոլոր մեր նմանները անխտիր, ահա մայր ապրումը Յիսուսի, ահա սեպուհի պատուիրանը Նրա:

Աստուծոյ ու մարդկանց հանդէպ մեր սիրուց է, որ բխում է գոյութեան իմաստը երկրային կեանքի և ուրախութիւնը ապրելու, սէրը բարու և ճշմարտի, սէրը արդարութեան ու խաղաղութեան, սէրը շինարար աշխատանքի և համերաշխ գործակցութեան, մարդկանց և ազգութիւնների միջև:

Մարդու գոյութիւնը և պատմութիւնը պատահական և աննպատակ իրողութիւններ չեն: Անհնար է համոզուել՝ թէ մարդկային կեանքը, նւթական տիեզերքի կոյր փոթորկումների մի ակնթարթի փրփուր է միայն:

Մեր սուրբ հայրերից Ներսէս Շնորհալի Կաթողիկոսը Ամենայն Հայոց մեզանից ութ հարիւր տարիներ առաջ երգել և փառաբանել է այդ սէրը, Յիսուսի սէրը, աղերսելով, որ այդ սիրով նմուեն, շաղախուեն սրտերը մարդկանց՝

«Սէր անուն Յիսուս,

Սիրով քով նմեա,

սիրտ իմ փարեղէն»:

Ինչքան այծմէական, ինչքան ճշմարտացի են հնչում այս սուրբ խօսքերը նաև մեր օրերում:

Սիրելի հաւատացեալներ, նայեցէ՛ք աշխարհին, մեր ժամանակների կեանքի պատկերին, միջպետական յարաբերութիւններին, միջազգային անցուդարձերին ու պիտի տեսնէ՛ք, թէ մարդկութիւնը այսօր էլ տագնապում և

տառապում է վատառողջ, հիւանդագին մղումներից, շահագործումներից, բռնութիւններից, ազգամիջեան ատելավառ քշնամութիւններից, եղբայրասպան արարքներից, արիւնալի պատերազմներից: Դարեր շարունակ հայ ազգը իր իսկ հայրենի հողի վրայ նման տառապանքներ ու ողբերգութիւններ է ապրել, ինչպէս նաև մեր օրերին՝ հայոց արցախեան աշխարհում:


Մենք ևս, հետևաբար, Շնորհալի մեր մեծ Հայրապետի խօսքերով դիմենք յարուցեալ Աստուածորդուն, աղերսելով՝ Տէր մեր և Փրկիչ մեր Յիսուս Քրիստոս, Քո սիրովդ նմի՛ր փարեղէն սրտերը մեր ժամանակների մարդկանց և փրկի՛ր մարդկային աշխարհը վերջնական կործանումից:

Երանի՛թ է մեր օրերի պետութեանց սահմանադրութիւններն ու օրէնքները ևս շաղախուած լինէին Քրիստոսի սիրով, Քրիստոսի Աւետարանի խաղարարար շնչով:

Սիրելի հաւատացեալ զաւակներ Մեր, որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի, այս խոհերով ու իղձերով բերում ենք ձեզ բոլորիդ անխտիր աւետիսը Քրիստոսի սուրբ յարութեան, խոր հաւատով, որ մեր հայրենաբնակ ժողովուրդը Հայաստանում և Արցախում վերջապէս ազատագրուած անցեալի ողբերգական ճակատագրի կապանքներից, իր մայր հողի վրայ պիտի ապրի ու գոյատևի ազատ ու ինքնիշխան, և կերտի իր նոր ապագան:

Ինչ լաւ է սիրելիներ, որ գարուն է այսօր, որ Զատիկ է այսօր, որ մենք՝ բոլոր հայաստանցիներս, մեր հայրենի հողի վրայ ենք ապրում մեր նորաստեղծ անկախ պետութեան հովանու ներքոյ, որ մարտնչում ենք յաղթահարելու մեր առաջ ծառացած դժուարութիւններն ու զրկանքները անմար յոյսով, որ պիտի հասնենք նաւահանգիստը արդարութեան և խաղաղութեան:

Փա՛նք արդարութեան արեգակ և խաղաղութեան իշխան յարուցեալ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի այժմ և յաւիտեան. ամէն:



Կարգապահ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՈԳԻԻ ՊԱՏԵՐԱԶՄ

Ամէն տարի, հաւատարմօրէն հետեւելով սուրբերու տօնակատարութեան համակարգին, Մեծ Բարեկենդանի նախորդող Հինգշաբթի օր կը տօնենք յիշատակը Վարդանանց Պատերազմի, եւ կը կատարենք հանդիսաւոր յիշատակութիւնը Վարդանանց սուրբերու: Անոնց մեզի թողած պատգամը յստակ յայտարարութիւն մըն է.-

- Մերը՝ հոգետր պատերազմ է.

- Հոգիի պատերազմ է.

- Հաւատքի պատերազմ է:

Եւ այս յայտարարութեան հիմունքը մեր Աստուածաշունչն է, մեր հաւատքն է: Արդարեւ, մարդ արարածը, ամէն բանէ աւելի եւ ամէն բանէ առաջ, հոգի է, հոգետր էակ է՝ մարմինի մէջ բնակող: Այս պատճառով, մարդուն կարիքները, մտահոգութիւնները եւ ապրելակերպը երկու խումբերու կը բաժնուին՝ մարմնաւոր եւ հոգետր: Մարմինին ցանկացած եւ հոգիին ցանկացած ապրելակերպեր:

Մեր քրիստոնէական հաւատքի ուսուցումով, մարմնական մտահոգութիւնները, ցանկութիւնները, ուրախութիւններն ու ցաւերը ժամանակաւոր են: Իսկ հոգեկան ուրախութիւնները եւ ցաւերը (մեղքերու հետեւանքով) յաւիտենական են: Որովհետեւ հոգիին երջանկութիւնը՝ արքայութիւն է: Իսկ հոգիին պատիժը՝ դժոխք: Մինչեւ իսկ այս աշխարհի վրայ: Այս պատճառով՝ իմաստալից եւ ճշմարիտ են մեր ժողովրդական արտայայտութիւններն, երբ անդրադառնալով այս աշխարհի մէջ ապրած մեր կեանքին, ամենօրեայ կացութեանց, կ'ամ կ'ըսենք՝ «երջանիկ եմ, արքայութեան մէջ կ'ապրիմ», եւ կ'ամ կ'ըսենք՝ «դժոխքի մէջ կ'ապրիմ», «կեանքս դժոխք է»:

Մարդ արարածին հիւանդութիւններն ալ երկու խումբի կը բաժնուին.- Մարմնական եւ հոգեկան:

- Հոգիով զօրաւոր եղողները կրնան մարմնական ցաւերը տանիլ, եւ կը դիմանան:

- Իսկ միայն մարմինով զօրաւոր եղողներ չեն կրնար հոգեկան ցաւերը կրել, տանիլ: Անոնց ճնշումին ներքեւ կ'ընկճուին, կը խորտակուին:

Հետեւաբար, ինչպէս որ մարմինին առողջութեան համար մարմնակրթանքը եւ մարզումը կարեւոր է, նոյնչափ եւ աւելի կարեւոր է հոգիին կրթանքը եւ մարզումը:

Հոգիին բոլոր առաքինութիւնները երեք բառերու մէջ ամփոփած են եկեղեցւոյ հայրերը.-

Հաւատք.- Յոյս.- Մէր.-

Հաւատքը՝ հոգիին կամքն է.

Յոյսը՝ հոգիին լուսատւ միտքն է.

Մէրը՝ հոգիին առատաբոլմս սիրտն է:

Մարդ չի կրնար այս երեքը իրարմէ բաժնել, կ'ամ մէկը ունենալ եւ միւրը չունենալ: Կ'ամ անոնցմէ մէկը ընդունիլ եւ միւրը անտեսել, արհամարհել: Անոնք միասնաբար՝ առողջ հոգիի անբաժանելի ամբողջութիւնը կը կազմեն:

ՀԱԻԱՏՔ.-

Դիմանալու համար աշխարհի մէջ եւ քու շուրջդ վիստացող չարութեանց, ատելութեանց, նախանձի, քանդիչ եւ կործանիչ վայրագութեանց, միայն քու հաւատքդ՝ որ հոգիիդ կամքն է, քեզ անխախտ պիտի պահէ քու համոզումիդ մէջ, որ Չարը դատապարտուած է կործանելու: Արարիչ Աստուածն է Տէրը տիեզերքին: Եւ Անոր կամքը ի վերջոյ պիտի կատարուի.- «Եղիցին կամք քո»: Եւ դուն կը հաւատաս այդ կամքին: Եւ քու կամքդ կը ներդաշնակես Անոր կամքին: Եւ քու կամքդ, ի հարկին, կ'ենթարկես Անոր կամքին:

Այսպէսով՝ ինքզինքդ ամբողջ, ապահով եւ զօրաւոր կը զգաս:

ՅՈՅՍ.-

Երբ քու կողմէ ամէն նախաձեռնութիւն եւ փափաք՝ օգնելու սիրելիիդ, ընտանիքիդ, ազգիդ, շրջապատիդ եւ ընկերութեան, կը հանդիպի ձախորդութեան, եւ ինքզինքդ կը գտնես անյուսութեան դիմաց, անկարելի տեսնելով որեւէ մէկ ճանապարհ, եւ յուսահատութեան մատնուած՝ պատրաստ ես վերջ տալու ամէն բանի, ամէն յարաբերութեան, Յոյսը՝ որ հոգիիդ լուսատու միտքն է, կարծես յանկարծ կը լուսաւորէ քեզ շրջապատող խաւարը, եւ քեզի կը վերադարձնէ այն վստահութիւնը որ ունէիր դուն Աստուծոյ վրայ, եւ գիտէիր թէ միայն Անոր պէտք է ապափնիս, եւ Անկէ ուղղութիւն խնդրես, որպէս զի իրագործես ինչ որ բարի է ու արդար, հաստատուն մնալով Աստուծոյ մասին քու ունեցած Հաւատքին եւ Յոյսին վրայ:

ՍԷՐ.-

Նոր Կտակարանի աւետարանական եւ քրիստոնէական ուսուցումին համաձայն, Աստուած էր որ առաջին անգամ Իր սէրը արտայայտեց, տիգեզրքի ստեղծումով, եւ իր պատկերին համաձայն մարդը ստեղծելով:

Իսկ Աստուծոյ հանդէպ մարդուն կողմէ արտայայտուած սէրը՝ երախտագիտութեան եւ Անոր շնորհիւ եւ ներկայութեան մէջ մնալու հաստատ որոշումն է, կապն է, կեանքն է:

Միաւ հասկցուած եւ սխալ գործադրուած սէրեր կը խանգարեն սիրոյ ներդաշնակութիւնը, եւ պատճառ կը դառնան ապերջանկութեան, դժոխքի վերածելով կեանքը՝ անհատին, ընտանիքին, ընկերութեան եւ ազգերու յարաբերութեանց մէջ:

Աստուածաշունչին մէջ գործածուած են երեք տարբեր բառեր, որոնք սիրոյ յարաբերութեան տարբեր արտայայտութիւններ են, Յունարէն լեզուով:

Մէկը՝ ֆիլիա բառով կ'արտայայտէ «բարեկամութեան» եւ «պարտաճանաչութեան» սէրը:

Միւսը՝ էրոս բառով կ'արտայայտէ կիրքի, տռփանքի սէրը:

Իսկ երրորդը՝ Ագապէ բառով կ'արտայայտէ քրիստոնէական սիրոյ առաքինութիւնը: Այս իմաստով կը գործածուի «Սիրոյ ճաշի» բացատրութիւնը, որ նոյն ինքն «սուրբ Հաղորդութեան ճաշակումն է»:

Եթէ մէկը կ'ուզէ իր սիրոյ իսկական պատկերը տեսնել, իբրեւ հայելիին մէջէն, պէտք է ուշադրութեամբ կարդայ, եւ ամէն մէկ բառին վրայ մտածելով եւ ինքզինքը փնտռելով եւ քննելով, ինչ որ Պօղոս Առաքեալ գրած է Կորնթացոց ուղղուած Առաջին Թուղթին Տասնըերեքերորդ գլուխին մէջ, որ նոյն ատեն իսկական սիրոյ համանուագ մըն է:

Հոգիի այս կրթութիւնը եւ մարզանքը ունեցողը միայն կրնայ ըմբռնել պատգամը Վարդանանց մեր սուրբերուն, որոնք յայտարարեցին թէ «մեր այս հաւատքէն ոչ մէկ զօրութիւն, իշխանութիւն, սպառնալիք, հոյս կամ սուր կարող է մեզ հրաժարիլ ստիպել:»

Այսօր, մեր Հաւատքը, Յոյսը, եւ Սէրը փորձի կ'ենթարկէ աշխարհ:

Այսօր, մեզմէ ամէն մէկը մարմինի եւ հոգիի ներքին պայքարի մէջ կը գտնուի:

Պատրա՞ստ ենք Վարդանանց հոգիով յայտարարելու որ մենք մեր հոգին պաշտպանելու կռիւն որոշած ենք շարունակել: Այս ըսելը՝ դիպին է, բայց ընելը՝ դժուար է: Եւ որպէս զի կարողանանք իսկապէս ապացուցանել որ մենք մեր խօսքին տէրն ենք, պէտք է կարողանանք ցոյց տալ որ մենք գիտենք մեր հաւատքը, մեր յոյսը, մեր սէրը: Այդ գիտութիւնը կ'ունենանք լսելով եւ սորվելով: Կը սորվինք կարդալով, կը սորվինք մտիկ ընելով եւ աղօթելով:

Մեծ Բարեկենդանէն Աւագ Շաբաթ երկարող օրերը նշանակուած են մեր հայրապետներուն իմաստուն կարգադրութեամբ որպէս զի անհատապէս մենք մեր հոգիին կեանքը կարողանանք զօրացնել, հիմնատրել, եւ նոյն ատեն հաւանաբար կարողանանք իրար քաջալերել, միասին աղօթել եւ միասին սորվիլ, զինուելու համար այն հոգետր զէնքերով, առաքինութիւններով, որոնց զօրութեամբ պիտի կարողանանք սանձել Սատանան, Չարը, իր բոլոր սաղրանքներով:

Այդպէսով գուցէ մենք իբրեւ հայ ժողովուրդ, իբրեւ հայ ընտանիք, պիտի ունենանք ապահովութիւնը որ մեր մարմնական ուրախութիւններէն եւ ցաւերէն աւելի, որոնք գիտենք թէ ժամանակաւոր են, մեր հոգիին ուրախութիւնը եւ երջանկութիւնը պիտի իրագործենք մեր հոգիի առաքինութեան գործերուն միջոցաւ, եւ զանոնք ժառանգ պիտի թողունք յաջորդ սերունդներուն:

Առանց գործի՝ հաւատքը մեռեալ է:

Թ.Ա.Մ.

ԿՐՕՆԱԿԱՆ

ԶԶԱՆԶՐԱՆԱԼ

Քանի՞ անգամ, քարեկամդ, որ տագնապի մէջ է, որ ենթարկուած է անարդարութեան եւ հալածանքի, ըսած է քեզի։- Ո՞ր է Աստուած, ո՞ր է իր արդարութիւնը։ Ինչո՞ւ չի պատժեր անարդարութիւն գործողները, չարիք տարածողները։ Ինչո՞ւ թոյլ կու տայ որ գրպարտողները, գողութիւն եւ խարդախութիւն ընողները ազատ պտտին իրենց ուզածը ընեն, առանց պատժուելու։

Քանի՞ անգամ հայ ժողովուրդի գաւակներ Աստուծոյ դէմ բողոք, գայրոյթ արտայայտած են, իրենց հաւատքը կորսնցուցած են, որովհետեւ Աստուած չի տեսներ, չի լսեր մեր ժողովուրդին ֆաշածները, անմեղ մեր մայրերուն, բոլորներուն, հարսնուկներուն եւ մանուկներուն կոտորածը, չարչարանքը սերունդէ սերունդ։

Եւ մինչեւ իսկ այսօր ալ Հայաստանի եւ Արցախի մէջ անոնց ֆաշած տառապանքը, ջուրի եւ հացի պակասութենէն, լոյսի եւ ջեռուցման միջոցներու չգոյութենէն։ Հոգիի եւ մտքի դաստիարակութեան եւ ուսման, գիտութեան եւ արուեստի ստեղծագործութեանց, արուեստագէտներու եւ տաղանդներու ծլարակումին եւ ծաղկումին ընթացքը կասեցնող, խամրեցնող պայմաններու ճնշումէն։

Հապա՛ աշխարհի ամէն կողմը բռնկող պատերազմները, ուժակոծումները, ֆաղափներու կործանումները, միլիոնաւոր մարդոց սպանութիւնները, կրկին ու կրկին անգամներ Աստուծոյ երեսին կը նետեն յուսահատ մարդուն հարցումը, թե՛ «Ո՞ր է Աստուած։ Ինչո՞ւ թոյլ կու տայ որ կատարուի այդ բոլոր չարիքը։»

- Յիսուսին ալ մարդիկ, եւ մինչեւ

իսկ իր աշակերտները, նոյն հարցումը կ'ընէին։

- Եւ ան կարն, կտրուկ պատասխան մը տուաւ։- Պէտք է անդադար աղօթել։

- Յիսուսին շրջապատող մարդիկը շատ գոհ չը մնացին այս պատասխանէն։

- Այսօր ալ մենք այս պատասխանը փծիծաղով մտիկ կ'ընենք, եւ հազիւ թէ կ'ընդունինք։

Եւ Յիսուս մեզի համար ալ Անիրաւ Դատաւորի յուսաբանող առակը պատմեց, ըսելու համար որ պէտք է յուսահատինք։ Պէտք է ըսենք. «Ձանձրացայ աղօթելէն»։ «աղօթելն ալ օգուտ չընք»։

Որովհետեւ՝

Քաղաքի մը մէջ դատաւոր մը կար, որ Աստուծմէ չէր վախնար եւ մարդոցմէ չէր ամչնար։ Նոյն քաղաքին մէջ այրի կին մը կար, որ այս դատաւորին կ'երթար, խնդրելով որ իր դատը տեսնէր իր հակառակորդին դէմ։

Այս դատաւորը, որ Աստուծմէ չէր վախնար եւ մարդոցմէ չէր ամչնար, կարեւորութիւն չէր տար այս այրի կնոջ։ Ձայն կ'արհամարհէր, կ'անտեսէր, որովհետեւ շահ մը չէր տեսներ անոր մէջ։ Մինակ մնացած խեղճ այրի կնոջ մը դատը տեսնելը՝ ժամավաճառութիւն եւ գլխուցաւանք կը նկատէր։ Եւ երկար ատեն անոր երեսը տեսնել չէր ուզեր։

- Բայց այրի կինը շարունակեց իր խնդրանքը ներկայացնել, մինչեւ որ Դատաւորը ինքզինքին ըսաւ։- «Ճիշտ է որ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ չեմ ամչնար. բայց այս կինը «գլուխս ցաւոց», «հոգիս հանց»։ Անոր դատը տեսնեմ, վերջացնեմ։ Ազատիմ այս զգուսնէն,

գլուխ-ցաւանճէն: Այլապէս անընդհատ պիտի գայ եւ «հոգիս պիտի մաշեցնէ», եւ զգուեցնէ զիս:»

Եւ Յիսուս ըսաւ. «Լա՛ւ լսեցէ՛ք թէ այդ անիրաւ, կաշառակեր, վաշխառու դատաւորը ինչ ըսաւ:»

Կը կարծէ՞ք թէ Աստուած արդարութիւն պիտի չընէ իրեն հաւատարիմ, եւ ուղղամիտ ընտրեալներուն, որոնք կ'աղօթեն եւ չեն ձանձրանար խնդրելէ:

Կարելոր պայման է.- Աղօթել, չը ձանձրանալ, եւ խնդրել:

- Պայման չէ, որ քու աղօթքիդ եւ խնդրանքիդ պատասխանը անպայման ստանաս քո՛ւ ուզած ատենդ. եւ քո՛ւ ակնկալած ձեւովդ:

Աղօթքին երկու հիմնական տարրերն են.-

Առաջին.- Շնորհակալութիւն. փառաբանութիւն.

Երկրորդ.- Խնդրանք.

Ա. Երբ Աստուծոյ կը դիմենք աղօթքով, կ'ընդունինք որ Ա՛ն է, տուողը եւ Տէրը ամէն բանի. նաեւ ինչ որ մենք ե՛մք եւ ունի՛մք:

Այս պատճառաւ Ամոր շնորհակալ պէտք է ըլլանք, հի՛մա մեր ունեցածին եւ մեզի տրուածին համար:

Կրնա՞ս հիմա հաշուել եւ յիշել ինչ որ ունիս իբրեւ քուկ, բայց քեզի տրուած, քեզի շնորհուած, զանազան շնորհներու անունով:

Կրնա՞ս «Շնորհակալ եմ, ով Ա՛ստուած» ըսել:

Եթէ ո՛չ՝ այն ատեն պիտի ըսես «Աւելին կ'ուզէի, քի՛չը տուիր»:

Ու դժգոհութիւնդ պիտի յայտնես:

Գրիգոր Նարեկացին շնորհընկալ հոգիով, կը յիշէ եւ կը հաշուէ, իրեն տրուած շնորհները՝ եւ կ'ըսէ. «Ո՛չ թէ տրուածին՝ այլ տուողին եմ կարօտ»:

Այս պատճառաւ, մանուկներուն հոգեբանութիւնը ուսումնասիրողներ, կը թելադրեն որ երեխային պէտք է սորվեցնել «շնորհակալ եմ» ըսել Աստուծոյ՝ իր ունեցածին համար՝ սկսելով հայրիկէն, մայրիկէն, պուպրիկէն եւ շնիկէն, եւ ինչ որ իր շուրջը կայ:

Գիտենք թէ ինչպէ՞ս կարգ մը երեխաներ կը մերժեն «Շնորհակալ եմ» ըսել: Եւ կը յամառին: Այդ ցոյց կու տայ թէ ինչպիսի՛ ընտանեկան եւ ընկերային շրջանակի մէջ կը մեծնան:

Բ. Աղօթքին երկրորդ հիմնական տարրը խնդրանքն է: Ով որ սորվեր է «Շնորհակալ եմ» ըսել Աստուծոյ, քնականօրէն ան կը սորվի իր խնդրանքներն ալ ցնորկայացնել, ապաւինելով Աստուծոյ խնամքին եւ ոչ թէ ի՛ր կամքին: Վստահելով Աստուծոյ խնամքին եւ ոչ թէ ի՛ր ցանկութեան եւ պահանջքին:

Եթէ մեր պահանջքն է որ կը ցնորկայացնենք իբրեւ խնդրանք, այն ժամանակ երբեք պիտի չըմբռնենք Աստուծոյ կամքը:

Աստուծոյ ընտրեալները անոնք են որոնք գիտեն եւ միշտ կը յիշեն թէ, իրենք խնդրողներն են: Եւ հաւատարմօրէն, եւ առանց ձանձրանալու, եւ առանց յուսահատելու կը սպասեն՝ Աստուծոյ կամքին իրագործման, այն վստահութեամբ որ, իրենց խնդրանքը եթէ Աստուծոյ կամքին համաձայն է, անպայման պիտի շնորհուի՝ անպայման պիտի իրականանայ: Եւ թերեւս պիտի իրականանայ բոլորովին տարբեր բնոյթով եւ տարբեր ձեւերով, քան ինչ որ իրենք կ'ակնկալէին:

Այն ատեն անոնց սրտերուն մէջ ուրախութիւնը պիտի բազմապատկուի, եւ անոնք աւելի շնորհ-ընկալ հոգիով պիտի գոհութիւն յայտնեն, եւ փառաբանեն անունը այդ շնորհները տուողին:

Ու նորէն Գրիգոր Նարեկացիին հետ

պիտի կրկնեն. «Ոչ թե տրուածին՝ այլ տուողին եմ կարօտ:»

Յակոբոս Առաքեալ իր Ընդհանրական բուղթին Հինգերորդ Գլուխին մէջ կ'ըսէ. «Ձեզմէ մէկը վշտի՞ մէջ ինկած է՝ թող աղօթէ: Մէկը բերկրանքի՞, ուրախութեան՞ մէջ է, սաղմոս թող երգէ:

«Ձեզմէ մէկը հիւանդ է, թող կանչէ եկեղեցիին երէցները, տարիփոտները, եւ թող աղօթք ընեն անոր վրայ ... եւ հաւատով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը, ու Տէրը ոտքի պիտի հանէ զայն: ... Աղօթք ըրէ՛ք իրարու համար, որպէս զի քժշկուիք. որովհետեւ արդարին աղօթքը շատ զօրաւոր է ...»

Պէտք է կրկնենք որ կարեւոր պայման է. — Աղօթել, չը ձանձրանալ, եւ խնդրել:

Եւ անոնք որոնք այս շնորհքը ունին, եւ հետեւաբար Աստուծոյ ընտրեալներուն խումբին մաս կը կազմեն, անոնց եւս Աստուած պարտականութիւն տուած է տկարներուն օգնելու, միտքով, հոգիով, մարմինով հիւանդ եղողներուն հետ եւ անոնց համար աղօթելու: Որովհետեւ «հաւատով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը ... նաեւ որովհետեւ՝ արդարին աղօթքը շատ զօրաւոր է ...» կ'ըսէ Յակոբոս Առաքեալ:

Երանի այն անձին, երանի այն ընտանիքին, երանի այն ազգին, որ ունի

հաւատով աղօթող բարեկամներ, եւ շնորհ-ընկալ զաւակներ: Որովհետեւ անոնց միջոցաւ է որ Աստուած իր օրհնութիւնը, իր բուժիչ զօրութիւնը կը բաշխէ իր զաւակներուն, որպէս զի մարդերը առողջ մնան հոգիով, միտքով եւ մարմինով. եւ գիտնան ուրախութեան սաղմոս երգել, չարին կործանարար սաղանքները խափանել, եւ Աստուծոյ ճշմարիտ խաղաղութիւնը եւ արքայութիւնը մարդոց հոգիներուն մէջ հաստատել:

Այն ատեն պիտի չըսենք. «Ո՛ւր է Աստուած»: Որովհետեւ գիտենք թէ Ան մեզմէ ամէն մէկուն հետ է, եւ մեր մէջն է:

Այն ատեն միայն մէկ խնդրանք կ'ունենանք իրեն ներկայացնելու. —

— Տուր մեզի շնորհը՝ շնորհ-ընկալ ըլլալու Գու մեզի տուածին համար:

Նաեւ, տուր մեզի շնորհը՝ բու ներկայութիւնդ, բու պատկերդ տեսնելու, մեր շուրջը եղող բոլոր Գեղեցիկ, ճշմարիտ եւ Բարի հոգիներուն եւ երեւոյթներուն մէջ:

Այն ատեն է որ օրհնութեան եւ փառաբանութեան սաղմոս պիտի երգենք միշտ, Անո՛ր՝ որուն անունը պէտք է փառաւորենք. յաւիտեանս յաւիտեանից:

Թ.Ա.Ա.

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

«Այս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ,
կորսուած էր ու գտնուեցաւ:» Ղկս. 15:24

Կորսուած գաւակը իր գրկին մէջ ունեցող հօր մը սրտագին արտայայտութիւնն էր այս, որ առնուած է այսօրուան Ճաշու Աւետարանին ընթերցուածէն, Ղուկաս Աւետարանի 15րդ գլուխ, համար 24:

Ղուկաս Աւետարանի 15րդ գլուխը ամբողջութեամբ նկատուած է, Քրիստոնեայ մտածողի մը կողմէ, «Աւետարան՝ Աւետարանի մէջ», ուր կը տեսնենք Հօր Աստուծոյ ներող, ընդունող Սէրը, ոչ թէ միայն արդարին նկատմամբ, հապա նաեւ «տուն դարձող» մեղաւորին նկատմամբ:

Արդէն իսկ Մեծ Պահոց երրորդ կիրակին ենք թելակոխած: Որքա՛ն ուրախ պէտք է ինքզինքդ որ Հայց. Եկեղեցւոյ գաւակներ ենք: Տարին անգամ մը հանդիսաւորապէս Ապաշխարութեան նուիրուած Մեծ Պահոց շրջանը կ'ունենանք: Կը մտնենք անկէ ներս որպէս մարգարանի մը, հոգեկան, իմացական ինչպէս նաեւ փիզիքական կրթութիւն ու վարժութիւն ձեռք բերելու համար: Եթէ ծուլացած ենք Աստուածաշունչի ընթերցման մէջ, կրնանք վերսկսիլ: Եթէ թուլացած ենք աղօթքի մէջ, կրնանք գոց սորվուած մեր աղօթքներու կողքին մեր անձնական պէտքերը եւս ներկայացնել Աստուծոյ: Նոյնպէս սկսիլ Քրիստոնէական ու Աստուածահաճոյ արարքներ կատարել, մէկը անոնցմէ այցելութիւն տալն է ամէն անոնց որոնք պէտք ունին մեր նպատակաւոր այցելութեանց:

Յիսուս՝ համաձայն իր սովորութեան, մաքսաւորներու եւ մեղաւորներու հետ բարեկամութիւն կը մշակէր: Փարիսեցիներ ու դպիրներ կը գայրաճային ու չէին

հասկնար թէ ինչպէ՞ս Յիսուսի նման անձ մը որ ինքզինք ներկենքէն դրկուած Մեսիա եւ կեանքի հաց կ'անուանէր, կը հանդուրժէր մեղաւորներու հետ ըլլալ: Փարիսեցիներ ու դպիրներ, ըլլալով Հին Ուխտի ներկայացուցիչներ, կը հաւատային թէ Աստուած միայն իրենց, արդարներու Աստուծոյն էր եւ ոչ թէ մաքսաւորներու եւ մեղաւորներու: Սակայն Յիսուս, Նոր Ուխտի ուսուցիչ, ճիշդ հակառակը կը հաստատէր: Կը սորվեցնէր թէ Աստուած միայն արդարներու հայրը չէր, հապա հայրն էր նաեւ մեղաւորներուն, մաքսաւորներուն:

Այսօրուան Ճաշու Աւետարանը սապէս կը սկսի. «Եւ բոլոր մեղաւորները ու մաքսաւորները Յիսուսի կը մօտենային լսելու համար: Եւ Փարիսեցիներն ու դպիրները տրտունջ կ'ընէին ու կ'ըսէին ասիկա մեղաւորները կ'ընդունի, ու անոնց հետ կ'ուտէ»: (Ղուկ. 15:1,2)

Այս ժխտական քննոյթ ունեցող շարժառիթը պատճառ եղաւ որ Յիսուս պատասխանէ անոնց երկու փոքր եւ երրորդ, չափաւոր տարողութիւն ունեցող առակներով որոնք էին, կորսուած ոչխարին առակը, կորսուած դրամին առակը եւ կորսուած որդւոյն առակը, որոնք հետագայ դարերուն ներշնչման աղբիւր հանդիսացան բազմաթիւ արուեստագէտներու, ֆանդակագործներու, երգահաններու, ֆարգիչներու:

«Կորսուած ոչխարի» առակին մէջ կը տեսնենք թէ ոչխարը իր անմտութեան պատճառաւ կորսուեցաւ: «Կորսուած Դրամի» առակի մէջ՝ մէկը զինք կորսնցուց: Սակայն «Կորսուած որդին», «Անառակ

Որդին» որու անունով այսօրուան կիրակին եւս կոչուեցաւ, կամովին կորուստի նամբան բռնեց: Յիսուս, իւրաքանչիւր առակի վերջաւորութեան սապէս արտայայտուեցաւ. «Ձեզի կ'ըսեմ որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկնքի մէջ, հրեշտակներու առաջ, մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ»:

Յիսուս պատմեց թէ հարուստ մարդ մը երկու որդիներ ունէր: Կրտսեր որդին, առհասարակ կրտսերները ըմբոստ կը դառնան, ուզեց դուրս գալ իր հօրեմական տունէն, մօտեցաւ իր հօրը ու հարցուց իր ժառանգութեան բաժինը ունենալ: Այդ օրերուն անսովոր չէր որ հայր մը իր ժառանգութիւնը բաժնէր զաւակներու մէջ իր ողջութեան: Տուաւ կրտսեր որդւոյն բաժինը, ան ալ առաւ իրեն ինկած ժառանգը ու հեռու երկիր գնաց: Կրտսեր որդին ուզած էր ազատ ըլլալ իր կեանքին մէջ: Իր մէջ անճանախորհիւնը տեղ էր բռնած: Չենք գիտեր որքան ժամանակ հեռու մնաց տունէն, քանի ամիսներ եւ կամ թէ քանի տարիներ. վերջապէս եկաւ ժամանակը ուր արդէն իսկ վատնած էր իր ունեցածը սխալ նամբու մէջ, սխալ հաղորդակցութեանց մէջ: Ինչպէս Աստուածաշունչը պիտի ըսէր՝ «Չար ընկերակցութիւնը բարի վարքը կ'ապականէ»: Այդպէս ապականուած էր այս Կրտսեր Որդւոյն կեանքը: Պատահեցաւ որ սով մը տիրեց երկրին մէջ, կ'ըսէ առակը. թէեւ սովի պատճառով չէր որ խոզարած դարձաւ, հապա իր ունեցածը մսխած էր անառակութեան մէջ, որով բոլորովին անօգնական, առանձինն ու լքուած մնաց իր բարեկամներէն, ու իր սրտին մէջ նաեւ զգաց որ Աստուծմէ եւս հեռացած էր: Գործ գտնելու համար դիմեց ու զինք ղրկեցին խոզերու հոգ տանելու, որով այս հարուստ մարդուն զաւակը յանձ առաւ պծգալի ու շատ ցած մակարդակի վրայ գտնուող գործը կատարելու:

Սակայն Անառակ Որդւոյն այս տխուր եւ ժխտական կեանքի շրջագծին մէջ շատ գեղեցիկ բան մը պատահեցաւ որ կրնար չպատահիլ: Թերեւս շատերու մէջ նման յայտնութիւններ տեղի կ'ունենան բայց անոնք չեն անդրադառնար: Յիսուս կ'ըսէ թէ այս կրտսեր ու անառակ Որդին, խոզարածութեան տգեղ եւ ամբողջալի վիճակին մէջ «ինքզինքին եկաւ»: Ապաշխարութեան առաջին քայլն է որ Անառակ Որդւոյ մտքին մէջ տեղ գտաւ: Ինքզինքին եկաւ, անդրադարձաւ իր վիճակին: Եթէ ինք հոս կանգ առնէր ու Ապաշխարութեան յաջորդ քայլը չառնէր, ինքզինքին գալը ոչ մէկ նշանակութիւն պիտի չունենար: Շատ անգամներ անոնք որոնք դժուարութեան մէջ են ու սխալի մէջ, թէեւ կը գիտակցին սակայն յաջորդ քայլը չեն առներ:

Օր մը ծխական մը եկաւ ու ըսաւ. «Հարցում մը ունիմ»: Ըսաւ թէ քսան տարիներէ ի վեր չեմ հաղորդուիր, կը խորհի՞մ սխալ է: Ըսի ինչո՞ւ համար չես հաղորդուած: Պատասխանեց թէ ինք մեղաւոր կը զգար: Թէեւ Անառակ Որդին եւս ինքզինք մեղաւոր զգաց, սակայն քայլ մ'առնել որոշեց: Բայց իմ ծխականս ինքզինք մեղաւոր նկատելէ ետք քայլ չէր առած: Ըսի իրեն թէ արդեօք Յիսուս սխալ էր երբ քու քսան տարիներու մեղքերուն համար իր արիւնը թափեց ըսելով թէ ամէն բան վերջացաւ քու փրկագործութեանդ մէջ, ինչո՞ւ դուն չես օգտուիր մեր ու քու մեղքերուն համար իր վնասած «գին»էն: Գնաց: Տեսայ որ յաջորդ կիրակի Սուրբ հաղորդութիւն ստացաւ: Ուրախ եղայ սրտիս մէջ: Հաւատացի թէ ան Յիսուսի եւ իր միջեւ հոգեւոր կապ էր հաստատած: Վերադառնալով Անառակ Որդւոյն Առակին, կը տեսնենք թէ իր առած Ապաշխարութեան առաջին քայլէն ետք, որ էր, ինքզինքին գալ, անդրադառնալ ներկայ մեղաւոր վիճակին, երկրորդ քայլը եւս

առնել որոշեց, որ էր երթալ իր հօր: Տուն վերադառնալ, ուր որքա՛ն գործաւորներ, ծառաներ կ'աշխատէին եւ կուշտ ու կուռ կ'ապրէին, մինչ ինք խոգերու կերածէն իսկ բաժին չէր կրնար ունենալ:

Սակայն այս եւս պիտի չքաւէր եթէ Ապաշխարութեան երրորդը քայլը առնելու որոշումը տուած չըլլար որ էր «խոստովանիլ» իր հօր, ըսելով. «հայր մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջեւ: Զաւակդ կոչուելու արժանի չեմ: Ոչ թէ զաւակի մը պէս, հապա գործաւորներէդ մէկուն տեղը դիր»: Ու՛ մամբայ ելաւ եւ գնաց իր հօրը մօտ:

Մինչ Որդին հեռացած էր, հայրը կարօտով կը սպասէր իր զաւակին վերադարձին: Երբ հեռուէն նկատեց որ իր զաւակը կու գար, չմտաւ իր ներքին սննեակը, ըսելով. «ինչպէս որ գնաց այդպէս քող գայ որդիս: Երբ գայ յանդիմանեմ զինք ու պատժեմ: Հապա, Յիսուս կը պատմէ թէ դէպի իր զաւակը վազեց: Գրկեց զինք ու համբուրեց: Որքա՛ն յուզիչ էր տեսարանը: Զաւակը կը փորձէր իր գոց սորված նախադասութիւնները արտասանել թէ մեղանչած էր երկնքի ու իր դէմ ...: Հայրը մտիկ անգամ չէր ընէր: Հրահանգեց ծառաներուն «հանել նախկին պատմութեանը», ու հագուեցնել զինք, որ կը խորհրդանշէր անմեղութիւն ու պատիւ: «Մատանի դնել ձեռքին», որ կը խորհրդանշէր տիրութիւն, իշխանութիւն: «Կօշիկ ոտքերուն» որ կը խորհրդանշէր Որդիութիւն, որովհետեւ տան մէջ որդին կօշիկ կը հագուէր մինչ ծառան ոտաքոպիկ կը շրջէր: Հրահանգեց պարարտ զուարակը մորթել ու աւելցուց. «Ուտեմք եւ ուրախ ըլլանք, որովհետեւ այս իմ որդիս մեռած էր ողջնցաւ: Կորսուած էր գտնուեցաւ:» Եւ սկսան ուրախ ըլլալ:

Ինչ որ նկարագրուեցաւ ճաշու Աւետարանի ընթերցումին սկիզբը, այսինքն հոգեւորապէս ժխտական մարդոց,

փարիսեցիներու եւ տաճարի ուսուցիչներու, դպիրներու բողոքն ու տրտունջը, թէ՛ Յիսուս մեղաւորներ կ'ընդունէր եւ անոնց հետ ճաշ կ'ուտէր, նոյնը պատահեցաւ երբ անառակ որդիին երէց եղբայրը ագարակէն տուն վերադարձաւ: Լսելով նուագներու ձայնն եւ ուրախ բացագանչութիւնները, հարցուց ծառաներուն թէ ի՞նչ էր պատահել: Ըսին թէ եղբայրդ է վերադարձած ... Պարարտ զուարակն է մորթուած ... Ուրախութիւն տեղի կ'ունենայ: Երէց որդին խիստ քարկացաւ: Ներս չէր ուզեր մտնել:

Հայրը դուրս եկաւ ու փորձեց համոզել քարկացած զաւակը: Երէց որդին իր ընդվզումը ներկայացուց ըսելով թէ. «Ես այսքան տարիներ հաւատարմօրէն ծառայած եմ քեզ: Ու մը անգամ չտուիր որ ընկերներուս հետ ուրախութիւն ընէի, սակայն այս քու զաւակդ, որ քու ստացուածքդ անբարոյ անձնուր հետ մսխեց, անոր համար մորթեցիր պարարտ զուարակը»: Հայրը պատասխանեց ըսելով, Որդեակ դուն միշտ ինձի հետ ես, ու իմ բոլոր ունեցածս քու կը: Սակայն մեզի պէտք էր ուրախ ըլլալ, վասն զի «այս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:

Չենք գիտեր եթէ երէց որդին մտաւ ուրախութեան մէջ, սակայն վստահաբար հայրը մտաւ:

Սիրելի եղբայրներ ու բոյրեր, եթէ որեւիցէ մէկ ատեն շուարած ու շփոթած գտնուինք մեղքի ալիքներէն, կայ մէկը որու կրնանք դառնալ, Յիսուսի Անձին մէջ՝ սպասող, ընդունող, ներող եւ սիրող Հօր Աստուծոյ:

ԳՐԻԳՈՐ ՔԷՆՅ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔԱՐՈՋ

«Եւ աշակերտներն հանեց մինչեւ
Բեթանիա եւ բարձրացնելով իր
ձեռքերը օրհնեց նրանց եւ երկինք
համբարձաւ»:
(Ղուկ., ԻԴ 50-52):

Աստծու Բանի Տնօրինութեան բոլոր
տօները, որ հաստատեց երկրում,
միանգամայն հրաշալի են եւ փառաւոր:
Իսկ այսօր Համբարձման տօնը բոլորի
ամբողջացում է ցոյց տալիս: Նախ, որ
սկսեց Մնունդից եւ կարգով եկաւ խաչին,
մահուան եւ գերեզմանից յարութեան: Եւ
քառասուն օր յետոյ, այսօր երկինք
համբարձաւ եւ նստեց Հօր աջ կողմում:

Եւ դարձեալ հրաշալի է այս օրը եւ
ի պատուի, որովհետեւ մեր բնութիւնը՝
միաւորուելով Աստծու Բանի հետ՝
բարձրանում է անգուգական փառքով: Եւ
մեզ նոյն պատիւն է խոստանում, ինչպէս
ասում է առաքեալը. «Նրա հետ յարութիւն
տուեց եւ նրա հետ նստեցրեց երկնային
տեղերում» Քրիստոսով» (Եփես. Բ 6):
Ինքը՝ մեր Տէրը խոստացաւ. «Եւ ուր ես
եմ, այնտեղ էլ իմ ծառան կը լինի» (Յովհ.
ԺԲ 26), եւ երբ «կը գնամ եւ ձեզ համար
տեղ կը պատրաստեմ, դարձեալ կը գամ եւ
ձեզ կ'առնեմ ինձ մօտ» (Յովհ. ԺԴ 2-3):
Եւ ուր որ գլուխն է, այնտեղ պէտք է
հաւաքուեն անդամները:

Եւ ուր որ փեսան է, այնտեղ է
հրաւիրուած նաեւ հարսը, որ սուրբ
եկեղեցիին է եւ Քրիստոսի
հաւատացեալները: Մենք չորս քանով
հոգեպէս Քրիստոսին հարս դարձանք:

Նախ Հօր, Որդու եւ Սուրբ Հոգու
նկատմամբ հաւատով:

Երկրորդ՝ աւագանի ծնունդով՝ ջրով
եւ Հոգով:

Երրորդ՝ խաչի դրոշմը մեր նակատի վրայ
կնքեցինք:

Չորրորդ՝ որ հպուեցինք սուրբ
մարմնին եւ արեան, եւ սրանով
հրաւիրուեցինք Տիրոջ արքայութիւն:
Ինչպէս «Ով որ վերստին չծնուի ջրից եւ
Հոգուց, չի մտնի Աստուծոյ արքայութիւն»
(Յովհ. Գ 5) ըստ իր հրամանի:

Իսկ մենք՝ այժմ հրաւիրեալներս,
այսօր ուրախացանք Քրիստոսի՝ իր
արքայութիւն մտնելու յոյսով, իսկ յետոյ՝
վայելումով՝ «երբ Հօր սեղանին քաղմեցնի
արժանաւորներին եւ անցնի սպասարկելու»
(Ղուկ. ԺԲ 37): Որի համար եկեղեցին
երգում է այսօր. «Թող օրհնուի քո
քաղցրութեան տարուայ պսակը, Տէր»:
Նախ պսակ նշանակում է շրջանակ,
ինչպէս ասում է Սողոմոնը. «Ենում է
արեգակը եւ մայր է մտնում եւ իր տեղն
է ձգվում» (Ժող. Ա 5): Այսպէս
արդարութեան արեգակը՝ Քրիստոս ելաւ
Հօրից եւ մտաւ ամենասուրբ կոյսի մէջ,
եկաւ արեգակը կոյսի ծոցից եւ շրջելով
մտաւ հողի մէջ՝ գերեզման, եւ մեր
բնութեամբ գերեզմանից եկաւ իր տեղում՝
Հօր աջ կողմում նստեց:

Եւ ԱՌԱՋԻՆ գլուխը, քէ յարութիւնից
յետոյ որտեղ ապրեց Քրիստոս, մինչեւ որ
երկինք համբարձաւ: Վարդապետները
ասում են, քէ այս քառասուն օրերին
Քրիստոս օղի վրայ ապրեց:

Եւ ոմանք ասում են, որ այս քա-
ռասուն օրերը յարութիւնից յետոյ Քրիստոս

ապրեց Ադամի երկրաւոր դրախտում իրեն հետ յարութիւն առածներով, եւ միսիքարեց ենովքին եւ Եղիային մինչեւ երկինք համբարձաւ եւ բոլոր սրբերի հոգիները նրա հետ:

Սակայն Ղուկասը (աւետարանիչն) ասում է, որ քառասուն օրերին Յիսուս երեւաց աշակերտներին: Եւ Յովհաննէսը՝ «այս երեք անգամ աշակերտներին երեւաց մեռելներից յարութիւն առածը Յիսուս (Յովհ. ԻԱ 14): Սա է այն, որ Յովհաննէս նշանաւոր երեւում է ասում, ուր հրաշքներ պատահեցին, այսինքն՝ երկուսը՝ վերնատանը, եւ մէկը՝ ծովագերիքին: Սակայն Ղուկաս այն է ասում, որ մինչեւ Համբարձումը օդում էր ապրել կամ դրախտում եւ բոլոր կիրակնամուտներին երեւում էր աշակերտներին: Որովհետեւ աշակերտները ասում են, թէ տասն անգամ երեւաց նրանց. հինգ նոյն օրը, երբ յարութիւն առաւ մեռելներից, եւ հինգ՝ դարձեալ բոլոր կիրակնամուտներին երեւում էր նրանց եւ միսիքարում, նրանց համբերութեան կոչ էր անում՝ նրանցից հեռանալու առթիւ, որպէս զի չտիրեն: Եւ Աստուծոյ արքայութեան մասին ասում էր, թէ «Կը գամ եւ ձեզ համար տեղ կը պատրաստեմ երկնքի արքայութեան մէջ»:

Այս մտածումով է, որ բոլոր կիրակնամուտներին գալստեան շարական են ասում եւ Սուրբ Աստուածն էլ, «որ եկար եւ գալու ես»: Սա առաջին գլուխն է:

Երբ Տէրը համբարձաւ եւ առաքեալները դէպի արեւելեան կողմ երկրպագեցին եւ վերադարձան Երուսաղէմի տաճար, ճգնում էին՝ պահեցողութեամբ եւ աղօթքներով՝ սպասելով Ս. Հոգու միսիքարութեան, որ Քրիստոս խոստացաւ նրանց, թէ «Նստեցէ՛ք Երուսաղէմ քաղաքում, մինչեւ որ ես ուղարկեմ ձեզ իմ Հօր աւետիսը, եւ զօրութիւն ստանաք քարձուցմանից» (Ղուկ. ԻԴ 49): Ապա

տասներորդ օրը Ս. Հոգին իջաւ նրանց մէջ եւ ուրախացան Սուրբ Հոգիով: Դրա համար մենք էլ նրանց հետ դա պահում ենք սրբութեամբ, որպէս զի Ս. Հոգու իջման արժանի լինենք: Այսօր նրա պատիւով:

Եւ այժմ վերադառնանք մեկնութեան մեր խօսքին, որ ասում է. «Հանեց նրանց մինչեւ Բեթանիա»:

Իսկ որտեղի՞ց հանեց: Պարզ է, որ Երուսաղէմից, քանի որ այսպէս է պատմում Ղուկաս աւետարանիչը. «Մինչդեռ տակաւին ուրախութիւնից չէին հաւատում եւ զարմացած էին» (Ղուկ. ԻԴ 41):

Սա մարդկային բնութեան յատկանիշն է, որ երբ ցանկալի բանի են արժանանում, չեն հաւատում, թէ հասան կամ արդէն ունեցան, եւ այն բաներին, որ ատում են, աւելի են հաւատում: Նոյնպէս եւ առաքեալները, երբ հասան իրենց բաղձանքին երկրայեցին, ինչպէս որ Մատթէոսն է ասում. «Եւ ոմանք երկնտրամքի մէջ ընկան»: Եւ Յովհաննէսը ասում է, թէ «Ուրախացան աշակերտները, երբ տեսան Տիրոջը» (Յովհ. ԻԴ 20): Սա ասում է, թէ ուրախութիւնից զարմացել էին, երբ տեսան, որ Տէրը թանձր մարմնով փակուած դռներից մտաւ նրանց մօտ: Դրա համար Տէրը նրանց երկրայութիւնը հաւաստիութեան փոխելու համար ասաց նրանց. «Ուտելու բան ունե՞ք» (Յովհ. ԻԴ 5), եւ նրանք նրան տուեցին խորոված ձկան մի կտոր եւ մեղրախորիս, ոչ թէ ծաղ մեղր (մեղրահաց), այլ (հոսուն) մեղր, այսինքն իւղով եւ մեղրով պատրաստած հաց, որ իրենց բարեկամներն էին բերել. նրա առաջ սեղան դրեցին, եւ նա ըստ սովորութեան կերաւ նրանց առաջ: Եւ հրամայեց նրանց «մնալ Երուսաղէմում, մինչեւ զօրութիւն ստանաք քարձուցմանից»: Որովհետեւ ինչպէս կառավարը ձիերը վարում է դէպի մարտ, եւ ինչպէս զինուորը նախ զինուում, յետոյ է

մտնում մարտի մէջ, այդպէս էլ առաքեալները՝ կառք էին, եւ Ս. Հոգին կառավար: Նաեւ առաքեալները զինուոր էին եւ նրանց զենքն ու զօրութիւնը Ս. Հոգին էր. պէտք էր նախ Ս. Հոգու զօրութիւնը զգենուլ եւ զօրանալ, եւ ապա մարտի մէջ մտնել հրեաների եւ հեթանոսների, քաղաւորների եւ ազգերի աշխարհի դէմ:

Եւ այդպէս Հոգով զօրանալով, տկար մարմնով յաղթեցին ամբողջ աշխարհին: Եւ տգէտ ձգնորսները Հոգու իմաստութեամբ յաղթեցին աշխարհի բոլոր իմաստուններին եւ դարձրին ճշմարիտ աստուած-գիտութեան:

Այն ժամանակ նրանց հանում է լեռան գլուխը, որ Երուսաղէմ քաղաքի դիմացն է՝ արեւելեան կողմից: Եւ Բեթանիան լեռան այն կողմն է, ուր Համբարձաւ: Եւ թէ ինչո՞ւ Բեթանիայում Համբարձաւ եւ ոչ այլ տեղ, սա է պատճառը, որովհետեւ

Բեթանիա նշանակում է սգոյ եւ չարչարաբանների տուն. մատնացոյց է անում մեր քնութիւնը, որ վայելուչ դրախտից ընկանք այս երկիրը, որ սգոյ եւ չարչարաբանների տեղ է, որտեղ մահացանք ինչպէս Ղազարը: Եւ ինքը՝ Բանն Աստուած, մեր Տէր Թիսուս Քրիստոս եկաւ մեզ մօտ եւ կցորդ դարձաւ չարչարաբաններին, մահուան եւ տխրութեան եւ ինչպէս Ղազարի գերեզմանում արտասուեց, այնպէս իր չարչարանքներով միտքարեց մեզ տխուր սգից: Եւ յարութիւն առաւ գերեզմանից եւ յարութիւն տուեց մեզ՝ ինչպէս Ղազարին, եւ ազատեց մահից եւ սգից, եւ առնելով մեր քնութիւնը՝ երկինք համբարձաւ եւ մեզ խոստացաւ նոյն տեղը, ասելով. «Ուր ես եմ, այնտեղ էլ իմ ծառան պիտի լինի»: Այս է միտքը, որ Բեթանիայից երկինք համբարձաւ:

Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԻ ՄԱՍ
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆԱՇԽԱՐՀԻ ԵՒ ՄԱՐԴՈՒ ԸՆԿԱԼՄԱՆ ՆԱՐԵԿԱՑՈՒ
ՀԱՅԵՑԱԿԷՏԸԱրարիչն ամենեցուն անբեռոյթ է ի մարմնաւոր աչաց:
ԵՂԻՇԷ

Ա. Անմատոյց լոյսի մատչելի անդրադարձը

Հոգեւոր-գաղափարական այն մթնոլորտը, ուր ձեւաւորուել են Նարեկացու հայեացքները, յաւիտեական մի նշմարտութիւն էր նանաչում՝ աստուած, մի բարձրագոյն հեղինակութիւն՝ Աստուածաշունչը, մարդկային մի առաքինութիւն՝ հաւատը, բարոյական մի կատարելութիւն՝ Յիսուսի տիպարը: Մ. Արեղեանի քննդէմամբ՝ «Կրօնական էր այն դարի իշխող ոգին եւ ուղղութիւնը ոչ միայն մեր մէջ, այլեւ ընդհանուր աշխարհում» (1): Քրիստոնէութիւնը դար առ դար թափանցել էր ժողովրդի գիտակցութեան մէջ: Եկեղեցին միջին դարերում հանդիսանում էր քաղաքական եւ մշակութային կեանքի կազմակերպող ուժը:

Վանական դպրոցն իր սաներին պատրաստում էր հոգեւոր կոչման համար: Նարեկացին այդ սաներից մէկն էր՝ կրթութեամբ, եւ մանկավարժներից մէկը՝ պաշտօնապէս: Կրօնական մտածողութիւնը կազմում էր նրա աշխարհայեցողութեան անկիւնաքարը: Նա հաւատում էր անիմանայի եւ ամենագոր աստծուն՝ բոլոր գոյերի միակ եւ արարիչ ոգուն՝ առանց ֆննելու: Իր դաւանանքի քանոնները Նարեկացին սկսում է այսպէս. «Խոստովանիմք եւ դաւանեմք, պաշտեմք եւ երկրպագեմք զգոգափառ միութիւն ամենասուրբ Նորրոգութեանն. աստուածութիւն աննառ, միշտ բարի, նոյնագոյ,

հաւասարապատիւ, անհաս իմաստից թեւոյց սլացման, ի վեր քան զարինակ եւ անդր քան զմանութիւն, գերազանց գոյով սահմանի անպարագիր քացարձակութեամբ, յառաջ քան զհիմն յաւիտեանցս անտարրափակ էութեանց, ստեղծականացս կարգաց, արեւմարանութեամբ անթարգմանելեալ, ամենահարուստ մեծութեամբ յաւետ պսակել. հաստիչ ժամանակաց եւ որ ի ժամանակի են կերպաւորեալք, ինքն աննառ հանդերձիչ եւ յարինիչ տեսականաց եւ անբեռութիւն» (Բան ԼԴ, գ):

Հարկ չկայ յղելու դաւանանքի միւս կէտերը: Աստուածաշնչական ողջ առասպելութիւնը նախաստեղծ առաջին գոյգից մինչեւ Յիսուսի մարդեղնութիւն, խաչելութիւն եւ յարութիւն եւ այլն սրբագործուած նշմարտութիւն է Նարեկացու համար: Գիտակցութեան վերածուած հաւատ է հոգու անմահութեան գաղափարը՝ զուգորդուած յետմահու հատուցման պատկերացման հետ: Ամէն ինչ Նարեկացու համար գտնուում է բարու եւ չարի տիեզերական պայքարի մէջ: Մարդկութեան պատմութիւնը նա պատկերացնում է ոչ այլ կերպ, քան քրիստոնէական ուսմունքի գծած ուղեծիրով արարչագործութիւնից մինչեւ վերջին դատաստան: Մարդու երկրային կեանքի իմաստը չպէտք է լինի այլ քան, քան նմանուել Քրիստոսին, որ երկնքից երկիր

էր իջել, մարմնաւորուել որպէս մարդ՝ մարդու պէս տառապելու, խաչուելու եւ իր յարութեամբ ցոյց տալու հոգու աստուածացման ուղին: Աստուած գթասիրտ է այն աստիճան, որ նա իր միածին որդուն մատնեց մահուան, եւ Յիսուսն էլ յանձն առաւ «ընդ պարտեցելումս զմահուն նաշակել քաժակ՝ անքերի մարդկութեամբ եւ անպակաս աստուածութեամբ» (Բան ԽԴ, ա)՝ մարդկութեան մեղքը փախելու համար: Եւ եթէ մահն աշխարհ է եկել Ադամի մեղքով, ապա ըստ այդ պատկերացման՝ Յիսուսն իր մահով յաղթել է մահը: Կրօնական իր պատկերացումները Նարեկացին քանաստեղծօրէն տուել է այսպէս.

Զառ քեզ դարձն յեղանակեն
արգահատելով, զոր աւրհնեմ,
Զնշան խաչիդ փրկութեան՝ զոր
երկրպագեմ,
Զյարութեանն ճշմարտութիւն՝ որում
հաւատամ,
Զփառացդ քո յայտնութիւն՝ զոր փա-
ռաւորեմ,
Զդատաստանիդ ահաւորութիւն՝ զոր
խոստովանիմ,
Զբանիցդ յանդիմանութիւն՝ յորմէ
զարհուրիմ,
ԶՀոգւոյդ Սրբոյ ինձ ուղեկցութիւն՝ զոր
պաշտեմ,
Զաւծմանդ տեառնագրութիւն՝ զոր եւ
համբուրեմ,
Զթագաւորելն ընդ քեզ, տէր Յիսուս,
որում պաղատիմ:


(Բան ԼԳ, գ)

Տեսանելի աշխարհը ճանաչելի է զգայութիւնների եւ քանակականութեան միջոցով, քայց Նարեկացու համար իմացութեան այդ սահմաններից դուրս կայ նաեւ հաւատի ոլորտը: Իրերի եւ երեւոյթների մէջ պարփակուած է անիմանալի խորհուրդ: Նրանք աստուածային այդ խորհրդի գաղտնաբաններն են, եւ

աստծուն է միայն յայտնի այդ ծածուկ խորհրդի իմաստը: Զգտելով հասու լինել իրերի եւ երեւոյթների նշանակութեանն ու իմաստին, մարդկային միտքը պէտք է թափանցի անիմանալի ոլորտը՝ համամանութեան միջոցով եւ հաւատով աստուածայինն իմաստաւորելու համար: Այսպէս՝ ձեռքի մէջ թաթախուած պատրոյգը կոչուած է լոյս տալու: Լոյսը ծնում է նրանց փոխադարձ կապից: Նարեկացու համար այդ կապը խորհրդանշում է նաեւ Յիսուսի՝ «անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ» խորհուրդը, որպէս զի մենք, «ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ ի նոյն դարձցուի խնկաւորութիւն»: Այսպէս էլ մեռոնը՝ «հեղեալ ի մեզ աւծանէ զարտափն խորանս» - սա ծիսակարգի տեսանելի մասն է - մինչդեռ նրա ծածուկ խորհուրդն է՝ «զնքեփն մարդս, ծածկապէս մտեալ, նոր կենդանածնէ» (Բան ԴԳ, գ):

Աւելի պարզ է նարպախի մէջ թաթախուած պատրոյգի օրինակը: Պատրոյգը լոյս չի տալիս, քանի դեռ չի վառուել. «Պատրոյգ, թացեալ ի նարպում, ոչ երեւցուցանէ ինչ նշոյլ, մինչեւ հուրք լուցեալ վառիցի», - ասում է Նարեկացին, եւ այստեղ տարբերութիւն չկայ նրա եւ մեր մտածողութեան միջեւ: Բայց Նարեկացու համար ճշմարտութեան ընկալման այս մակարդակը թերի է: Մինչդեռ անհրաժեշտ է հասու լինել մեռոնի օծման խորհրդին. «սոյնպէս եւ աւծութիւն լուսոյ, առ ի մեզ հեղեալ, ի հանդերձեալսն ջահաւորի» (Բան ԴԳ, ժէ): Այստեղ է, ահա, սահմանաքաժանը: Իրերի եւ երեւոյթների աշխարհը տրուած է աստուածայինը ճանաչելու համար: Սա Նարեկացու աշխարհայեցողութեան էական գծերից մէկն է, որ յատուկ էր իր դարին:

Նարեկացու աշխարհընկալման մէջ ուրոյն երանգ ունի աստուածաբանաչութեան եւ մարդու աստուածացման հայեցակէտը: Դա թիւում է Կեղծ-Դիոնիսիոս



Արեռպագացու ֆրիստոնեացուած նորապատնականութիւնից եւ աղերսներ ունի Դաւիթ Անյաղթի նորապատնական հայեացքների հետ: Արեռպագացու տրակտատներում ֆրիստոնեական նորապատնականութիւնը հասել է իր բարձրակետին: Այդ երկերը, որոնք բաւարարել են միջնադարեան գաղափարախօսութեան պահանջները, խոր հետք են թողել թէ՛ քրիզանդական ու լատինական եւ թէ միջնադարեան հայ գրականութեան մէջ: Դրանք հայերէն է թարգմանել նշանաւոր երաժշտագետ, բանաստեղծ եւ ֆերական Ստեփանոս Սիւնեցի (683-735), «ըդ դարի առաջին ֆառորդին (3), լատիններէն՝ Խոհան Սկոտ էրիուգենը, 9րդ դարում(4), ռուսներէն՝ մետրոպոլիտ Կիպրիանը՝ 14րդ դարի վերջերի(5): Հայերէն թարգմանութիւնը, ինչպէս նաեւ Մաքսիմիանոսի մեկնութիւնը, դժբախտաբար, մինչեւ այժմ չեն հրատարակուել: Արեռպագացու երկերին ծանօթ են եղել Խոսրով Անճեւացին, Ներսէս Լամբրոնացին, Ներսէս Շնորհալին, Մխիթար Գոշը եւ այլն: Նարեկացին նրա անունը չի յիշատակել: Բայց անպայման ծանօթ է եղել նրա երկերին: Արեռպագացին, որ «աստուածեղէն գոգցես ոգով վառելոյ ի տարփումն հոգեւոր»(6), խոր ազդեցութիւն է թողել Խոսրով Անճեւացու վրայ, որի պատարագի մեկնութեան ընդօրինակողներից մէկն էլ եղել է Գրիգոր Նարեկացին:

Ըստ Արեռպագացու՝ կեցութեան կենտրոնը աստուծութիւնն է, որից բոլոր կողմերի վրայ նուազող համեմատականութեամբ տարածուած են լոյսի ֆառագայթներ՝ որքան հեռու, այնքան աղօտ: Հառապայթման այդ լոյսը տարածուած է հրեշտակներից մինչեւ մարդիկ, մինչեւ իրերն ու երեւոյթները՝ վերից վար: Աստուածութիւնը յաւերժօրէն անփոփոխ է, բնութիւնը, իրերը, երեւոյթները, մարդիկ՝

յարափոփոխ: Այդպէս էլ՝ փոփոխուն է իրերի աշխարհը, անփոփոխ է նրանց գաղափարների հանգրուանը՝ աստուածութեան մէջ:

Մարդկային իմացութիւնը ձգտում է նանաչել աստծուն՝ իրերից բարձրանալով նրանց պատկերների, պատկերներից՝ նրանց գաղափարների, նախածեւերի աշխարհը: Զգայականից վերացականին անցման այդ ուղին փոխներթափանցուած է հոգու զարգացմամբ: Հոգին իրրել լոյսի մասնիկ՝ անցնելով այդ աստիճաններով, կատարելագործում է լուսաւորուելով՝ աստծուն ձուլուելու համար: Հետեւաբար, աստուածանաչողութիւնը սկսում է տեսանելի եւ զգայելի գոյերից, որոնց վերացարկմամբ միտքը հասնում է նրանց պատկերների նանաչմանը, իսկ այնտեղից էլ՝ աստուածայինի, անմիւթական գոյերի նանաչողութեանը: Աստուած նանաչելի է դառնում ոչ թէ անմիջաբար, այլ երեւոյթների համամանութեան քաջայայտման շնորհիւ՝ մտահայեցաբար: Այսպէս՝ եռանկիւնին երկրաչափական պատկեր է, որ կարող է առարկայնօրէն լինել փայտի, ֆարի կամ այլ նիւթի մէջ: Հանաչողութեան այս աստիճանում այն տեսանելի է եւ զգայելի: Բայց կայ նաեւ նրա վերացարկուած մտապատկերը, որը, ինչպէս Դաւիթ Անյաղթն է ասում, նանաչողութեան այդ աստիճանում «մտածօրէն անմիւթ» է (7): Նորապատնականութեան տեսանկիւնից նանաչողութեան այս աստիճաններն անկատար են: Յաջորդ աստիճանը սկսում է մտապատկերների, խորհրդանշանների, անմարմին ձեւերի այս հիմքից՝ նրանց աստուածային գաղափարների նանաչողութեանը հասնելու համար: Խոնք է եռանկիւնին այնկողմային աշխարհի յարաբերութեամբ: Աստուածային իր յաւիտեական նախածեւի կամ գաղափարի արտայայտութիւն, որը որպէս գոտ հնարաւորութիւն՝ իր անսահման

մեծութեան եւ փոքրութեան մէջ՝ տրուած է աստուածութեան մէջ: Հետեւաբար, ըստ Արեւոյագացու, եռանկեան անփոփոխ գաղափարն է, որ վերից վար կարող է լինել նախ՝ մտփի, ապա՝ նիւթի մէջ, իսկ մեր մտածողութեան համար՝ վարից վեր նախ՝ նիւթի, ապա՝ մտփի եւ յաւիտեանապէս՝ աստուածութեան մէջ: Ուրեմն՝ երկրայինը նման է երկնայինին, ստորինը՝ վերինին: Երկրայինի մէջ տեսանելի է աստուածայինը, ինչպէս անդրադարձը հայելու մէջ: Դա է, որ հնարաւորութիւն է ընձեռում «ի գգալեացս յիմանալիսն համբառնալ մտաւ» (8), «Ջի եւ ոչ մարք է մերոցս մտաց առ աննիւթս յայն ճգտիլ երկնայինիցն քահանայապետութեանց նմանութիւնս եւ տեսութիւնս, եթէ ոչ նիւթականաւ ինչ առաջնորդութեամբ հպեցուք առ նոսա» (9) - գրում է Արեւոյագացին:

Նարեկացու համար եւս երկրայինը նման է երկնայինին, եւ կարեւորը նիւթի մէջ պարփակուած խորհուրդն է: Եկեղեցին, ի հարկէ, շէնք է, բայց Նարեկացու համար դա «կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան» է եւ ոչ թէ անշունչ քարերից կառուցուած տաճար, մեղաւորների ալեկոծ հոգիների խաղաղաւէտ մաւահանգիստ է, «դուռն երկնից եւ քաղաք աստուծոյ կենդանոյ եւ մայր կենդանեաց», «իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, եւ շաւշափելին՝ պատկեր մարմնոյս» (Բան ՀԵ, ԺԳ): Եւ Նարեկացին չի վարանում մտնել նրանց, ովքեր չարամտօրէն եկեղեցին շէնք են համարում:

Աստուածամանութիւնը նորապատկանակութեան էական գծերից մէկն է: Դաւիթ Անյաղթը փիլիսոփայութեան սահմանումներից մէկը ձեւակերպել է այսպէս. «փիլիսոփայութիւնը աստծուն նմանուելն է ըստ մարդկային կարողութեան» (10), իսկ դեռեւս ըստ Պատմի՝ «նմանուել աստծուն՝ նշանակում է լինել

քարեպաշտ եւ արդար, մնալով՝ խոհեմ» (11): Անշուշտ, աստուածամանութեան ըմբռնումն այլ էր հեթանոսութեան, այլ՝ քրիստոնէութեան համար: Քրիստոնեայի համար աստուածամանութիւնը հանգում էր հոգով աստուածութեան հետ միաւորութիւն: Նորապատկանակութեան այն դրոյթը, թէ ամէն ինչ ծագում է աստուծային լոյսից եւ լոյսի նման ձգտում է վերադառնալ իր ակունքին, չէր ծագում է աստուծային լոյսից եւ լոյսի նման ձգտում է վերադառնալ իր ակունքին, չէր հակասում հոգու փրկագործութեան մասին պատկերացմանը:

Ըստ Նարեկացու՝ մարդկային մարմինը կաւ է, ուր բեկուած է աստուածային լոյսի ճառագայթը: Հոգին կատարելագործում է մարմնի մէջ՝ կրքերի ձգողութեան ուժի յաղթահարմամբ: Ահա թէ ինչու չպէտք է անխոհեմ լինել կաւի հանդէպ, որպէս զի նա իր «հողեղէն քանձր ծանրութեամբ», չկասեցնի հոգու թռիչքը դէպի աստուած, որովհետեւ մարմինը կազմուած է չորս տարրերից՝ հողից, ջրից, կրակից եւ օդից՝ «Ձումն՝ ծանր ու զումն՝ թեթեւ, Ձմին՝ զով, եւ զմիւսն՝ հրային» (Բան ԶԶ, ա), ուստի նրանց դիմադրութիւնը պիտի կարողանալ պահել այնպիսի հաւատարիմ հաւասարութեամբ՝ որ տարրերի չխախտուած հաւասարակշռութիւնը դառնայ բարոյական առաքինութիւնների անխախտ հիմքը: Մարդու մէջ անասնականի յաղթահարմամբ պէտք է բարոյապէս ազնուացնել հոգին:

Նարեկացու համար բնութիւնը շնչաւորուած է աստուածութեամբ: Աստուած գտնուում է ամէն ինչի մէջ, թէ «յերկնի անճառ եւ յերկրի անգնին» եւ թէ «ի տարր գոյի եւ յեզրս ծագաց աշխարհի» (Բան ԽԱ, ք): Սա, ի հարկէ, նորապատկան հայեացք է, որը, սակայն, իր մէջ ունի պանթէիստական տարրեր: Պանթէիզմի

էութիւնը համգում է բնութեան աստուածացմանը: Նարեկացին, սակայն, պաշտում է բնութիւնը իրրեւ աստծու արարչագործութիւն: «Պանթէիզմը դեռ ընդունում է, որ գոյութիւն ունի ինչ-որ աւելի վսեմ բան, քան մարդն է իրրեւ աշխարհին» (12), - ասում է Էնգելսը - ու թէիւ Նարեկացին հեռու է բնութիւնն աստուածացնելուց, քայց նրա բնապաշտութիւնն արդէն նոր վերաբերմունք է դէպի բնութիւնը: Նարեկացին բնութիւնը տեսնում է ընկալում է նրա շարժման ու փոփոխութեան մէջ, ձգտում է իմաստաւորել ժամանակի եւ տարածութեան մէջ յարափոփոխ իրերի հիմքում ընկած անանցականը, բացայայտել ներհակ տարրերի դիմադրութեամբ ստեղծուած ներդաշնակութեան գաղտնիքները, ըմբռնել հակադրութիւնների միասնութեան բայբայման եւ նոր կերպարանափոխութիւնների պատճառներն ու հետեւանքները: Նիւթի որակների փոփոխութիւնները Նարեկացու համար չորս տարրերի համամասնութիւնների փոփոխութեան անընդհատ ընթացք է, ու թէիւ փոփոխութիւնները տեղի են ունենում տեսանելի բնութեան մէջ, քայց միշտ էլ նոյնն է նախասահմանուած շրջապտոյտը. Որ հոլովես գտարեւս՝ իբրեւ զանցաւորս եւ դարձեալ ի նոյնս կապես՝ իբրեւ գյարակայս ...

(Բան ԿԳ, Բ)

Այդ շարժման ու փոփոխման, մահացման ու նորոգման աղբիւրը, ինչ խօսք, Նարեկացու համար արարիչն է, աստուած: Նա է, որ բուսցնում է «յերկրէ դալարի գմեռեալս յանշնչականէն», տրոհում է ժողովում է «զպատկերս անխաւս աստեղեաց՝ իբր զդասակս դոյզն հաւտից», նա է, որ սասանում է «զերկիր եւ զսիւնս նորին ի հիմանց» (Բան ԿԳ, Բ): Եւ փոփոխութիւնների այս տիեզերական ու մարդկային կեանքի յաւիտեական

շրջապտոյտը ունի մի մեծ խորհուրդ՝ տեսնել, զգալ եւ ըմբռնել, որ միայն աստուած է, որ մնում է յաւերժ անկորնչելի: Փոփոխութիւնը կատարում է ժամանակի մէջ եւ գոյերի կեցութեան ոլորտում, մինչդեռ աստուածային անիմանալի յաւիտեանութեան մէջ նրանք՝ իբրեւ աստուաստեղծ ձեւ եւ տիպար, իբրեւ ոգի ու գաղափար, մնում են անփոփոխ:

Այն, ինչ վերաբերում է նւթական աշխարհի իրերի եւ երեւոյթների շարժմանն ու փոփոխութեանը ժամանակի եւ տարածութեան մէջ՝ իրենց ներհակ ուժերի ներքին բախման շնորհիւ, իսկապէս, դիալեկտիկական մտքի տարրեր են, անշուշտ, առանց Նարեկացու միատիկական հայեացքի յաւելման: Նարեկացին աշխարհը նմանեցնում է ծովի՝ ներհակ ուժերի հակադրամիասնութիւնը պատկերելու համար: Այդ ծովն ալեկծում է ոչ թէ ջրեղէն ալիքներով, այլ «ի զանազան պատահմանց շարժեալ, ախտիւ գայրացեալ, մեղօք պղտորեալ, յեղականօք այլայլեալ, եւ ընդդիմակայ ներհակօք զիրեարս բախեալ: Ոմն յաղթէ եւ ոմն պարտի, փախնու արշաւէ յանապաւէնն սահման, եւ անդէն նահանջի: Իբր գումար կենդանի գօրաց՝ միմեանց պատահին եւ անդէն ցրին, քակտին, լուծանին: Իբրեւ ազինք գանազան ազգաց ի գուր խոռովելոց յերկրէ կորուսեալ՝ անշնչապէս բարբառին, անձայն աղաղակեն, անխորհրդաբար խիզախեն. կեան եւ ոչ երեւին, գոն եւ ոչ էանան, են եւ ոչ նանաչին, մնան եւ ոչ տեսանին: Զփոփոխումն էիցս առակեն, զխաղացումն ժամանակացս յայտնեն, զսասանումն աւուրց նկարեն, զանցաւորացս բարձումն գրեն»: Այս ծովը մեծ է, լայնատարած, տիեզերածաւալ, ուր «սակաւուն գյոգունս ազդեն եւ ի բազմին զնչինս նշանակեն - շարունակում է Նարեկացին - մեծն ի փոքուն նանաչի, եւ դոյզն գյաւէտն պարունակէ, հօգօն յանկարծէն պատկառ է,

է, եւ վեհն ի տկարէն ընդոտնի, տեղի յարդարէ ուժգինն քաղցուն, եւ առանց մարտի ի քացուստ հերքին» (ԳՆՄ, 446):

Նարեկացու աշխարհընկալման ելակետերից մէկն էլ նրա մարդասիրութիւնն է: Աստուած սէր է Նարեկացու համար, եւ նրա այդ մարդասիրութիւնը չի կարելի կոչել այլ կերպ, քան քրիստոնէական հումանիզմ: Քրիստոսը մարմնացել է մարդու նմանութեամբ՝ մարդու համար, որպէս զի մարդուն քարոյապէս հոգեփոխի աստծու նման՝ աստծու համար: Ահա թէ ինչու աստուած ոչ թէ հրեշտակասէր է կոչուում, այլ մարդասէր, եւ այդ սէրը, ըստ Նարեկացու, պէտք է փոխադարձուի մարդու կողմից՝ աստծու նկատմամբ:

Եւ զոր մեծն է՝ գրեցից պատմել յապահւան:

Քանզի ոչ անուանեցար հրեշտակասէր՝
Եւ որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր,
Այլ եւ զերկինս զամբարաւք նոցին՝
զմատանց քոց գործ,

Ոչ գրեցեր երբէք ի սիրել զնոսա,

Այլ առեր ի պատիւ մեծաց գովեստից՝

Առաջին դասեալ զմարդասիրութիւնս:

(Բան ԼԵ, ա)

Նարեկացու մարդասիրութիւնը հանգում է մարդու քարոյական կերպարի վերափոխմանը՝ մարդկութեան սերնդաշարի հոլովոյթում: Եթէ քնութեան երեւոյթների փոփոխութիւնները մշտապէս վերադառնում են իրենց նոյն շրջապատյոյին, ապա, ըստ Նարեկացու, մարդու եւ մարդկութեան քարոյական կեցութիւնը մշտապէս գտնուում է աստծուն ձգտելու եւ աստուածանալու շարժման մէջ: Ուստի մարդու հոգու մէջ խաւարը փոխուում է լոյսի, չարը՝ քարու, ատելութիւնը՝ սիրոյ, փոքորիկը՝ խաղաղութեան, լիութեան, յոյսի, երկիւղը՝ վստահութեան եւ այլն, որովհետեւ աստուած չունի այլ նպատակ, քան «քաւել, փրկել, կենագործել, լուսաւորել, վերստին հաստատել» եւ «ի խորոց անդնդոց ի լոյս

քերկրութեան ածել, եւ ի հեղձմանէ ծփանաց մեղաց, ընդ արդարս փառաւք քաղմեցուցանել» (Բան ԶԲ, է): Նարեկացու ստեղծագործութեան մէջ, թէեւ աստուածացման միաստիկ ֆոդի տակ, մարդն արդէն դառնում է քարձրագոյն արժէք:

Եւ այսպէս, Նարեկացու աշխարհընկալման հիմքում, քացի քրիստոնէական ուսմունքի կրօնա-առասպելական պատկերացումների ողջ համակարգից, ընկած է նաեւ նորալատոնականութեան հայեացքը աստուածութեան՝ իրրեւ անփոփոխ լոյսի նառագայթման մասին, որը ներհեղուած է բոլոր արարածների մէջ եւ որը վերստին ձգտում է վերադառնալ իր աղբիւրին՝ աստուածութեանը: Մարդու հոգին եւս, իրրեւ աստուածային լոյսի մասնիկ, ձգտում է յաղթահարել մարմնի ցանկութիւններին ու կրքերի դիմադրութիւնը, մաքրուել մեղքերից եւ միանալ աստծուն: Մարդը կարող է հոգու փրկութեան հասնել քարոյական ինքնակատարելագործմամբ, աստուածային շնորհների ընկալմամբ:

Նարեկացին փոփոխութիւնը դիտում է որպէս չորս տարրերի հակադրութիւնների միասնութեան խախտում, նրանց հաւասարակշռութիւնը համարելով ներդաշնակութեան հիմքը թէ՛ քնութեան մէջ եւ թէ՛ մարդկային հոգու: Ամէն ինչ, սակայն, որ յաւիտեանական ներդաշնակութիւնը կարող է գտնել միայն աստուածութեան մէջ: Բարձրագոյն իմացութիւնը աստծու նախաշնորհութիւնն է, բարձրագոյն քարոյականութիւնը՝ աստուածանմանութիւնը, բարձրագոյն նպատակը՝ հոգու փրկութիւնը: Նարեկացու հայեացքն ուղղուած է մարդուն՝ աստծու համար, աստծուն՝ մարդու համար:

ԱՂԲԻԻՆՆԵՐ

1. Մ. Աքեղեան, հ. Գ, էջ 567

2. Մ. Աքեղեան, հ. Գ, էջ 538

3. Памятники средневековой латинской литературы, IV-IX вв., М., 1970, с. 358-359.

4. Памятники мировой эстетической мысли, т. I, М., 1962, с. 334.

Ռուս գրականագետ Բ. Սուչկովը ռեալիզմի պատմական ճակատագրին նուիրում է իր ուսումնասիրության մէջ, անդրադառնալով Դիոնիսիոս Արեոպագացու ֆրիստոնէացուած նորպատոնականութեանը, գրում է, որ նրա «Երկնային նուիրապետութեան մասին» տրակտատը, որը «վիրխարի դեր է խաղացել միջնադարեան ինքնագիտակցութեան ձեւաւորման մէջ, լիակատար հիմունքով կարելի է դիտել որպէս ֆրիստոնէական արուեստի գեղագիտական հիմնաւորում: Այդ երկում զգալի է աղերսը անտիկ օրյեկտիկ-իդեալիստական այն մտքի ու գաղափարի ըմբռնման հետ, որ իդեան հանդիսանում է կեցութեան նախահիմքը եւ սկզբնաշարժիչը»

5. ՆՀԲ, հ. Ա, էջ 11: Արեոպագացին ընդունում է երկնային փառանայապետութեան ինն դաս, որոնցից ամեն երեքը կազմում են մի կարգ: Բարձրագոյն կարգը կազմում են սերովրէները, ֆերովրէները եւ արոռները: Ժամակարգութեան (Б.Сучков, Исторические судьбы реализма, М., 1977, с. 21).

(Շարունակելի)

մեկնութեան մէջ Խոսրով Անձեւացին գրել է. «Անպատում արոռ աստուածութեանն ասէ զֆերովրէսն, վասն զի հուպ են առ աստուած, Բան զամենայն զօրս երկնայնոցն որպէս ասէ մեծն Դիոնիսիոս. եւ անընդմիջաբար առնուն յաստուծոյ գեղումն շնորհաց գիտութեան իմաստից եւ ինքեամբ յայլսն անցուցանեն» (Մեկնութիւն Ժամակարգութեան, որ արարեալ երանելոյն Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի եւ կարգադրեալն Մովսէսի գիտնական վարդապետի, յՕրթագիւղ, 1840, էջ 158-159): Աստուծոյ անմիջաբար շնորհների հեղում վերցնելու եւ իրենց միջոցով դրամբ մարդկանց փոխանցելու միտքը Արեոպագացու այն հիմնական գաղափարներից է, որը դարձել է նորպատոնականութեան հիմնադրոյքներից մէկը: 6. Դաւիթ Անյաղթ, Երկեր, Թարգմանութիւնը, առաջաբանը եւ ծանօթագրութիւնները Ս. Ս. Արեւշատեանի, Երեւան, 1980, էջ 105: 7. ՄՄ, ձեռ. նո. 49, էջ 8 ք: 8. Նոյն տեղում, էջ 6 ա: 9. Դաւիթ Անյաղթ, Երկեր, էջ 67: 10. Նոյն տեղում, էջ 70: 11. Կ. Մարքսը եւ Ֆ. էնգելսը արուեստի մասին, հ. 1, էջ 564:

Ա. ՂԱԶԻՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ՀԱՐՈՒՆԻ ՈՐԴԻՈՅՆ ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

49. Ափերդ բիւր մարտեր տըփն մեզ աւանդ.
Անցան ... Հըռչակնուն կէսն մոռցըւած այսօր.
Եզերքներդ տեսան մարդկային ըսպանդ,
Որոնց շիրիմներն իսկ չըկան - ի՞նչ են որ ...
Ջուրդ լըաց իրենց հետքն արեան անցատր,
Պատկերդ կը պարէ մէջ արփոյն լոյսին,
Անբիծ է Հոգիդ, մաքուր, լուսատր ...
Բայց սեւ յուշերու, խորշմած երագի
Վրայ թաաւող ալիքներդ՝ զուր պիտի հոսին:
50. Այս ըսաւ Հարուլտ ու գնաց անդի,
Բայց ոչ անըզգայ շուրջի բաներու
Որ, արթնցուցին երգն թռչնոց Հօսվտեն,
Կարող աքսորեալն իսկ զըւարճացնելու.
Թ'եւ խիստ փոթեր կային յօնքերու,
Ջերմ ըզգացում սը մաշող կրակին,
Հանդարտ լըրջութիւն տեղն անոր գրաւած.
Խնդրութիւնն չէր միշտ բացակայ դէմքին
Բայց մերթ այդպիսի ատեն կ'երեւէր շուքն խաբկանքին:
51. Ոչ իսկ սէրը իր դէմ գոց էր լըման,
Թէեւ Հրայրքն իր արդէն մոխրացած.
Մեր նայուածքը պաղ՝ զուր տեղը սակայն
Պիտի ըսպասիր - սիրտն իր պիտ՝ անցած
Յուշերուն երթար, մէջէն իր զըզուած
Աշխարհիկներուն զըտնելու համար
Փափուկ յուշերու էակ սը՝ կառչած
Որուն, նոյնիսկ հետն Չուլուիլ իսկ կըրնար.
Սըրտառուչ իր պահերուն հետը նոյնանալ:
52. Սիրելու վարժ էր - չեմ գիտեր ինչու,
Տարօրինակ էր այս, իրեն պէս մէկուն,
Անզօր նոայուածքով նոր ծաղկող մանկան՝
Այնքան կանուխէն, ինչն ազդեց այնքան,
Փոխելու միտք մ'որ լըման տոգորուն
Քամահրանք ցուցնող - արժէ իմանալ?
Միայն այս էր սակայն: Առանձնութեան մէջ
տարօրէն Հակումն մանկան պիտ մեծնար,
Առնէր լըման փայլ, ուրիշ ամեն ինչ սընային անփայլ:

(Թրգմն. Մուրատ Մանուկեան)

LORD BYRON

ՀԱՅՈՑ ՏԱՆԹԷԱԿԱՆԸ (Գլուխ Քսաներորդ)

- 9.- Ես դեգերում եմ դժոխք. որ չմոռանաք
Ահեղ եղեռնի լաբիրինդները Լեթային չտաք.
Վրէժի թուրը պատեան չդնէք երբեւէ՝ քանզի
Հայոց թրերի միակ պատեանը ձինն է Մասիսի.
Միակ պատեանը հայոց թրերի՝ Վանայ ծովն է ծով,
Որ դեռ կը սպասէ Յիսուսուդ դարձով.
Քանզի իմ ներկան՝ այր է մի յուսհատ,
Հայաստանիկըս վրէժն է կիսատ ...

Գրչիս աչքերից արին-արցունք է եղեռնը քսմում.
Ե՛ւ լալկան եմ ես, ե՛ւ մոնչում եմ, ե՛ւ հով, ե՛ւ ցասում.
Ե՛ւ մեղմիկ հով եմ, ե՛ւ ահեղ սասում, հայոց պատմութեամբ.
Ե՛ւ աղօթող եմ, ե՛ւ թէ անաստուած, ե՛ւ պարզ եմ, ե՛ւ ամպ.
Խօլ մի դառնակերտ՝ ես քսաներորդ դարով եմ հաստուած,
Քանզի դարն ինքը ե՛ւ սատանայ էր. ե՛ւ մի կիսաստուած.
Իմ մարմնախրճիթն հաստուած է կառվ աստուածամարմնի.
Դառնացաւ կալըս այս դառնադարում ամենադժնի,
Ուր եօթը միլիոն եւ դեռ աւելի հայերըս կորան,
Եւ դեռ բանտում է մի մեծ Հայաստան ...
Իսկ ժողովրդին փնտռէք անբնակ անապատներում.
Մէջ Միջագետքի գանգաբուրդերում,
Կիրճ ու ձորերի անմարդ խորքերում.
Թէ վիշտըս մղեմ մեծ Մասիսի մէջ
Մասիսն հրաբուխ կը ժայթքի անշէջ,
Եւ կը կործանէ աշխարհն այս անսուգ,
Աշխարհն, որ ծով է մի մեղսամասունք,
Ուր եաթաղանուած սեւ լեզուն հանում.
Սեւ եղեռնագործ Թալեաթն այսպէս էր լալիր չարծենում.
- Ե՛ս հազարերորդ զարմըս Մահմեդի.
Հայեր ջնջելով ես հասայ ելայ գահն Արարատի.
Այդ ե՛ս եմ անսիրտ. այդ ե՛ս եմ անխիղճ. այդ ե՛ս եմ պիղծը,
Երբ կատարեցի Մահմեդի՝ դարեր ուխտըւած իղձը.
Ես կշտացուցի հայ մանկանց մտով ձկներին՝ ծովում.
Ես կշտացուցի թեւատրներին՝ երկնքի մովում.
Հայ մանկանց ուղեղ կերցըրի նրանց թխսաձագերին.
Հայ միս ու ոսկրով ես հագցըրի օձ ու վագրերին.
Քանզի նրանց էլ հայ մտով էի ես կերակրում.
Ես կշտացուցի հայ կանանց կրծքով ձագերն առիծի.
Գայլին գլավորի միս ու ոսկըրով ես կշտացուցի.

Չկայ անապատ. ուր կարիճները հայ միս չկերան,
Էլ սով չեն տեսնի վայրի վագրերը հազարաքերան ...
- Իմ ի՞նչն է անգութ, երբ անտառներում, լեռների վրայ
Ես կշտացուցի խեղճ գազաններին՝ եղեռնով հերուայ,
Երբ ագռաւները իրենց դարատը քաղցը մոռացել՝
Դիերի վրայ ձագն էր յափրացել, անգըղ էր դարձել ...
Եւ մինչեւ օրըս փարախից գայլերն էլ գառ չեն տանում,
Քանզի հայութեան միս ու ոսկրով են դեռ յագենում.
Ոչ ոք չէր խղճում գայլին, բորենուն, ձկանն, անգըղին.
Ցեղեր փրկեցի սովից՝ մահ տալով միայն հայ ցեղին.
Թող մարդիկ անմիտ նզովեն դեռ ինձ, ես չեմ մարդակեր.
Իմ կշտացուցած գայլն ու բորենին ինձ կ'օրհնեն դարեր.
Եօթն հարիւր հազար չախկալ կշտացաւ միայն Դեր-Ջօրում.
Հայոց տեղ հիմա գայլերը ծով են հայոց լեռներում.
Հայկական հարցը ջնջովեց, չքացաւ երկրի երեսից.
Մի հայ չմնաց, որ վըրաս թքէր իր անյոյս հերսից:
Ողջ արեւելքի գազաններն հայոց մսով կշտացան
Պէս-Պէս ձեւերով ցեղասպանութեան,
Եօթը միլիոնից վերջին մի երկու հայ եմ բաց թողել
Այն էլ՝ կորստեան ծովերն են փախել ...
Իսկ վերջին հային, որ Արարատի վրայ է թաղուած,
Կը հրամայեմ իր գոռից հանեն,
Մինչեւ Դեր-Ջօրի դժոխքը տանեն,
Այնտեղ ձորէ-ձոր դժոխքը տանեն,
Որ մեռեալն անգամ Մասիս չը յիշէ՝ զարթնի հրաշքից ...
- Այսպէս էր հաջում խրախճանելով Մասիսի հովտում.
Դժոխքի գայլը՝ Թալեաթը՝ ինքն էլ հայեր էր ուտում ...
Թէ ցաւըս դնեմ մեծ Մասիսի մէջ՝
Մասիսն հրաբուխ կը ժայթքի անշէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

ԴԻԻՐԱԲԵԿ ՍՐՏԻՆ

Մէ՛ք թէ միայն հըպատակն ես այս խոշոր ոյժերուն,
 Այլ եւ մընաս մինչեւ վերջ անոնց ըստրուկը պիտի,
 Մէ՛ք դուն հըպարտ ու փըքուն իշխանագուն մեծխօսիկ:

Կը սարսըռաս հովերու թւերուն մէջ՝ երբ պոռան.
 Կը լուզուի սիրտըդ իսկոյն անձրեւին հետ գիշերուան.
 Մարմինդ կ'ելլէ յանկարծ դող, գոռայ երբ մեծ փոթորիկն,

Եւ շանթն իյնայ մօտակայ, հըսկայ շէնքի մը վըրան:
 Մէ՛ք քեզ ըսաւ թէ տէրն ես Տիեզերքին այս անգութ.
 Կրնա՞ս դուն քեզ վըստահիլ դըժուար ժամուայ մ'երդիքին,

Պահել ինքզինքդ անայլայլ, սուր դանակի մը ցաւին՝
 Եւ կամ զըսպել արցունքէդ ետք հըրճուանքներդ կայտառ:
 Կրնա՞յ հոգիդ չերերալ նուրբ նուագի մը լարէն:

Դուն առարկայ մ'ես անգօր մատուրներուն աղջըկան.
 Ամէն անցորդ կը փեթթէ բացուող ծաղիկը հոգւոյդ.
 Որ հով մը չար վերջապէս պիտի ընդմիշտ չորցընէ:

Չըկարենաս երբե՛ք դուն դառնալ տէր եւ տիրակալ.
 (Մարդու չըսես, այլ պահէ դըժուար գաղտնիքը քեզի)
 — Դուն ըստրուկ ես (կը պահեն՝ մարդերը զայն միշտ գաղտնի):

ԱՆՆԸ

ANSWERED QUESTIONS

O Lord

I call on You day after day

I hear no answer.

Is it because You do not hear my plea,

Or is it because I do not hear Your answer,

Or if I hear it, I do not understand it?

I speak to You in words which I have learnt

Since I knew how to open my mouth.

But You answer in "words" which I have never heard before

And can never hope to understand.

The words I use can be counted on my finger tips,

And there is a limit beyond which words do not go,

But Your answer makes no use of words.

Since words are the only thing I recognize,

How can I ever hope to communicate with You,

Except if I speak to You with "no words" ?

What is it that attracts me to You all the time?

What is it that calls me to You all the time?

I've kept away from You for so long.

What was I trying to do?

Was I running away from You?
How could I run away from You when I knew all the time
That You had all the answers to the mystery of my existence
And the existence of this universe?
How could I run away from Your smile
When it was my heart's fondest desire
To bask in the warmth of the shadow of that smile?
If the shadow of Your smile rejuvenated me and resurrected me
What would Your smile itself do were it to shine on me?

Why then did I keep out of Your shadow?
Why did I hug the shadows of the world?
What was I seeking there? Was I seeking in this world of men for something
beyond men?
How could I ever find it
When it is only in finding You that I can find myself?

ARTHUR HAGOPIAN

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Տէր, օրէ օր Քեզ կը կանչեմ,
Բայց Քեզմէ ո՛չ մէկ պատասխան.
Դու՞ն արդեօք իմ աղաչանքիս
Ականջ չես տար ու չես լռեր,
Թէ ես է որ պատասխանիդ
Ականջ չեմ տար ու չեմ լսեր.
Թէ իսկ եթէ ես կը լռեմ,
Արդեօ՞ք գայն ես չեմ ըմբռներ:

Քեզ հետ իմ խօսքս ունի բառեր
Որոնք սորված եմ մանկութեանս
Տարիներէն, երբ բարբառիլ
Եմ ըսկըսեր: Բայց դուն երբոր
Պատասխանես, կը գործածես
Բառեր որոնք երբեք լռած
Չեմ եւ կարծես, եւ ոչ երբեք
Յոյս ունենամ պիտի գանոնք
Ըմբռնելու: Բառերուն թիւն
Իմ գործածած կրնամ համրել
Մատենքուն ծայրն իմ ձեռքերուն,
Ու սահման կայ՝ ուրկէ անդին
Բառերը չեն կրնար անցնիլ:
Պատասխանիդ մէջ սակայն Դուն
Բառեր չէ որ կը գործածես:
Չէ՞ որ սորված բառե՛րս միայն՝
Ընդհուպ կարող եմ նանաչել.

Ինչպէ՞ս կրնամ յուսալ, ով Տէր,
Հաղորդելի երբեք Քեզ հետ,
Բացի եթէ ես ալ սորվիմ
Քեզ հետ խօսիլ “առանց բառի”:

Ի՞նչն է այնքան հըրապուրիչ
 Որ դեպի Քեզ գիս կը քաշէ:
 Ի՞նչն ճայն է այս որ անդադրում
 Միշտ դեպի Քեզ գիս կը կանչէ:
 Այնքան ատեն է որ Քեզմէ
 Հեռու մընալ, Քեզ անտեսել
 Որոշեցի: Ինչու՞ համար:
 Ի՞նչ կ'ուզէի ես որոնել:
 Փախչի՞ր միայն Քեզմէ հեռու:

Ինչպէ՞ս փախչիլ, երբ գիտէի,
 Լաւ գիտէի, որ միայն Դո՛ւն
 Պատասխաններն ունիս ամէն
 Խորհուրդներուն, գաղտնիքներուն
 Իմ գոյութեան, իմ էութեան,
 Եւ այս ամբողջ տիեզերքին:

Ինչպէ՞ս փախչիլ Քու ժրպիտէն,
 Երբ իմ սրտին խորագոյն սէրն
 Ու փափաքն էր այդ ժրպիտին
 Շուփին ներքեւ քու ջերմութեանդ
 Վայելին մէջ պասուքն առնել
 Ու միշտ ջեռնուլ: Երբ գիտէի
 Թէ ժրպիտիդ շուքը միայն
 Կրնայ այսպէս ոգեւորել
 Եւ յարուցեալ կեանք մը իմ մէջ
 Վերակերտել, ժրպիտդ ինքնի՛ն
 Եթէ շողար հոգւոյս վերեւ,
 Ի՞նչ հըրաշքներ պիտի գործէր:

կրնայ այսպես ոգևորել
և յարուցեալ կեանք մը իմ մէջ
վերակերտել, ժըպիտդ ինքնի՛ն
երբ շողար հոգւոյս վերեւ,
Ի՛նչ հըրաշքներ պիտի գործէր:

Ուրեմն ինչու՞ քու շուքէդ իսկ
կը խուսափիմ: Ինչու՞ այդպէս
Ուժգին զըրկած եմ աշխարհի
Շուքը ունայն: Ի՞նչ՝ այնտեղ ես
Կ'որոնէի: Այս աշխարհի
Մարդոց մէջ ես մարդն անդրանցնող
Բա՞ն մը արդեօք իրաւ գտնել
կը յուսայի:

Ի՞նչպէս, ինչպէ՛ս կրնայի ես
Իմ որոնածըս հոն գտնել
Երբ Քե՛զ միայն եքէ գտնեմ,
Ինքզինքնս նաեւ գտած կ'ըլլամ:

ԱՐԹԻԻՐ ՅԱԿՈԲԵԱՆ

Քրգմն. Շէն-ՄԱՀ

ԳՐԱԿԱՆ

ԵՐԳԻԾԱԿԱՆԸ ԵՒ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ
«ԸՆԿԵՐ ՓԱՆՋՈՒՆՈՒ» ՎԼԵՊՈՒՄ

Զախողուել է դրամ հաւաքելու նախաձեռնութիւնը. եկել է մի պահ, երբ Փանջունուն չեն կարող օգնել ո՛չ «գիտակից շարքերը», ո՛չ էլ բողոքներն ու թուրքերը, որոնց նա համարում էր յեղափոխութեան «բնական նեցուկներ»։ Բայց վասպուրականում Փանջունին ստացել էր յեղափոխական գործունէութեան աւելի լայն ասպարէզ. հասարակութեան թափփուկներ այստեղ էլ կային, կային եւ մանկապարտէզի սաներ ու դպրոցականներ, որոնք Փանջունու եւ Սարսափունու դասախօսութիւնների պահին զբաղուած էին ձնագնդի խաղալով։ Զաւեշտական ու միեւնոյն ժամանակ ողբերգական է այն, որ Փանջունին հենց սրանց անուանում է վասպուրականի հայութիւն. («վասպուրականի հայութիւնը, այսինքն մեր շարքերուն մէջ գտնուող տղերքը, որոնք կը կազմեն գիտակից երիտասարդութիւնը», 125)։ Փանջունու խմբակից դուրս հայութիւն գոյութիւն չունի. մնացածը թշնամիներ են, որոնց դէմ պէտք է պայքարել բոլոր միջոցներով։ Հակատագրական այն պահին, երբ հայ ժողովուրդը պէտք է համախմբուէր դարաւոր թշնամու դէմ՝ ազգային անվտանգութեան եւ հայրենիքի սահմանների պաշտպանութեան համար, այդ պահին վասպուրականում իր յեղափոխական գործունէութիւնը է սկսում Փանջունին՝ իր համախոհների ու զինակիցների հետ։ Կազմակերպում է հանրաժողովներ՝ «յետամնաց խաւարամիտներին» բացատրելու իր «աշխարհայեացքները. իր ելոյթներով Փանջունին ապակողմնորոշում է ժողովրդին, նրա ուշադրութիւնը շեղում կենսական կարեւորագոյն խնդիրներից,

չլատում ու պառակտում նրա միասնութիւնը՝ մատնացոյց անելով կարծեցեալ ներքին թշնամիներ, որոնց դէմ պէտք է ուղղուէր յեղափոխական շարժումը։ Իսկ այդ «թշնամիներին» փանջունիական թուարկումից պարզորոշ երեւում է, որ բացի իրենից եւ իր կուսակիցներից մնացած հայ ժողովուրդը ինքն իր թշնամին է որ կայ։ Ուրեմն հենց նրա դէմ էլ պէտք է մղել յեղափոխական անողոք պայքար. «... ըսի թէ հիմա ա՛յ ժամանակը եկած է որ յեղափոխութիւնը իր ուժն ու զօրութիւնը դարձնէ իր ներքին թշնամիներուն դէմ, որոնք ժողովրդի արիւնը քամող, ժողովուրդն իր ոտքերուն տակ ջախջախող, ժողովուրդը իբրեւ ստրուկ ծառայեցնող հայ հողատէրը, հայ գործարանատէրերը, հայ կալուածատէրը, հայ վաճառականը, հայ արհեստաւորը, հայ պաշտօնեան, հայ եկեղեցականը, հայ ապականուած մտաւորականութիւնը, հայ անգիտակից ուսուցչութիւնը, հայ ստրկամիտ մասսան» (121)։ Հայ հասարակութեան ներսում այսքան «թշնամիներ» միայն Փանջունու զառանցամիտ ուղեղը կը յայտնաբերէր։

Փանջունին ուժեղ եւ յատկապէս մոլորեալներ հաւաքագրելու, դաշնակիցներ յայտնաբերելու եւ նրանց միջոցով խժոժութիւններ հրահրելու մէջ, իսկ իբրեւ խառնակիչ եւ չարագործ՝ մրցակից չունի։ Իւրաքանչիւր իրավիճակ նա գնահատում է աչառու դատաւորի սկզբունքներով ու չափանիշներով։ Եւ որպէս զի հաւատ ընծայեն իրեն, իր ելոյթները զարդարում է հեղինակաւոր անուններով, ընկերվարական ասոյթներով, նառն է բարձր գաղափարների եւ մարդկութեան իտէալների անունից։ Ուրեմն խաբուսիկ գաղափարները նոյնքան

վտանգաւոր են, որքան Փանջունին: Իսկ եթէ վտանգաւոր գաղափարական գէնքը արկածախնդիր Փանջունին է օգտագործում, հետեւանքը լինում է աղէտ ու ողբերգութիւն:

Օտեանի ստեղծագործութեան նախորդ ուսումնասիրողները, ներառեալ նաեւ Լ. Հախութեանը, «Ընկեր Փանջունի» վէպը վերլուծելիս եւ նրա գլխաւոր հերոսին բնութագրելիս խնդիրն այնպէս են ներկայացրել, թէ իբր Երուանդ Օտեանը ծաղրել է մարքսիզմը գոնեակացնողներին, այդ «ամենայադժ ուսմունքը», աղաւաղողներին եւ սոցիալիզմի գաղափարական հակառակորդներին: «Մեղաւորը ուսմունքը չէ, գաղափարները չեն, դրանց ապաշնորհ, ապիկար գործադրողները» (10), - գրում է Լ. Հախութեանը, այն էլ 1989 թ.: Իսկ Ս. Մանուկեանի եւ Ա. Մակարեանի աշխատութիւններն ընթերցողը այն տպաւորութիւնը կը ստանայ, թէ Ն. Օտեանը համոզուած մարքսիստ էր, կատարեալ ընկերվարական, հանդէս էր գալիս սոցիալիզմի գաղափարների պաշտպանութեամբ եւ դրանք միտումնաւոր աղաւաղողների ձաղկումով: Բոլոր դէպքերում այն մտայնութիւնն էր տիրապետողը, թէ մարքսիզմը, ընկերվարութիւն-սոցիալիզմը շատ գեղեցիկ ուսմունք են եւ համայն մարդկութեան առաջնորդում են դէպի «լուսաշող ապագան»: Իսկ եթէ մարդկութիւնը եւ մասնաւորապէս սոցիալիզմի ուղին բռնած ազգերը դրանցից չեն շահել, մեղաւորն այդ գաղափարների ապիկար եւ անշնորհ գործադրողներն են: Եթէ նիւթական բարիքների լիակատար առատութեան խոստումների փոխարէն, բոլոր ազգերի եւ ազգութիւնների իրաւահաւասարութեան ու ներդաշնակ զարգացման փոխարէն հենց ընկերվարական

կայսրութեան մէջ, «զարգացած», «հասուն», «մարդասիրական» յորջորջուած սոցիալիզմին յաջորդեցին կատարեալ աղատութիւնն ու ֆառսը, մարդու իրաւունքների եւ ազգերի իրաւունքների ոտնահարման, ակնառու խտրականութեան պատմառով ծաւալուեցին ազգամիջեան սուր բախումներ՝ իրար յաջորդող արիւնահեղութիւններով, եւ եթէ լաւագոյնս համարուած գաղափարները չկենսագործուեցին, դարձեալ միայն ապիկար գործադրողներն են մեղաւոր: Եւ ովքեր են նրանք. ամբողջատիրական կայսերապետութեան հիմնադիր Լենինը, որը անուղղելիօրէն խառնել է բազում ժողովուրդների նակատագրեր՝ մէկի հայրենիք-մարմինը կցելով մէկ ուրիշին եւ հաստատելով պլուրետարիատի դիկտատուրա յորջորջուած բռնատիրութիւնը, «ազգերի երջանկութեան նարտարապետ ու դարբին յորջորջուած Ստալինը, որը մարդկութեան դահիճի եւ ռերագործի անգերազանցելի օրինակ է, «ներկայ սերունդը կ'ապրի կոմունիզմի օրօք» կարգախօսի հեղինակ Խրուշչովը, լնացման տարիների տիրակալ Բրեժնեւը, թէ՞ միջինասիական «ագրեսիւ հնազանդներին» ընտրած պրեզիդենտ Գորբաչովը, որը նգնում էր խորհրդային փլուզուող կայսերապետութիւնը պահպանել հանրաժողով-ներկայացումով ու ռազմական ուժով եւ իր գործողութիւններով դառնում է ամենօրեայ ողբերգութիւնների պատճառ: ... Բայց չէ՞ որ նրանք բոլորն էլ խօսել են գեղեցիկ գաղափարների անունից, խոստացել են բարեկեցութիւն եւ երջանիկ ապագայի հեռանկար ...

Մեծ է խզումը գեղեցիկ գաղափարի եւ բուն իրականութեան միջեւ, իսկ անհող ու անհիմք գաղափարը, որքան էլ ցանկալի եւ հրապուրիչ լինի, եթէ չի թխում կեանքի տրամաբանութիւնից ու օրինաչափութիւն-ներից եւ արհեստականօրէն ու բռնութեամբ

պարտադրում է կեանքին, ոչ միայն իրագործելի չէ, այլև վերածում է իր հակադրութեանը եւ միջավայրի համար դառնում է աղետաբեր ու կործանարար: Դադափարը, ծրագիրը այն միջավայրում կարող են արմատաւորուել ու իրագործուել, ուր կան քաւարար ու նպաստաւոր պայմաններ եւ կ'իրականացնեն այն գործիչների միջոցով, ովքեր ունեն անհրաժեշտ հմտութիւններ, քաջ գիտեն կենսական երեւոյթների առնչութիւններն ու օրինաչափութիւնները:

Իսկ Փանջունին ընկերվարական իր քարոզչութիւնը ծաւալում է այնպիսի վայրերում, ուր ոչ միայն նպաստաւոր պայմաններ չկային, այլև չկային բուն իմաստով գաղափարակիցներ եւ հասարակութեան քացարակ մեծամասնութեան համար նրա քարոզները անհեթեթ էին ու անհասկանալի: Համաշխարհային պլօքստարիատի խնդիրները նա կամենում է լուծել հայկական մի գիւղում կամ քաղաքում՝ մէկ-երկու անհատների միջոցով: Երգիծանքի տարբեր միջոցների գուգորդուած գործադրմամբ ստեղծուած պատկերներում ցոլանում է «դժգատիկ ընկերվարականի» ծիծաղելի գործունէութիւնը իր ողբերգական հետեւանքներով: Ի հարկէ, վերը յիշուած իրական գործիչների համեմատութեամբ սահմանափակ են Փանջունու գործունէութեան ոլորտներն ու ծաւալները. որքան էլ հանճարամիտ՝ Օտեանը չէր կարող լիովին կռահել փանջունիութեան տարածման ծաւալներն ու սահմանները, քայքայ հենց Օտեանի հանճարը միայն կարող էր սաղմի մէջ տեսնել երեւոյթի հասարակական վտանգաւորութիւնը:

Ընկերվարութեան գաղափարներին բոլորովին անհաղորդ ծապվարցիների հետ Փանջունին խօսում է նրանց անհասկանալի լեզուով. գիւղի միակ «պրօլետարին»՝ «միանգամայն

երկաթագործ» պայտար Մկոյին նա համոզում է համընդհանուր գործադուլ անել եւ առանց պայտի թողնել Ռէս Սերգոյի էջը, գրաւոր յայտարարութեամբ միտինգի է հրաւիրում գիւղացիներին այն դէպքում, երբ նրանցից ոչ ոք, անգամ քահանայ Տէր Սահակը կարդալ չգիտէր, դեռ դպրոցի պարապմունքները չսկսուած՝ ապագայ աշակերտներին քացատրում է դասադուլի եւ ուսուցիչներին պատժելու իրաւունքները, կազմակերպում է նոր գիւղ մտած ուսուցչի «ազնիւ գաղափարական ծեծը», որն իր «անհատական պատասխանատուութեամբ» իրագործում է Խել Աւօն:

Անշուշտ, պակաս կարեւոր չէ այն խնդիրը, թէ ինչպէս էր Փանջունին այնուամենայնիւ համախոհներ ու զինակիցներ գտնում, որոնց միջոցով էլ իրագործում էր կենտրոնից ստացած հրահանգներն ու իր ծրագրերը. չէ՞ որ առանց աջակիցների նա անյաջողութեան պիտի մատնուէր թէ՛ Ծապվարում, թէ՛ Վասպուրականում, թէ՛ Երեւանում եւ այլուր: Համախոհներ ու գործակիցներ Փանջունին գտնում էր հասարակութեան անգիտակից, խելապակաս, շահամոլ ու արկածախնդիր տարրերի մէջ: Իսկ հասարակութեան առողջ մասը ջանում էր նրանից ազատուել որեւէ հնարքով կամ էլ կարեւորութիւն չէր տալիս նրա գոյութեանը. «Վեհերոտները սարսափահար մտիկ կ'ընէին իրեն, միամիտները ապշահար կը նայէին այդ անդադար խօսող մարդուն, իսկ խելացիները քիթերնուն տակ խնդալով կ'երթային իրենց գործին» (24):

Ահա ինչու Փանջունուն յենարան ու զինակից են դառնում Խել Աւօն ու Կոլոշենց Սեդոն, Կարօն ու նրա խոլ ու յամր մայրը՝ ընկերուէի Սառան, աւագակ բուրդ Հատն ու Թուրք ջարդարար Հասանը, Գիծ Մակարն ու դպրոցահասակ երեխաները, որոնցմով Փանջունին կազմում

էր «գիտակից շարքերը»:

Խել Աւոյին Փանջունին ինքն է լաւագոյնս բնութագրում. նա քաջ գիտի խելապակաս Աւոյի բնաւորութիւնը, վարքագիծն ու հակումները, նրա անմարդկային ու ստոր արարքները, գիտի ծապլվարցիների վերաբերմունքը այդ «յիմար, գող ու անբարոյ երիտասարդի» նկատմամբ, բայց յենում է նրա վրայ եւ փառաբանում նրա դատապարտելի արարքները: Փանջունու տեսականը գրեթէ միշտ նրա միջոցով է վերածում գործնականի. նա Ռէս Սերգոյի, Տէր Սահակի եւ միւսների ահ ու սարսափն է:

Ծապլվարեան իր գործունէութեան ընթացքում Փանջունին յենում է նաեւ Սմենց Վարդանի վրայ: «Հողային պրօլետարիատի միակ ներկայացուցիչ» յորջորջուած այս տկարամիտը նոյնպէս ծոյլ է, գող եւ անբարոյ. այս պատճառով է Ռէս Սերգոն նրան վռնդել: Բայց Փանջունին այս դէպքը որակում է որպէս «վաթսուն միլիոն աշխատաւորների իրաւունքի ոտնահարում «կեղտոտ պուրժուա» Ռէս Սերգոյի կողմից»: Եւ նրա դէմ էլ ուղղում է ծապլվարի «յեղափոխական շարժումը»:

Ռէս Սերգոյի դէմ Փանջունին դուրս է բերում նաեւ շահամոլ ու արկածախնդիր Կոլոշենց Սեդոյին՝ ստոյգ իմանալով վերջինիս շահախնդրական նկրտումները: Բայց քանի որ Սեդոն տուեալ պահին Փանջունու համար պէտքական անձ է եւ ծապլվարեան յեղափոխութեան «շարժիչ ուժի»՝ պայտար Մկոյի փեսան, ուրեմն հարկաւոր էր գոհացում տալ նրա ցանկութիւններին: «Ի հարկէ կռահեցի թէ Կոլոշենց Սեդո ունէր յետին մտքեր, թէ նա թաքուն հակառակորդն էր Ռէս Սերգոյի, թէ նա կ'ուզէր անոր դիրքը գրաւել գիւղին մէջ եւ թէ կը յուսար իր նպատակին հասնել դիմելով մեր աջակցութեան: Այդ մէկը ինձ ծանօթ էր, բայց եւ այնպէս չէի

կրնար մերժել իր անկեղծ զգացումները, մանաւանդ որ Սեդոյի միջոցով մեր ափի մէջ կ'առնէինք նաեւ գործաւորական դասակարգը, որ մինչեւ հիմա ցուրտ վերաբերում ունեցած է մեզի հանդէպ, քանզի Կոլոշենց Սեդո փեսան է պայտար Մկոյի»:

«Ուստի նկատի առնելով մեր գործունէութեան նկատմամբ արտայայտուած անկեղծ համակրութիւնը եւ բանուոր դասակարգի շահերը, եւ մանաւանդ կուսակցութեան շահերը, ամենաջերմ վերաբերում ունեցայ Սեդոյի հանդէպ» (94-95, ընդգծ. իմն են.՝ Ս. Մ.)- առանց թաքցնելու կամ երկմտելու կենտրոնին զեկուցում է Փանջունին: Ահա ինչպէս է Փանջունին ազնւօրէն խոստովանում իր անազնութիւնը, մի հանգամանք, որ բնորոշ է նրա էութեանն ու վարքագծին:

Ծապլվարեան նամակները բացայայտում են Փանջունու բնաւորութեան մի ուրիշ էական կողմը՝ շահամոլութիւնը. ամէն ինչի համար նա պահանջում է որոշակի վճար: Նամակների վերջին նախադասութիւնները յստակ պատկերացում են տալիս, թէ ինչ նպատակով է գործում Փանջունին ծապլվարում: Բոլոր նամակներն աւարտում են դրամ ուղարկելու խնդրանքով, սակայն, ինչպէս երեւում է, կենտրոնի համար այնքան էլ կարեւոր անձ չէ Փանջունին, այլապէս նրա աղերսագին պահանջները գոնէ մասնակի բաւարարութիւն կը ստանային: Ահա մի քանի մը Փանջունու աղերսանքներից. «Մի բիշ փող ուղարկեցէ՛ք փութով» (Գ), «Վերջին անգամ փողի մասին պահանջումն Բա մնաց անպատասխան. խնդրեմ ուշադրութիւն դարձրէ՛ք այդ մասին. դա էական հարց է ինձ համար» (Դ), «Փոսքը եկաւ, նամակներ եւ թերթեր եկան, հրահանգներ եկան, բայց փող չկայ: Խնդրեմ ուշադրութիւն դարձրէ՛ք այդ կենսական հարցի վրա»:

(Ե):

«Ափսոս այս կրիտիկական մոմենտներուն մէջ տակաւին քաւարարութիւն չը տուիք մեր փողի պահանջմունքներուն» (Ը), «Շնորհակալութիւն իմ համեստ գործունէութեան մասին ձեր շոյալած գովեստներուն համար. իցի՛ւ թէ անոնց տեղ մի բիչ փող ուղարկէիք: Բարոյական փաշալերանքը քաւարարութիւն չէ կարող տալ ֆիզիքական կարիքներու. դա մի տեքնիկական ճշմարտութիւն է» (Թ), «Ներկայ ճգնաժամանային րոպէներուն փողի պակասութիւնը կը վնասէ ամբողջ կազմակերպական գործին» (Ժ), «Մի վերջին քառ. փող ուղարկեցէք» (ԺԱ): Իսկ Ծալլվարի կործանումից յետոյ, երբ Փանջունին մեկնում է Մաշկերտ գիւղը՝ գործունէութեան նոր վայր, ԺԲ նամակի վերջում գրում է, «Փող ուղարկեցէք իմ նոր հասցէին»: Այս փաստերն այնքան խօսուին են, որ մեկնաբանելու անհրաժեշտութիւն չկայ: Սակայն որքան ճիշտ է, թէ Փանջունու կուսակցական-յեղափոխական գործունէութեան գլխաւոր նպատակներից մէկը դրամ ձեռք բերելն է, նոյնքան էլ ճիշտ է, որ Փանջունին պաշտօնամուլ է եւ ձգտում ունի իր ձեռքում կենտրոնացնելու անսահմանափակ իշխանութիւն: Այդ անապարհին նա կարգ չի առնում ոչնչի առաջ. կեղծիքը, խաբէութիւնը նոյնիսկ մեղմագոյն միջոցներ են, որոնցից առանց այլեւայլութեան օգտւում է Փանջունին եւ, որ դարձեալ բնութագրական է նրա համար, իր արկածախնդրական ձեռնարկումներին աշխատում է տալ ազգային երանգաւորում՝ խաղալով ժողովրդի հայրենասիրական ազնիւ-զգացումների հետ: Տպաւորութիւն են ստեղծում, թէ իրենց ձեռնարկումները ժողովրդի շահերի համար են, թէ իրենք պարզապէս անշահախնդիր ու անձնագոհ նուիրեալներ են. այս պատճառով էլ որոշ դէպքերում շահում են իրենց միամտօրէն հաւատացողների համակրանքն ու

աջակցութիւնը: Ի պատասխան իրման գիշերը եկեղեցում կրած անյաջողութեան, իբրեւ ժողովրդից կերած ձեռքի պատասխան՝ Գիծ Մակարի առաջարկով Փանջունին ու Սարսափունին իրենց զինուած խմբով, մարտական երգերով, օդում հրացան ու բեռով կրակելով՝ գնում են գրաւելու Բջիջ գիւղի մօտ գտնուող Սուրբ Վարդանայ վանքը: Հայ գիւղացիները կարծում են, թէ մարտական այս խումբը աւարառու քղերի կամ արիւնարբու թուրքերի դէմ կռուի է գնում: Իրենց բուն նպատակը նրանք բնականաբար պիտի թաքցնէին. «Յետոյ կ'իմանաք» - խորհրդաւորութեամբ ասում է Սարսափունին: Ժողովուրդը իր ենթադրեալ հերոսներին պատուասիրում է ոչխարներ խորովելով ու գինի հրամցնելով: Այն ինչ Փանջունին եւ Սարսափունին յարձակւում են Վարդանայ վանքի վրայ բռնութեամբ վտարում հիւանդ, խեղճուկրակ վանահօրը, զաւթում վանքի ողջ ունեցուածքը՝ անգնահատելի ձեռագրերը, թանկարժէք սափորները, պաշտամունքային բոլոր առարկաները, վանքին պատկանող անասունները, հողերը, այգիներն ու ծառերը, գիւղատնտեսական գործիքները: Փանջունու եւ Սարսափունու կարծիքով՝ Վարդան Մամիկոնեանը որեւէ կապ չունի հայ ժողովրդի հետ, ուրեմն հարկ է վերանուանել վանքը ընկերվարութեան բուրմերից մէկի՝ Կրոպօտկինի անունով: Եւ Փանջունին իրեն հռչակում է «Սուրբ Կրոպօտկինի վանքի աշխարհական վանահայր»: Սակայն դեռեւս Փանջունին չի իրականացրել գլխաւոր խնդիրը՝ չի կատարել պաշտօնաբաշխութիւնը: Այս խնդրի լուծման պահին առաւել ցայտուն է դրսեւորւում փանջունիների էութեան մի կարեւոր յատկանիշը՝ պաշտօնամոլութիւնը: Ամէն ինչ պէտք է կենտրոնացնայ իրենց ձեռքում, բոլորը պիտի իրենցից կախման մէջ լինեն, իսկ իրենք միայն պիտի կառավարեն ու

հրահանգներ տան, որովհետև այլ բանի, մանաւանդ աշխատանքի, ընդունակ չեն: Հենց այս պատճառով էլ նրանք ստեղծում են քիւրդկրատական ցանց, իշխանութեան մի համակարգ, որով կարողանան իրագործել բռնատիրութիւնը: Սակայն այս էլ նրանք պիտի ներկայացնեն իբրեւ ժողովրդանուէր գործ, իբրեւ առաքնալի անձնագոհութիւն: Պաշտօնաբաշխութեան փանջունիական եղանակը իսկապէս ծիծաղելի է. նախ՝ իր համար անհրաժեշտ պաշտօնների սահմանում, ապա՝ դրանց վերին աստիճանի ինքնատիպ բաշխում: Նպատակը շատ պարզ է. ամէն բան իրենն է, ամէն ինչ ինքն է. ուստի տնտեսական մատակարարումը, մարդկային յարաբերութիւնները պետք է ենթարկուեն արմատական փոփոխութեան եւ դրանց վրայ պէտք է սահմանուի այնպիսի հսկողութիւն, որ «ոչ իսկ մի նանն կրնայ փախչել աչքէ»: Մշակելով իշխանութեան համակարգը եւ անհրաժեշտ պաշտօնների կանոնադրութիւնը՝ Փանջունին իր տղերքին հրաւիրում է ժողովի, որտեղ էլ պաշտօնները բաշխում են ֆուէրկութեամբ: ԺԳ նամակում նա գրում է, թէ ֆուէրկութիւնը կատարուել է ճշմարիտ ժողովրդավարական սկզբունքներով, կատարեալ ազատութեամբ, առանց որեւէ հարկադրանքի եւ ճնշումի: Եւ սակայն ապշեցուցիչ են արդիւնքները, ֆուէրկութիւն, որը Փանջունու պաշտօնամոլութեան ու կեղծ ժողովրդավարութեան զօրաւոր ապացոյցն է. «Ֆուէրկութեան արդիւնքն էր դուրս եկաւ, որ ինձ կը յանձնուի Վասպուրականի հայ ժողովրդի պատասխանատու ներկայացուցչի պաշտօնը, զիս ընտրեցին նաեւ գիւղատնտես եւ Վանայ մեր ենթակոմիտի լիազօր քննիչ: Իսկ կուսակցութեան ընդհանուր ներկայացուցչի, գանձապետի եւ համարակալի պաշտօնները յանձնուեցան ընկեր Սարսափունիի: Բայց որովհետև

նա երկու օր առաջ մեկնեցաւ դէպի Պարսկաստան, ինչպէս որոշուած էր՝ այդ պաշտօններն ալ ես կը կատարեմ» (189, ընդգծ. իմն են - Ս. Մ.):

Փանջունիական յեղափոխութեան գերագոյն նպատակն այս էր՝ իր ձեռքում կենտրոնացնել ամբողջ իշխանութիւնը եւ համատեղել բոլոր պաշտօնները՝ «ինչպէս որոշուած էր»: Ո՞վ էր որոշել, կենտրոնը, թէ՞ Փանջունին ու Սարսափունին միասին՝ արդէն կարելու է: Կարելոյն այն է, որ հիմա Փանջունին լիակատար տէր ու տնօրէն է, նակատագրեր է վնոում, մի հարուածով ոչնչացնում է դարերի սրբութիւնները, ասպարէզից հեռացնում է աշխատանքի մարդկանց, յետոյ էլ՝ աշխատանքի գործիքները, անգամ պտղատու ծառերն է կտրտում եւ վաճառում իբրեւ վառելիքայտ, վաճառական անասուններն է վաճառում վաճառում ընկեր Շանթի եւ Դիժ Մակարի միջոցով: Բոլոր դժգոհութիւնների, բողոքների համար Փանջունին ունի մի պատասխան՝ վանքի Օրէնսդիր ժողովի (որի նախագահատեղեկներն էր Սարսափունը - անդամն ինքն է) «օրինաւոր որոշումը», իր իսկ կազմած «փաստացի դոկումենտները»՝ իր իսկ կողմից հաստատուած, իրեղէնների մանրամասն ցուցակները եւ դրանք «խիստ կոնկրետով» վաճառելու թղթերը, որոնք նա ուղարկել էր համապատասխան արխիւներին: Վաճառքից գոյացած գումարը Փանջունին գործածում է «իր նպատակին»: Ի հարկէ, նաեւ որոշ մասնահանում է կատարում «կուլտուրական գործի ածանգիւ տնտրակների հրատարակման, ընթերցարան-թէյարան հիմնելու, պրոփակամտի եւ հրապարակախօսական ակումբներու հիմնադրման համար»: Մնացած ամբողջ գումարի լիակատար տնօրինողը Փանջունին ինքն է, եւ դրան էլ ճգնում է օրինականութեան տեսք տալ. «Զմոռնամ ասելու որ այդ վաճառումներէն

մենք օգտուեցանք միմիայն օրինաւորութեան սահմանի մէջ, վեր առնելով գոյացած գումարէն ինչ որ անհրաժեշտ-հարկաւոր էր իմ ընկերներու օրըստօրեական պէտքերուն եւ մի պահեստի ֆոնտ անակնկալ ստիպումներու համար. մնացած գումարը կը գործածուի իր նպատակին» (198, ընդգծ. իմն են - Ս.Մ.):

Ահա Փանջունու «յեղափոխական գործունէութեան», «յանուն ժողովրդի» Սուրբ Վարդանայ վանքը գրաւելու ողորդական հետեւանքը: Վանքի հարուստ տնտեսութիւնից նա ստեղծում է միայն արխիւային փաստաթղթեր, եկեղեցական գարդարուն զգեստների, աղօթամատեանների, քանկարժէք ձեռագրերի, վարագոյրների, խոփ ու արօրի, աշխատող մշակների փոխարէն հաստատում «գինուորական կարգապահութիւն եւ ամենախիստ կոնտրոլ, վարչական, մատակարարական գործադիր մարմիններ, իշխանութեան եւ աշխատութեան բաժանում ու անպայման հսկողութիւն»: Փանջունին իրաւունք ունէր պարծենալու. վանքապատկան իրերի՝ «այսպիսի կոնտրոլային խիստ դրութեամբ» վաճառք եւ դրամի այդպիսի լիարժէք իւրացում մինչ այդ չէր կատարուել: «Քանդումի հեշտանքը» Փանջունու բուն նպատակն էր՝ ուր էլ նա մեկնէր գործելու, ամէնուր յաջողութեամբ կարողանում է «միմիայն քանդել»՝ վերաշինութեան տաժանքը թողնելով յաջորդ սերունդներին:

Որքան էլ ընկերվարական կարգախօսներով նամարտակող, համաշխարհային վիթխարի խնդիրներ լուծելու մարմաջով տարուած, ազգութեան փոխարէն միայն հակամարտ դասակարգեր եւ յեղափոխական տակնուվրայութիւն նախադր՝ Փանջունին որքան ընդհանրական՝ նոյնքան էլ հայկական երեւոյթ էր: Ճիշտ է, որ նա նոյնանում է գրեթէ ուրիշ ազգերի փանջունիների հետ, բայց նա

նաեւ հայ ժողովրդի զաւակ է, նրա մի մասնիկը, գործում է հայ միջավայրում եւ անբաժան է հայութեան նակատագրից: Թէեւ միշտ նա նառախօսում է աշխարհի միլիոնաւոր պրօլետարների անունից, բայց կեանքի փաստերը, դէպքերն ու իրադարձութիւնները հարկադրում են, որ նա ընդունի որոշ իրողութիւններ, նախաձի իր հայ լինելը: Բայց Օտեանի հերոսն այդ էլ է անում փանջունիւարի՝ ընդունելով յեղափոխական հայի կեցուածք եւ յայտնագործելով «ուլքա ապակեդրոնացումի» տեսութիւնը եւ ըստ պարագաների ընդունելով կամ մերժելով այն: Վէպի երրորդ՝ «Ընկ. Փանջունին տարագրութեան մէջ» մասում Օտեանը հրաժարուել է նամականու ձեւից եւ գտել իր հերոսին հայոց մեծի եղեռնի համապատկերում ներկայացնելու նպատակայարմար ձեւ: Եթէ ծալվարեան ու վասպուրականեան նամակներում, «Իմ աշխարհայեացքները» դասախօսութիւնների շարքում Փանջունին ինք է ներկայանում ընթերցողին իր գործողութիւններով ու դատողութիւններով (քացառութեամբ «կենսագրական նօթեր ընկեր Փանջունիէն» հատուածի), ապա երրորդ մասում հեղինակն ինքն է ներկայացնում իր հերոսին եւ դէպքերը պատմում կամ առաջին դէմքով, կամ հերոսի հետ ունեցած երկխօսութիւնների միջոցով: Երկու դէպքում էլ Օտեանը կարողացել է ապահովել խօսքի արտակարգ բնականութիւն, որը գեղարուեստականութեան բարձր չափանիշ է: Այս մասում էլ կիրառուած են երգիծանքի ամենատարբեր միջոցներ ու հնարաններ: Գրեթէ միշտ Օտեանը գտել է հերոսի էութիւնը բնորոշող այնպիսի արտայայտամիջոցներ, որոնք իւրաքանչիւր դէպքում ամենայարմարն են ու անփոխարինելի: Բայց կար եւ ամենաբարդ խնդիրը, որը նոյնպէս յաջող լուծում է ստացել: Ողբերգական իրադարձութիւններ,

հայերի զանգուածային տեղահանութիւն, ջարդ, ահաբեկում, եւ այս համապատկերում՝ ընկեր Փանջունին: Որքան էլ Փանջունին իրեն դուրս դնէր հայութիւնից, միեւնոյն է, նա չպիտի կարողանար խուսափել նրան հասած ֆակտագրական հարուածներից: Ահա ինչու Օտեանն իր հերոսին ընդգրկում է ապրիլի 24ի ահաբեկումների մէջ, նրան ներկայացնում պարզապէս հրաշքով ջարդից ազատուած մէկը, որը իր՝ հեղինակի հետ միասին կրել էր ահաբեկումների տառապանքները, իսկամ էր ընդունել՝ մկրտութեամբ շաւի արար, եւ ֆաշիստ թարսուս, Օսմանիէ, Համա, Տէր Զօր, Հալէպ եւ էլ Բուսերա ֆանապարհի դժուարութիւնները:

Բնական մի հարց կարող է ծագել. այս դէպքում, երբ Օտեանը վաւերագրի նշտութեամբ պատկերել է հայոց սարսափելի ողբերգութիւնը, թուրք մարդակերների անորակելի ոնիրը եւ հայ մարդկանց անլուր տառապանքները, ինչպէ՞ս է համատեղել երգիծական ու ողբերգականը: Պատասխան՝ անշուշտ, նախատեսել էր Օտեանը:

Փանջունին ստոյգ մահից խուսափելու լաւագոյն եղանակն է գտնում՝ դառնալով «ուլթրա ապակեդրոնացումի մարդը»: Նա այլեւս ո՛չ կուսակցութիւն է ֆանաչում, ո՛չ ծրագիր, ո՛չ դաշնակ է, ո՛չ հնչակ, ո՛չ էլ ռամկավար. այժմ նա միայն մի՛ կուսակցութիւն է ընդունում՝ ի՛ր կուսակցութիւնը, որի միակ անդամն ինքն է: Այդ կուսակցութիւնն ստեղծել է ուլթրա ապակեդրոնացումի վրայ, որը դաւանողը կա՛մ Փանջունին պիտի լինէր, կա՛մ նրա նամակը:

Ինչպէ՞ս է Փանջունին արդարացնում անձնավերականգն այս եղանակը եւ իր կաշին փրկելու այս ձեւը ինչով է հիմնաւորում. «... ես հիմա, ահաբեկ տառապանքներուն միջոցին սա համոզումին եկայ, թէ ամէն հայ անհատ, ինքն իր մէջ,

ամբողջութիւն մըն է եւ կը ներկայացնէ ամբողջ հայութիւնը: Մենք պէտք է մեր ջանքերը կեդրոնացնենք ինքզինքնիս փրկելու, առանց մտածելու կամ աշխատելու ուրիշի մասին: Ահա ինչ է ուլթրա ապակեդրոնացումը:

- Մենք աւոր պարզապէս եսասիրութիւն կամ էգոիզմ կ'ըսենք, դիտել տուի:

- Զէ, գոչեց ընկեր Փանջունի, - էգոիզմ կ'ըլլայ այն ատեն, երբ իրրեւ մարդ մեր անձը ջանամք փրկել, բայց երբ իրրեւ հայ ջանամք փրկել, այն ատեն կը լինի հայրենասիրական գործ, յեղափոխական ակտ» (210-211):

Այսպէս է մտածում Փանջունին թարսուսի վրանների տակ, երբ նեղ եւ անյոյս վիճակի մէջ էր եւ «գործունէութեան դաշտ չկար»: Բայց մի փոքր ապահովութիւն, եւ Փանջունին մոռանում է «ուլթրա ապակեդրոնացումը», վերստանում իր նախկին պայքարող, ըմբոստ, ոչ մի բանի հետ չհաշտուող ու բոլորին յանցաւոր դուրս բերող բնաւորութիւնը: Թարսուս ֆաղաֆում բարեբախտաբար հայեր կային, որոնք չէին տուժել եղեռնից եւ հնարաւորին. չափով օգնում էին աղետեալ գաղթականներին: Փանջունին պայքար է սկսում հենց նրանց դէմ, նրանցից դրամ պահանջում իրրեւ «փրկագին»: Ծրագրում է մի խումբ ընկերների հետ գաղտնի լաստանաւ պատրաստել ու փախչել Կիպրոս, բայց բոլոր ընկերներն էլ իր խմորից էին. իւրաքանչիւրը իրեն վստահուածը յափշտակելով փախչում է՝ Փանջունուն ձգելով մենակ ու կողոպտուած: Հալէպի հայկական եկեղեցում հաւաքուած թշուառ, երիթացած տարագիրներին, որոնք «մարդկային կմախքներու երեւոյթը ունէին», Փանջունին կոչ էր անում պայքարել անբերեւոյթ վատերի դէմ, ուժ ցոյց տալ նրանց:

Մինչդեռ այդ խեղճուկրակ գաղթականները ոչ ուժ ունեին, ոչ ուտելու հաց, ոչ ֆայլերու կարողութիւն: Իսկ որոտաձայն Փանջունին շարունակում էր իր ֆարոգը պրօլետարիատի իրաւունքների և յաւիտեանական հացի մասին. «Դուք պէտք է աշխատե՛ք ոչ թէ ձեր այսօրուայ հացը ապահովելու, այլ մինչեւ մահ անօթի չմնալու համար. «գհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»ը մուրացկանի վարդապետութիւն է, կղերականութեան դժոխային դաւն է պրօլետարիատի դէմ սարքուած, «գհաց մեր կը պահանջենք մինչեւ մեր մահը, անկէ վերջն ալ մեր զաւակներուն համար: Ահա նոր հայր մերը, պրօլետարիատի իսկական հայր մերը» (225):

Ինչպէս նկատում ենք, ափսոսալայրում էլ Փանջունին չի փոխել իր բնաւորութիւնը, եղեռնի սարսափները որեւէ չափով չեն ազդել իր վրայ: Յեղափոխական մարմաջը նրան հանգիստ չի թողնում, իսկ ինքն էլ հանգիստ չի թողնում ողորմելի, ֆիզիկապէս ջարդուած, քարոյապէս ընկճուած, «գերեզմանէն փախած» գաղթականներին: Պայքար է ֆարոգում, բայց ո՞ւմ դէմ, ինչի՞ համար, ո՞վ է պայքարողը, – այս հարցերը բնաւ չեն մտաւորում նրան: Հին օրերի ոգեւորութեամբ նա դարձեալ դիմում է ֆրդերին ու եգիդիներին՝ իբրեւ «յեղափոխութեան նեցուկների»: Փորձում է իրագործել ցնորական ծրագրեր, որոնք բնականաբար չեն յաջողում: Բայց այնուամենայնիւ ինչ–որ կենտրոնի, ինչ–որ մարդկանց ձեռնտու է Փանջունին, նրան ֆինանսաւորում են որոշ ծառայութիւնների

համար, և ինքը արդէն գոհ է իր վիճակից: Հալէպում Փանջունին գտնում է յեղափոխականի «իտեալական քարճրութեան» վրայ: Այստեղ նա վերսկսել էր պրոքազանդի գործը, կատարում էր զանազան մութ յանձնարարութիւններ: Այլեւս նա անձին վտանգ չէր սպառնում, բայց շատ էր զգուշանում ոստիկանական հետապնդումներից և ֆարոգը կիսատ թողնելով թափնում էր՝ հենց երեւում էին ոստիկանները: Հալէպը մի ուրիշ առաւելութիւն էլ ունէր. այնտեղ «պափլավան», անուշեղէնները և կերակուրները «սփանչելի կը պատրաստէին». դրանցից Փանջունին ամէն անգամ ոգեւորուած ուտում էր մի ֆանի պնակ:

Աւելի ֆան ութ տասնամեակ է անցել «Ընկեր Փանջունի» վէպի ստեղծումից: Դա փչ ժամանակ չէ որեւէ ստեղծագործութեան դատաստան կտրելու համար: Օտեանի գործերից էլ մի որոշ ֆանակութիւն չի դիմացել ժամանակի խստագոյն քննութեանը, սակայն ուրիշ է «Ընկեր Փանջունու» պարագան: Օտեանական հանճարի այս խտացուած արտայայտութիւնը ոչ միայն կորուստներ չի ունեցել, այլև այսօր էլ հնչում է թարմ ու արդիական՝ պահպանելով իր գեղարուեստական արժէքն ու ներգործող ուժը: Փանջունիներ եղել են, կան ու կը լինեն, և փանջունիութիւնը լինելու է մարդկութեանը սպառնացող առաւել վտանգաւոր չարիքներից մէկը: Եւ Օտեանի վէպի արդիականութիւնն ու անհրաժեշտութիւնը միշտ կը զգացուի օդի ու ջրի պէս:

(Վերջ)

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԳՐԱԽՍԱԿԱՆ

ՄԵՐ ԲԱԽՏԻ ՓՇՈՏ ՇՈՒՇԱՆՆԵՐ

Նահապետ Մելիքեանի վերջին տարիների յօդուածներն ու ակնարկները, որ 1988-92 թուականների ընթացքում պարբերաբար լոյս են տեսել «Նոր Կեանք» շաբաթաթերթում, մէկ գրքի մէջ ամփոփելու անհրաժեշտութիւն են ունեցեր: Եւ հեղինակը այսօր ընթերցողին ներկայանում է մի ամփոփ գրքով, մի շարք կարեւոր լրացումներով ու վաւերական լուսանկարներով, նորանկախ Հանրապետութեան առաջին ֆայլերի հրամանագրերով ու հաստատումներով, միջազգային ասպարէզ մտնելու վաւերագրով:

Լրագրողներ կան, որ գիտակ պատմաբանի աշխարհմրոնումով ու ազգային շահերի ստոյգ խորագգացումներով են ներկայանում ժամանակակից ընթերցողին: Եւ նրանց խորհրդածութիւններն ու հաստատումները պատմական նշանակութիւն ունեն: Նահապետ Մելիքեանն այդ հայրենասէր լրագրողներից է, որի խօսքն ու խորհուրդը ընթերցողի բանակներ են շարժում, արթնացնում են իւրաքանչիւր հայի խիղճը, նաեւ օտարի թմրած խիղճը՝ նշմարտութեան որոնման ճանապարհին:

Ճշմարտութեան ու արդարութեան աննիւջ խօսքն է հնչում «Կարմիր շուշաններ ազատութեան ճանապարհին» գրքի ամէն մի էջում, ամէն մի տողում: Ճշմարտութիւնն այն է, որ դարեր ի վեր անկախութիւնն ու ազատութիւնը կորցրած, օտարների կողմից բռնադատուած, մարդկային պատմութեան մէջ անմախքընթաց եղեռնի ու նախնիների ննթարկուած առաջին ֆրիստոնեայ ժողովուրդներից մէկը, որ այդ դաժան ու փստմնելի պայմաններում էլ ֆայլել է մարդկային քաղաքակրթութեան աւանգարդում, - այսօր հնարաւորութիւն է ստացել կրկին տիրանալու իր վսեմ երազին՝ անկախ պետականութեան: Սակայն

այս անգամ էլ փուշ ու տատակի, ֆարի ու կարկառի միջով է անցնում հայ ժողովուրդը՝ բոքիկ, արիւնոտ ոտքերով, արիւնած սրտով: Գրողը հրմուսմէի ճիշեր չի արձակում անկախութեան ու ազատութեան գործընթացին հետեւելիս ու արձանագրելիս: Նրա արիւնած սրտի միջով է անցնում այդ երեւ-չորս տարիների ուղին, եւ մեր Նոագոյնը նրա ազնիւ սրտի արիւնով է ներկում նաեւ: Ինքը հեռուում, Լոս Անջելըսում ապրում ու տապակում է Փետրուարեան օրերի շիկացումներով, Սումգայիթեան բիրտ ու դաժան եղեռնագործութիւնների անլուր ցաւերով, Բաֆուի ու Գանձայի անօրինութիւններով, միով բանիւ՝ հայ լրագրողը որ ժողովրդի հետ է՝ ցրտին ու տափին, սովին ու մահուան պատարագներուն:

Նահապետը անխռով քաղաքագէտի պէս չի շարահիւսում դէպքերն ու իրադարձութիւնները: Նրա հոգում խռով կայ, յոյսի ու երազի օջախներ են բոցկլտում, նա ասում է, գրում պահանջում, դատապարտում, դատափետում, առաջարկում, կոչ ու ահազանգ տալիս, մարտահրաւէր նետում ողջ Սփիւռքին, նրա բոլոր խաւերին, յարանուանութիւններին ու միաւորումներին, նաեւ աշխարհին, մեծերին ու փոքրերին: Ակտիվ լրագրութիւն է Նահապետինը, անհանգիստ, զգաստ, լուրջ ու հպարտ, ազգային ինքնագիտակցութեան վսեմութեամբ ու ազնւութեամբ. «Հայրենիքը մեզի կը սպասէ այսօր: Դարաբաղի նոր շուշանները մեզի կը նային այսօր: Սեւ ծուխը տակաւ կը քարձրանայ Դարաբաղի սարալանջերէն:

Տեսնող կա՞յ»: (էջ 24):

Քաղաքական եւ հայրենասիրական զգաստ ու նշմարտաբեր ալիք կայ Նահապետ Մելիքեանի գրքում, եւ այդ նուիրական

ալիքը ծփում է էջ առ էջ, համակամ ընթերցողին, աշխարհի բոլոր ծագերում ապրող հայերի սիրտն ու հոգին ռադիո-ալիքներով կապում Հայաստանին ու Ղարաբաղին, բոլորին տարբեր ձևերով ու միջոցներով ձգտում է կապել այն մեծ գործերին ու արարումներին, որ տեղի են ունենում հայրենի բորբոքում հողատա-րածքներում: Ճշմարիտ է գրողի հաստատումը. «Արդարեւ՝ այն օրէն, երբ մենք չկարողացանք դիւանագիտութեամբ, քաղաքականօրէն ամրապնդել Արցախի ինքնավարութիւնը եւ կորսնցուցինք բոլոր պատեհ առիթները, Ատրայէջանը կրցաւ լաւագոյնս օգտագործել իր ձեռքի խաղաքարները ... (էջ 183):

Այսօր էլ է նոյնը՝ քաղաքական առումով: Ղարաբաղեան բանակի արձանագրած նուաճումները օդից կախուած են մնում: Ո՞վ է լսում, ե՞րբ է տեղ հասել գրողի, մտաւորականի խօսքը, առաջարկը ... «որ մէկ ձայնով, մէկ բռունցքով թակէ դռները Ուաշինկթընի եւ ՄԱԿ-ի ... (էջ 185): Դեռ աշխարհն այն անարդար մտքին է, թէ Ղարաբաղ-Արցախի տեղաբնակ հայը մի էթնիկ փոքրամասնութիւն է այդ իրաւ սարքովի Ադրբեյջանում: Եւ չի լուծում Ղարաբաղի քաղաքական կարգավիճակը: Եւ այս անարդարութեան պատճառով է, որ չի դադարում դաժան պատերազմը: Ցաւօք, ելքը անյայտ է եւ ահալի ...

Նահապետ Մելիքեանի «Կարմիր Շուշաններ ...» ազնուագոյն գիրքը, նրա յօդուածները, իրենց առաքելութիւնը կատարել են ժամանակին եւ շարունակում են դրական դեր խաղալ հայ ժողովրդի անկախութեան ճանապարհին: Սփիւռքը շատ հարցերում համախումբ եղաւ, թիկունք կանգնեց Հայրենիքին: Նահապետ Մելիքեանի նման շատ ու շատ հայրենասէր մտաւորականներ, միութիւններ ու կազմակերպութիւններ հզօր թափ հաղորդեցին «Մէկ Ազգ, Մէկ Հայրենիք» ազնիւ կարգախօսին: Անհատը մեծ ուժ է,

անհատներից են կազմուած միութիւններն ու ազգերը: Նրանց ոգին է առաջնորդում զանգուածներին:

«Կարմիր Շուշաններ Ազատութեան Ճանապարհին» յօդուածների ժողովածուն վերջերս Սփիւռքում լոյս տեսած կարեւոր եւ անհրաժեշտ գրքերից է: Նրա բոլոր էջերում անսակարկ է հայրենասիրութիւնը: Նահապետ Մելիքեանը գրում է ոչ միայն փաստերի տրամաբանական կոտ համակցումներով, այլեւ վսեմ պաթոսով, կրքով, պարզ ու յստակ ոճով: Նա գրուցում է ընթերցողի հետ, յորդորում է ընթերցողին, սովորեցնում է ճիշդ ու անվարան վերաբերուել ազգային համընդհանուր շահերին անկախութեան իրօք բարդ ու խնկուած գործընթացին:

Ողջունելի են նման գրքերը:

Գրքում շատ են իլուստրացիաները, ժամանակն արտացոլող լուսանկարները, որոնք մի քիչ խանգարում են յօդուածների էութեան ըմբռնումը: Բայց նայած ընթերցողի: Զե՞ որ գիրքը հազարների համար է:

Սոյն գրքի անառակելի առաւելութիւններից է անգլերէն բաժինը: Լաւ չէ, երբ մենք ասում՝ մենք լսում ենք: Շատ կարեւոր է, որ մեր ցաւն ու պահանջը հասնի աշխարհին, ուրիշներին, աշխարհի բախտը տնօրինողներին: Անգլերէն ու ֆրանսերէն առանձին էլ պիտի լոյս տեսնեն նման գրքերը:

Նահապետ Մելիքեանը ճիշդ է կողմնորոշում նաեւ մի շարք քաղաքական իրադրութիւններում: Դա գալիս է գրողի անկեղծութիւնից, անանձնական, համահայկական շահերի ըմբռնումներից: Սա կարեւոր, մտաւորականի համար անհրաժեշտ պայման է ընթերցողին ճիշդ կողմնորոշելու, գրաւոր խօսքին հաւատ ընծայելու համար:

Եւ այդ հաւատի խարոյկը անշեշտ է հրապարակագիր Նահապետ Մելիքեանի սրտում եւ իր լաւ գրքի տաք-տաք էջերում:

ԳԷՈՐԳ ԲՐԻՍՏԻՆԵԱՆ

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ԿՐԾՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայոց Սրբոց Յակոբեանց դարաւոր վանքը կը գտնուի Սիոն լեռան բարձունքին, Դաւթի բերդին ի վեր նանապարհին ուղղութեամբ: Քրիստոնէութեան առաջին դարուն երբ սրբավայրերը պաշտօնական նանաչում ստացան վաւերական դարձաւ այն իրողութիւնը, ըստ որում, առաջին եպիսկոպոսական Աթոռը, հիմնուած «Տեառնեղբայր կոչեցեալ» Յակոբոս առաքեալի անունով, սեպհականութիւնն է հայոց: Առաջին եպիսկոպոսական Աթոռը կը գտնուի Ս. Յակոբայ Մայր Տաճարին աջակողմեան դասին մէջ: Հոս է թաղուած նաեւ քրիստոնէական հաւատքին առաջին նահատակ առաքեալին՝ Յակոբոս Զեքեթիայի գլուխը, որ եղբայրն էր Յովհաննէս Աւետարանչին, ծանօթ Գլխադիր անունով: Այս առաքեալին ահիւնները կը գտնուին Մայր Եկեղեցւոյ Մեծ Ատեանին աջ կողմը, սատափէ թանկագին քարերով զարդարուած փոքրիկ խորանին յատակին:

Հայերը՝ յունաց եւ լատինաց հետ, հաւասար իրաւատէրն են Սուրբ Տեղեաց: Ս. Յարութեան եւ Ս. Մննդեան տաճարները երեք ազգութիւններու կը պատկանին: Ս. Աստուածածին Եկեղեցին՝ Գեթսեմանիի պարտէզին մէջ, իրաւատեւեան տակն է Հայոց եւ Յունաց միայն: Վանքին մէջ կը գտնուի հին արժէքաւոր ձեռագիրներու գանձարանը՝ Ս. Թորոս Եկեղեցին: Թանկագին իրեր, սկիհներ, խաչեր, շուրջառներ, եպիսկոպոսական ասանք, թագեր, գաւազաններ, եւայլն, հսկողութեան տակն են Լուսարարապետին եւ Գանձատան Յանձնախումբի երեք անդամներուն: Գանձատան դուռը, Մայր Տաճարին մէջ,

կը բացուի այս չորս տարբեր բանալիներու միացումով:

Հայոց Վանքը մշակութային կեդրոնն է նաեւ Հայ Երուսաղէմին: Կիւլպէնկեան Մատենադարանը, վանքի տպարանը, ժառանգաւորացը իր բարձրագոյն ընծայարանով, եւ Թարգմանչաց երկսեռ երկրորդական վարժարանը: Կարելի չէ անտեսել Պատրիարքարանի շէնքը իր շքեղ դահլիճով, պատերը զարդարուած արժէքաւոր նկարներով, ուր կ'ապրի հայոց Պատրիարքը:

Տօնակատարութիւններ.՝ Ս. Յակոբի տօնակատարութիւնները ըստ եկեղեցական օրացոյցի կը կատարուին հին տոմարով. 13 օրերու տարբերութիւն մը կայ Պաղեստինի եւ անկէ դուրս հայ եկեղեցիներու տօներուն միջեւ: Երուսաղէմի Նոր Տարին կը տօնուի Յունուարի 14ի օրը, որ Հին Տոմարով Յունուարի մէկն է: Օրացոյցին մէջ կը գտնէք հետեւեալ տաճանշանները. ձախ սիւնակին վերեւը՝ Հ տառը (Հին), եւ աջ սիւնակին՝ Ն տառը (Նոր):

Հայաստանեայց Եկեղեցւոյ ընդհանուր արարողութիւններու շարքին չկայ աւելի տպաւորիչ, հոգեզմայլ եւ պաշտամունքով հարուստ հանդիսութիւն՝ քան Սրբոց Յակոբեանց վանքին տօնակատարութիւնները: Կարգուկանոնը, սրբազան աւանդութիւններով նոյնբազմոգոյութիւնները եւ հանդիսութիւնները պահպանուած են միայն Երուսաղէմի վանքին մէջ: Ուրիշ ո՛չ մէկ վայր, Ս. Էջմիածնէն մինչեւ

կիրիկեան Աթոռը, Պոլսէն մինչեւ Վենետիկ, Վիեննա կամ Զմմառ գտնուող վանքերուն տօնակատարութիւնները չեն համեմատուիր Երուսաղէմի հայոց վանքին հետ: Ժամերգութեան երգերը, շարականները իրենց ճոխ արտայայտութիւնը գտած կը հնչեն միայն Ս. Յակոբի կամարներուն տակ դարերու խորքէն հասած երգարուեստով եւ հանդիսութիւններով: Մեր ժամագրքի, տաղարանի, շարականցի լրիւ կարգը կ'իրագործուի միայն Երուսաղէմի մէջ: Ցաւալի է որ հիմա ընդհանրապէս Երուսաղէմէն դուրս մեր բոլոր եկեղեցիներուն մէջ տօնակատարութիւնները լրիւ չափով չեն կատարուիր: Այդ արդէն հնարաւոր ալ չէ աշխարհով մէկ ցրուած հայութեան համար: Երուսաղէմի մէջ օրացոյցով նշուած բոլոր տօները կը կատարուին ամբողջութեամբ եւ քացառիկ փայլով:

Նախ քան եկեղեցի մտնելը պիտի ուզէի ձեզ տանիլ դուրսը՝ վանքին քակը: Առաւօտեան մթնշաղին, տակաւին լոյսը չբացուած, կը հնչէր հայ Երուսաղէմի «Զարթուցիչին», Խորէնին ձայնը: Զեռփին՝ մեծ գլխով ցուպ մը, իր երգով կը հրաւիրէր միաբանները եւ ժողովուրդը եկեղեցի: Կարճահասակ խած աչքերով, տոկուն կազմով, չյոգնող քայլերով մարդն էր ան: Համեստ պաշտօն մը ունէր. տկար եւ հիւանդ միաբաններուն ճաշը կը մատակարարէր: Տարագրութենէն յետոյ Զէյթունէն Երուսաղէմ քնակութիւն հաստատած, ընտանիք կազմած եւ վանքի ծառայութեան համար նուիրեալ մը: Անոնք որոնք տօնական օրերուն Երուսաղէմ եղած են, չեն կրնար մոռնալ Խորէնին ձեռքի ցուպին զարկերը մեծ բակի սալաշատակին եւ վանքի քնակեւի տուններու լուսամտներուն տակ, արթնցնելու համար միաբանները եւ ժողովուրդը: Իւրաքանչիւր յիսուն քայլին կանգ կ'առնէր եւ կ'երգէր իր զիլ, բարձր շատ անուշ ձայնով: Անոր

երգը կը թափանցէր պատուհաններէն ներս, ողողելու մարդոց հոգիները առաւօտեան աստուածային լոյսին ընդմէջէն, թակելու համար դուռները հաւատացեալներու սրտերուն: Եւ մարդիկ շուտով եկեղեցւոյ ճանապարհին էին, մինչ Խորէնին ձայնը կը ծաւալէր օդին մէջ այնքան քաղցր եւ ախորժալոր: Շուրջ մէկ ժամ անոր երգը կ'երկարէր վանքին եւ դուրսը «Քաղաքացիներու» թաղամասերուն վրայով: Որպէս զի մոռացութեան գիրկը չիյնայ այս գոհար եղանակը, ձայնագրած եմ յիշողութեամբ «Սաղեմական կան առաւօտ»ը անունով: Ով է հեղինակը այս ստեղծագործութեան անյայտ է. հաւանաբար ծիսակատարութիւններու մասնագէտ, Ս. Յակոբէն ներս կարգ ու կանոնի քծախնդիր, աւանդապահ Լուսարարապետ Մեսրոպ Արք. Նշանեանը՝ (հետագային Պատրիարք) որ կրնար ժառանգած ըլլալ իր նախորդէն, երաժշտագէտ Դաւիթ Վարդապետէն: Մինչեւ մեր ուսանողութեան եւ վանական կեանքի տարիները 1947 թիւը, Խորէնը ողջ էր եւ հայ Երուսաղէմը կը վայելէր անոր ձայնին քաղցրութիւնը: Ահա եւ երգը. -

Սաղեմական Առաւօտ



ուաժ Առաւօտ-
 հան լոյսն է քաց-
 - - - ուել Ո- դոր- մու-
 քեան դուռն է
 քաց- ուել Ով քա- ըի
 Քրիս- տոն- եայք
 Ե- կայք Ի սուրբ - ե- կե-
 դե- - ցի:

Ս. Յակոբ Մայր Տաճարի մուտքին դուրսի աջ կողմը, գաւիթի պատին ամրացուած կան երկու կոչնակներ, մէկը՝ երկաթէ, միւսը՝ փայտեայ: Լոյսը չբացուած, լուսարարը ձեռքի մուրճով կը հնչեցնէր երկաթէ կոչնակը: Հերթական երկու վանականներ եկեղեցւոյ խորանին առջեւ կանգնած օրուան յատուկ սաղմոսը

կը ֆադնէ թիւ ընթերցմամբ: Քիչ յետոյ լուսարարը կը հնչեցնէ տախտակի կոչնակը եւ ապա եկեղեցւոյ զանգակը, որ կը հրաւիրէր եկեղեցականները եւ ժառանգաւորաց սաները եկեղեցի: Կամաց կամաց հաւատացեալները եւ ուխտաւորները կը խտացնեն շարքերը:

Մայր Տաճարը քացառիկ վեհութիւն մը ունի: Կարծես կտոր մը երկինք իջած ըլլար հոն, բարձրագոյն ոլորտներու մէջ տանելու համար ժողովուրդը: Հարիւրներով գոյնզգոյն կանթեղներու պալլացումները աստղազարդում մը յօրինած, կ'անջատեն մարդը երկրայինէն երկնայինին երանութեան սահմաններուն մէջ տանելով, աշխարհայինէն վեր հոգեկանին անդորրութիւնը գտած ըլլալու գոհունակութեամբ: Այսպիսի խորհրդաւոր տպաւորիչ երկինք մը եկեղեցւոյ կամարներուն տակ Ս. Յակոբ եկեղեցին ունի միայն: Աւագ խորանը՝ վեհ, ոսկեգոյն գունազարդումներով տպաւորիչ, Աստուծոյ տան պատուանդանը ըլլար. հայուն Աստուածը մօր գիրկը նստած իր բարի մանկունակ նայուածքին ջերմութեան տակ առած իր ժողովուրդը: Եկեղեցւոյ չորս սիւններուն եւ պատերուն՝ հին թանկագին՝ Սրբապատկերներ. իւրաքանչիւրը իր տօնին յատուկ, կանթեղի լոյսին տակ կ'ունկնդրէ իր միջոցով երկնայինին հասնող աղօթքը եւ երգեցողութիւնը:

Աւագ Տօներ.՝ Այսպէս կը կոչուին Ս. Ծննդեան օրուան նախորդող տօնակատարութիւնները: Երուսաղէմի մէջ քացառիկ շքեղութեամբ հարուստ են այս օրերը: Թանգարանին մէջ պահուած թանկագին իրերը դուրս կը բերուին, շուրջառնեւն սկսուած միմչեւ արծաթէ եւ ոսկիէ կազմածները:


Առաջինը այդ տօներէն: Սրբոցն Դաւթի Մարգարէին եւ Յակոբայ

Տեղանկերայր առաքելոյն»։ Օրացոյցին մէջ նշուած է «Տօն Առաքելական Ս. Աթոռոյս Երուսաղէմի», փակագծի մէջ հանդիսաւոր Ս. Պատարագ Ս. Յակոբեանց տաճարին մէջ եւ «հոգեհանգիստ վասն հանգուցեալ Պատրիարքաց Առաքելական Ս. Աթոռոյս»։ Նկարագրականը այս հանդիսութեան։ Առաւօտ կանուխ եկեղեցիէն ներս հոգեւորականներ, սարկաւազներ, ժառանգաւորաց սաներ։ Եկեղեցւոյ կեդրոնը, ջահին տակ, «Մեծ ատեանին» մէջ, հանդիսապետ սրբազանը, իր երկու կողմերը հոգեւորականներ՝ ձեռնադրութեան, աւագութեան կարգով, ապա սարկաւազներ, ուրարակիրներ եւ աշակերտներ։ Հանդիսապետը կ'արտասանէ «Հայր Մեր»ը։ Երկու սարկաւազներ քանկագին ճաշակաւոր շապիկներով, արծաթէ բուրվառներով, կը մօտենան հանդիսապետին, «եւ եւս խաղաղութեան ...» խնդրանքին վրայ եպիսկոպոսը փոքր դգալով կը լեցնէ խունկը որ անուշահոտ իր գգլիսիչ բուրմունքը կը ծաւալէ տաճարին մէջ։ Դասապետը կը սկսի «Տէր զի բազում եղեն» սաղմոսէն առաջին բառը։ շուտով կը ձայնակցին բոլոր ներկաները։ 30-40 քերաններէն կը հոսին սաղմոսին բառերը։ մերթ մերդաշնակ, ընդհանրապէս խառն ի խուռն, ետ առաջ վանկերով եւ ձայներով, ուղղակի բառերու խառնարան մը։ ձայներու կռիւ մը կը հոսի եկեղեցիին մէջ, եւ այս՝ մինչեւ սաղմոսին վերջին տունին վերջին բառը՝ «վասն անուան քո Տէր կեցուցես զիս արդարութեամբ քով հանցես ի նեղութենէ զանձն իմ»։ Այստեղ կը հանգչի եղանակը եւ դասապետը իր սփանչիւի ձայնով կը սկսի մեմեքել՝ «Ողորմութեամբ քով սատակես Աստուած գրչնամիս իմ»ը, որուն ի պատասխան, դիմացի դասէն, ղեկավարը կ'երգէ «Փառք Հօր ...»։ Ասոր իբրեւ շարունակութիւն՝ Շնորհալի հայրապետին «Յիշեցումք ի գիշերի զանուն


քո Տէր»ը։ Եւ հանդիսաւոր քայլերով երթը դէպի աջակողմեան եւ ձախակողմեան դասերը։ Այս հանճարեղ սկիզբին միասին իմ մեկնաբանութիւնը։ «Տէր զի բազում»ի այս կերպ կատարողականը ոչ միայն անախորժ ձայներու հաւաքածոյ չէ, այլ մանաւանդ ամենախոր իմաստաւորումը եւ պատկերը ունի հայ եկեղեցւոյ երաժշտական եւ ճարտարապետական կառոյցին։ Հայաստանի մէջ կառուցուած տունները իբրեւ հիմք ունին հետեւեալ քաղաքիչ տարրերը։ պազալտ քարերը կոտորակուած մասերու վերածուած անխնայ կերպով կը լեցուին քացուած հիմնափոսին մէջ, ապա կ'իր-աւագով կամ «ցեմենտով» շաղախը առատօրէն կը քափուի վրան մինչեւ յաջորդ օրը, երբ մէկ կտոր եղած կ'ըլլայ, ապա հովելով հաստատուն հիմքը կառուցուելիք շէնքին։ Ճիշտ այդպէս ալ մեր երգեցողութեան հիմքը, անխնամ, խառն ի խուռն, աններդաշնակ, անախորժ, սակայն եղանակը երբ իր աւարտին կը հասնի ներդաշնակ եւ առողջ կառոյց մը կը զգենու համաձայն իր հիմքին։ Այս տոկունութիւնն է որ դարեր շարունակ անաղարտ եւ պայծառ պահած է մեր եկեղեցին եւ արուեստը։

Բոլորներու քայլին հետ՝ լոյսը եկեղեցւոյ լուսամուտներէն ներս։ սարկաւազները՝ շարուած խորանին առաջ, կը հնչէ «Զարթուցեալք»ը։ Ասոր իբրեւ շարունակութիւն կը լսուի դասապետին ձայնը սկսելու համար Շնորհալիի «Աշխարհ ամենայն»ը։ Այս երգին եղանակները մի քանի հատ են։ Ս. Յակոբէն ներս կ'երգուին անխորի։ Ամենէն տպաւորիչ եւ հանելի եղանակը որ կ'երգուի Աւագ տօներուն, կը կոչուի «ողորմեան եղանակաւ»։ Ս. Յակոբէն դուրս ոչ մէկ եկեղեցւոյ կամարները չեն ունկնդրեր գայն։ ահա եւ ձայնագրութիւնը։-

Աշխարհի Ամենայն
(Ողորդման եղանակ)



Աշ- խարհ ա- - մեն- -
նայն առ իս
նա- յեց- հալ
ախ- տա- կից լե - - -
րուք - - - քա- նամ ըզ-
շըր- թունս քար- քա- -
րիմ լեզ- ուսս
քո- ղո- քեմ գանձ- նէս
Տէր n- ղոր- մեա
Տէր n- - - - ղոր- մեա



Տէր n- - ղոր- - -
մեա :

Այս հոգեպարար երգին յաջորդող առաջին հանդիսաւոր արարողութիւնը գլխաւոր ատեանին մէջ օրուայ տօնին յատուկ օրհնութեան շարականի երգեցողութիւնն է՝ «Յաղթող գտաւ յօրհնաբանս» ... ԴՁ ձայնի հիմունքներով գրուած եղանակաւորում մը շատ ախորժալուր։ Ասոր կը յաջորդէ բացառիկ պահ մը. մեր ժամագրքի շատ տպաւորիչ արարողութիւններէն. «Այսօր Դաւթ» Թագաւոր Յաւիտեանը, Մեծ Ատեանի ջահին տակ։ Առանձինն բանաստեղծական եւ երաժշտական ստեղծագործութիւն մը «ուր տուններէ» բաղկացած։ Դժուարին, խորունկ ուղիներ եւ պետք, առաջին մասին մէջ գտնուի եղանակը խրթին իր կառուցումովին, հասնելու մինչեւ «Եւ յորժամ շարժինը» ուր երկինք եւ երկիր իրար կը միախառնուին մինչեւ որ «Աստուած իր սիրելիները լուսեղէն խորաններու մէջ կը նստեցնէ»։ Այս այն պահն է երբ հանդիսապետ սրբազանը արծաթեայ փոքրիկ բուռնարով թափօր ելած կը խնկարկէ, երկու սարկաւազներու առաջնորդութեամբ եւ փէշակիրներ ծանրաթել հիւսուածքով շուրջառին ծայրերէն բռնած կը շրջին հետը. մինչդեռ երգեցիկ խումբը մեղմ բայց ծաւալուն ձայնով կը շարունակէ երգել իրեն ընկերացող բողոքներու բնուշ շխշխոցին միացած, մինչեւ աւարտը այս փառաւոր արարողութեան՝ վերջին մասը Գիշերային ժամերգութեան։

Առաւօտեան ժամերգութիւն.— «Հայր Մեր», Սաղմոս՝ «Լցա՛մ առաւօտու», եւ ապա «Հարց» շարականը: Նոյն ԴԶի հիմունքներով գրուած «Մեղա՛մ յամենայնի»ն: Ասոր եղանակը այնքան սրտառու է, եւ աղաչական է որ երբ կ'երգուի, յուզական ջերմ մթնոլորտ մը կը ստեղծուի մարդուն եւ Աստուծոյ միջեւ. քանաստեղծութեան միտքը եւ ձգտումը երկնայինին գթութիւնը գտած ըլլալու հոգեկան երջանկութիւնն է: Այս ստեղծագործութիւնը կը վերագրուի Յովնան Օճնեցի հայրապետին, Ը. դար: Ահա եղանակը—

Հարց ԴԶ.

Մեղա՛մ Յամենայնի

Մե-ղա՛մ յա-մե-նայ-նի
 եւ ըզ-պատ-ուի-րա-
 նըս քո ոչ պա-հե-
 ցա՛մ, այլ խոս-տո-վա-
 նիմք առ քեզ. մի
 աճ-տե-տես առ-
 ներ — այլ գը-թա՛մ

մեզ — Աս-տը-ւած
 հար- — — ցըն մե- — —
 րոց — — :

Ժամն է Ս. Պատարագին. խորհրդաւոր մթնոլորտին մէջ կը զգաս ներկայութիւնը երկնային գօրութիւններուն որոնք կը ձայնակցին երգեցողութեան, ստեղծելով առաւել շշտուած ներդաշնակութիւն մը: Այդ օրուայ պատարագիչը կ'ըլլայ դրան հպիսկոպոսներէն մէկը: Պատրիարքը Առաւօտեան ժամերգութեան «Փառք ի Բարձունսի» հանդիսաւոր երգեցողութեան ընթացքին, զգեստաւորուած տօնին յատուկ շուրջառով, Պատրիարքական աղամանդակու գաւազանով, իրաւունք ունի կենալու սատափակու Սուրբ Աթոռի պատուանդանին, այդ օր միայն:

Պատարագի վերջաւորութեան Հանգստեան Կարգը վախճանած պատրիարքներուն. անմահացած հոգիներ որոնք դարեր շարունակ դիմագրաւելով քաղմպիսի դժուարութիւններ, կեանքի գնով պահպանած են հոգեւոր այս հաստատութիւնը: Պաշտամունքի աւարտին՝ երբը դէպի պատրիարքարանի դահլիճը, միաքանութեան լրիւ կազմով եւ ժողովուրդով: Օրուան Մանկունք շարականը՝ ԴԶ. «Օրհնեցէ՛ք գտէր յօրհնութիւն ի նոր», վանքին Օրհնեմքը, նանապարհին հպարտանքով կը լեցնէ մարդկանց հոգիները: Դահլիճի հարուստ մթնոլորտին մէջ Պատրիարքին օրհնութեան խօսքով եւ պահպանիչով վերջ կը գտնէ այս հանդիսաւոր տօնախմբութիւնը:

ԿՈՄԻՏԱՍ Ա. ՔԶՆՅ. ՇԻՐԻՆԵԱՆ

ԵՐԳԻԾԱԿԱՆ

ՄԿՐՏԻՉ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Սուրբ Գիրքէն գիտեմք որ Փարաւոն երբ Աստուծոյ առաջարկութիւնը մերժեց, Աստուած սկսաւ Եգիպտացիներուն իրարու ետեւէ պատիժներ դրկել որոնց թիւը տասնի յանգեցաւ: Փարաւոն մինչեւ ինններորդ պատիժը յամառութեամբ դէմ կեցաւ. եւ տասներորդին առջեւ ալ կը վարանէր հնազանդութիւն յայտնել՝ երբ Մովսէս եւ Ահարոն իրեն յայտնեցին թէ՝ եթէ նորէն յամառիս՝ իրրեւ մեծասաներորդ պատիժ Մկրտիչ Տիգրանեանը պիտի դրկէ Աստուած: Փարաւոն այս յայտնութենէն սոսկալով՝ Մովսէսն եւ Ահարոնը անմիջապէս կանչել տուաւ, արտօնեց զիրենք որ ելնեն երթան, իրենց ունեցածըն ալ մէկտեղ տանելով: Փարաւոնին հնազանդութեանը վրայ Աստուած ստիպուեցաւ քովը պահել Տիգրանեանը: 1815 թուականին երբ տեսաւ Աստուած որ մեր կրած տառապանքներէն չխրատուելով՝ անարժաններն վարդապետ, քահանայ կը ձեռնադրենք եւ ազգին իրաւունքներն անոնց ձեռքը կը յանձնենք, բարկացաւ եւ Մկրտիչ Տիգրանեանը, պատիժներուն նախագահը, դրկեց որ՝ խրատուինք. թէպէտ եւ մենք այս պատիժն ալ առ ոչինչ գրելով շարունակեցինք եւ կը շարունակենք մեր ընթացքը:

Մկրտիչ Եպիսկոպոսին աշխարհ գալուն քուն պատճառն մեր ընթերցողներուն յայտնելէ ետքը, պարտք կը սեպենք անոր քանի մը մականուններն ալ հոս յիշել որպէս զի ուրիշ Մկրտիչներու հետ չփոխեն իւր անունը:

Մկրտիչ Եպիսկոպոս Տիգրանեան Պոլսեցիներէն կ'անուանուի հրաշագործ. Հայաստանի մէջ փւրտերէն կը յորջորջուի

շամմա հուլուպ որ կը թարգմանուի ապուրի վարդապետ. լուսահոգի Յակոբ Պատրիարքէն կո կոչուէր Եօթն փորձա՞ք, գորս արդի վեհափառ Գեորգ կաթողիկոսն մեր ազգին համար քաւական չհամարելով՝ փորձա՞ք մ'ալ ինք աւելցուց Եպիսկոպոսութեան աստիճան տալով անոր:

Արդ, Մկրտիչ Եպիսկոպոսը ծնած է Տիգրանակերտ 1815 թուականին:

Ի ծնէ վառվռուն եւ քարեկարգութեան սիրահար գոլով՝ վայրկեան մը հանգիստ չէր մնար: Շաքաթն երեք անգամ տունը կը լուար, կը մաքրէր, կ'աւլէր, պատին վրայ բեւեռ մը գամելու համար տանը հիմքերուն բեւեռները կը ֆակէր քարեկարգելու համար տունն՝ որ վանքերէն աւելի հաստատ հիման վրայ շինուած ըլլալուն պատճառաւ չէր գործանուիր: Մայրն զաւակին ըրած քարեկարգութիւններէն ձանձրանալով՝ բոնեց զինքը Կոնոնոսի վանքը դրկեց:

1827ին կը մտնէ Կոնոնոսի վանքը, Բաւական տարիներ հոն կ'երակրուելէն ետեւ ձեռք կը զարնէ վանքը քարեկարգելու. իսկ երբ կը տեսնէ որ մէկ կողմէն վանքը յօծարութիւն ցոյց չտար քարեկարգուելու եւ միւս կողմէն վանահայրն յորգը չնանայք իւր ծառայութիւններուն՝ որովք վանքն օր ըստ օրէ ետ ետ կ'երթար, կը թողու այս ագարակն անիծելով մարդերու ապերախտութիւնը: Զվիատիր սակայն, միտքը կը դնէ վանք մը փնտռել, ինչպէս որ ամէն մարդ գործ մը կը փնտռէ ոչ այդ գործով ապրելու, այլ այդ գործը քարեկարգելու համար:

1837ին Մշոյ Ս. Կարապետի վանքը կ'երթայ: 1839ին վարդապետ կը

ձեռնադրուի եւ իւր ապաշխարանքը կը փախչէ Կաղ Գրողին օճախին մէջ: - Աւանդութիւն մը կայ թէ սատանան տարին ֆանի մը անգամ այդ օճախը կու գայ եւ անոր մոխիրը կը խառնէ եւ թէ այս է պատճառ որ յիշեալ վանքին մէջ խոտվութիւնն միշտ անպակաս է: Ուրիշ աւանդութեան մը նայելով՝ Մկրտիչ Եպիսկոպոս այդ օճախին մէջ ապաշխարանք փաշած ժամանակն երբ սատանան կու գայ մոխիրը խառնելու՝ ապաշխարողէն վախճալով կը փախչի, եւ Մկրտիչ Եպիսկոպոս կը սկսի այս մոխիրը խառնելու:

1841ին ձանձրանալով վանքին մէջ անգործ մնալէ, ճամբայ կ'ելնէ ֆիւրտստանի քարեկարգութեան համար, ինչպէս կը գրէ ինք իւր Հայելի Գործոցին մէջ, հայելի մը որ դժբախտաբար շատ լաւ կը ցուցնէ անոր պատկերը: Քիւրտստանի քարեկարգութեան խնդիրն, ինչպէս յայտնի կը տեսնուի, Տիգրանեանի օրով ծնած է: Հայաստանի վանքերուն եւ Քիւրտստանի քարեկարգութեան վրայ տասներեք յօդուածներէ քաղկացեալ կանոնագիր մը կը խմբագրէ, եւ երբ անոնց գործադրութեանը պիտի ձեռնարկէր, իւր դէմը կը տեսնէ Տօն Քիշօթի օղային ախոյեանները, որոնց դէմ թէպէտ եւ փաշութեամբ կը կռուի քայց յաղթուելով ետ կը դառնայ:

Այս պարտութիւնն զինք սուրբ Յովհաննէսի վանքը կը նետէ: Եւ որովհետեւ առանց պարտքի վանք չըլլար, այս վանքն ալ ունէր իրեն պարտքերն՝ որոնց վճարման համար վանահայրէն կ'աղաչուի Մկրտիչ Եպիսկոպոս երթալ Պաղտատ ու Պարսկաստան հանգանակութիւն ընել: Տիգրանեան ո՛չ միայն Պաղտատ ու Պարսկաստան կ'երթայ, այլ Կիլիկիոյ կողմերն ալ երթալով ցամաքէն Պօլիս կու գայ 1844ին միշտ հանգանակելով:

Հանգանակութիւնը գոհ չընէր Նորին

Գերապատուութիւնը որ կը փափաքի Քիւրտստանի - Հայաստանի չհասկնալ - տղայները դաստիարակել. Պատրիարքէն կոնդակ մը կ'առնէ, ուրիշէ մ'ալ ուրբ հազար դահեկանի արժողութեամբ դասագիրք նուէր առնելէն ետքը Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ կը սկսի նորէն հանգանակութեան Նիկումիդիայէն ցամաքէն մինչեւ Տիգրանակերտ ուր կը հասնի 1845ին: Ինք ալ իբրեւ Քիւրտստանի տղայ դաստիարակութեան պէտք ունենալով քննական էր որ անբաժ չմնար հանգանակած գումարէն: Իւր խոստովանութեանը նայելով՝ ամբողջ Քիւրտստանի մէջ վարժարաններ կը շինէ ... օդի մէջ: Սիլվանայ մէջ կը փափաքի վարժարան մը հաստատել ... գետնի վրայ. քայց այս գործը փչ մը դժուար ըլլալով փափաքն չկրնար իրականացնել, մանաւանդ թէ Սիլվանաքանակ ազգայիններն հայերէն չէին գիտեր, անխնամ, անհոփիւ եւ անտէրունջ մնացած էին: Այս ժողովրդեան համար հասարակօրէն կ'ըսեն եղեր.

Պաղ Զուրը կու գայ մեծ Սիլիվանայ.

Գէշ Քրթու տղան է սեւ սատանայ.

Ա՛ն բուրդ բամբակը շուտով մկրտէ՛,

Կ'ուզէ Հայ մայ կ'ուզէ թրքանայ:

Այնպիսի գեղի մը մէջ, որուն վրայ սասնկ ոտանաւոր մը կը գրուցուի, վարժարան քանալը յայտնի է թէ որչափ դժուար գործ մ'է: Լաւ չենք յիշեր Սղերդի՞ մէջ թէ երագին մէջ ալ վարժարան մը կը քանայ. սակայն լաւ կը յիշենք որ Սղերդի մէջ են եզգիտի աղանդաւորներն որոնք սատանային համար գէշ չեն ըսեր եղեր: Դիտողութեան արժանի է որ յիշեալ աղանդաւորները Մկրտիչ Եպիսկոպոսին վրայօք ալ գովեստով կը խօսին:

Սակայն մարդը հանգիստ չեն թողոր որ ամէն քան կարգադրէ: Մշոյ եւ Տիգրանակերտի առաջնորդներէն առնուած տեղեկութիւններուն վրայ Պատրիարքարանէն հրաման կ'երթայ որ կոնդակն Մկրտիչ

Եպիսկոպոսին ձեռնադրելու և ինքն ալ վանքի մէջ բանտարկուի: Մկրտիչ Եպիսկոպոս կ'իմանայ այս լուրն, և փոխանակ ձերբակալուելով վանք տարուելու, յօժար կամփովը անձնատուր ըլլալու համար ճամբայ կ'ելնէ, սակայն ճամբան մոտորելով Մշոյ վանքը երթալու տեղ կ. Պոլիս կու գայ երկրորդ անգամ 1845ին: Ս. Պատրիարքին կը ներկայացնայ և կը հարցնէ թէ ինչ են իր յանցանքները: Պատրիարքն՝ որ գիտէր թէ իւր հարցման պատասխանելը անօգուտ էր, դուրս հանել կու տայ զինքը: Ամիրաններն որ շատ անգամ գործերն անուշուրթեամբ կարգադրելու սկզբունքին կը հետեւէին, Բիւրսոստանի վեց վանքերու անկախ առաջնորդ կ'ունուանեն Տիգրանեանն որ կոնդակն առնելուն պէս ճամբու պատրաստութեան կը սկսի:

1846ին ճամբայ կ'ելնէ ... դժբախտութիւնն ալ ետեւէն: Խնուզ Այրօզ գիւղն իջած էր ուսկից Մուշ պիտի երթար, և ահա քանի մը անձեր կը ձերբակալեն զինքը զրպարտելով թէ մախադին մէջը Բողոքականի գիրքեր գտած են, և գանակոծելով կը բանտարկեն Աւագի Օվէի ախոռին մէջը: Քսան օրէն ետքը ախոռէն կը հանեն և երբ Ս. Կարապետի վանքին մէջ բանտարկուելու համար ճամբայ կը հանեն, քարեկամ Բիւրսոսն կ'ազատեն զինքն ու կը յանձնեն կառավարութեան, որ Կարին կը դրկէ գայն հոն դատուելու համար: Ինքը կը փափաքի Ս. Յովհաննու վանքն պատուել իւր ներկայութեամբը, իսկ երբ կը լսէ որ կապանքով Ս. Կարապետի վանքին մէջ պիտի պատուասիրուի, կը փախչի. քայց կը ձերբակալուի, Մուշ կը բերուի, Մուշէն Ս. Կարապետ կը դրկուի, ուր կը բանտարկուի ուրստն օր: Իւր բանտարկութեան այս շրջանին մէջ կը թարգմանէ Աւետարանն Քրդերէնի, որպէս զի Քրդերէն գիտցող ազգայիններն ալ հասկնան Աւետարանի հոգին և իրեն

օրինակին հետեւին: Բարեկամները կ'երթան և կը յաջողին այս հալածեալ առաքեալն բանտէն հանելու:

1847ին երրորդ անգամ Պոլիս կու գայ: Մայրաքաղաքը հասնելուն պէս Պատրիարքարանն իրեն պատիւ ընելու նպատակաւ, երկու մարդ կը դրկէ որոնք կ'ընկերանան նորին գերապատուութեան մինչեւ Փրկիչ, ուր կը բանտարկուի տասնըհինգ օր և ուր խեղճին մախադէն կը գողցուի հազար եօթը հարիւր դահեկան գոր չունէր:

Սակայն գործող մարդ մը բանտին մէջ չկրնար երկար առնել մնալ. ուստի այս անգամ ալ բանտէն ազատուելու համար կ'առաջարկէ որ Հայաստան դառնայ և Մարիքաս Կատինայ Հայոց Պատմութիւնը գտնէ: Ամիրային մէկն այս առաջարկութիւնն ընդունելով դրամ կու տայ իրեն որ երթայ գտնէ այդ Ազգային Պատմութիւնը, գոր թէպէտ և գտած կը համարի, Տիգրանեան դրամը գրպանը նետելուն պէս, սակայն նորէն ճամբայ կ'ելնէ:

1852ին իւր ըրած ազգօգուտ գործերուն համար նորէն Պոլիս գալու հրաւեր կ'ընդունի, որուն վրայ կ'ելնէ չորրորդ անգամ Պոլիս կու գայ. քայց նորէն օձիքը կ'ազատէ և վարպետութեամբն ինքզինքն Նողդատի առաջնորդ ընտրել կու տայ: Հագիլ թէ իւր պաշտօնատեղին կ'երթայ, պսակի խնդիր մը կը յարուցանէ հոն և հինգերորդ անգամ Պոլիս կը բերուի: Այս անգամ քիչ մը խիստ կը վարուի, ազգային վարչութեան դէմ բողոքող աղերսագիր մը կու տայ Կայսեր: Կառավարութենէն հրաման կ'երթայ Պատրիարքարան որ Սրբազան Պատրիարքը Բ. Դուռն երթայ և Տիգրանեանի հետ դատուի: Ամիրանները գործին կը միջամտեն և մեծ նեղութեամբ կը յաջողին ազգին իրաւունքները պաշտպանել Տիգրանեանի դէմ որ ազգին իրաւունքներն պաշտպանելու նպատակաւ

դատ քացած էր ազգին Պատրիարքին դէմ: Պատրիարքարանն այն ատեն կը համոզուի որ անկարելի է այս փորձանքին հետ վարուիլը. Բիւրոստան կը դրկեն գայն. քայց հոն ալ նորէն մոխիր խառնելով կը ստիպէ Պատրիարքարանն որ զինքը Պոլիս բերել տայ. ուստի 1858ին վեցերորդ անգամ մայրաքաղաքը կը մտնէ:

Այս թուականին Սամաթիոյ Ենի Մահալէի քարոզիչ կը կարգուի. քայց քարոզչութեամբ չը կրնալով ապրիլ կը սկսի հրաշագործութեան: Կաղեր, կոյրեր, խուլեր, համրներ, այսահարներ, անդամալոյծներ կը բժշկէր: Ամէն օր հիւանդներ կ'երթային իրեն:

- Հա՛յր սուրբ, իմացանք որ դո՛ւք ամէն ցաւերը կը փարատէք:

- Հրամբ էք օրհնած:

- Քանի մը շաքաթ է՛ի վեր գլխու ցաւ ունիմ, կ'ուզեմ որ փարատէք:

- Գլո՞ւխդ թէ ցաւդ:

- Գլուխս, հայր սուրբ, գլուխս:

- Շատ լաւ, ինձի համար երկուքն ալ միեւնոյն բանն են: Եկո՛ւր խաչահանգիստ մը ընեմ:

Մարդը կը մեկնի եւ քանի մը ժամէն ետքը անդիի աշխարհքը կ'երթայ:

Երկրորդ մը կը ներկայանայ.

- Հա՛յր սուրբ, սենեակին պատուհանը կոտրեցաւ:

- Պատուհանը հոս քե՛ր, վրան բժշկութեան աւետարան մը կարդամ:

Երրորդ մը.

- Հա՛յր սուրբ, մազերս կը թափուին:

- Այս ջուրով գլուխդ լուա՛:

Չորրորդ մը կը մտնէ.

- Հա՛յր սուրբ, անձրեւ եկած օրը սենեակս կը վազէ, ի՞նչ ընեմ:

- Այս ջուրէն քիչ մը դիր սենեակիդ վրայ:

Պատրիարքարանէն մէկը ...

- Հա՛յր սուրբ ...

- Այս ջուրէն ա՛ռ:

- Պատրիարքը դրկեց զիս ...

- Պատրիարքին ալ այս ջուրէն ...

- Ձեզի ըսելու որ ...

- Ձեզի ալ այս ջուրէն:

- Քիչ մը ...

- Այս ջուրէն:

- Պատրիարքարան հրամայէ:

- Պատրիարքարանի ալ այս ջուրէն:

- Եթէ չի գաք ...

- Եթէին ալ այս ջուրէն:

- Նորէն բանտ պիտի երթաք:

- Բանտին ալ այս ջուրէն:

- Եթէ ընդդիմանաք՝ ոստիկանութեան ձեռքով ...

- Ոստիկանութեան ալ այս ջուրէն:

- Պիտի բերուիք Փրկիչ:

- Փրկիչին ալ այս ջուրէն:

- Կառավարութիւնը ...

- Կառավարութեան ալ այս ջուրէն:

Վերջապէս ամէն ցաւերն ալ այս ջուրով կը բժշկէր: Միայն այսահարներուն փորէն դեւերը կը հանէր, սակայն չկրնալով միշտ խոզեր գտնել որ անոնց դրկէ, շատ անգամ իւր փորին մէջ կը հիւրընկալէր դեւերը առժամանակեայ կերպով: Պատրիարքարանն թէպէտ եւ կ'աշխատէր անոր արգելու տուններու մէջ մտնելն, քայց այն ատեն ամէն տուն հետաքրքրութեան համար հիւանդ գտնուելով, չէր կրնար առաջն առնել:

Մէկ կողմէն հրաշք կը գործէր միւս կողմէն միշտ հանգանակութիւն կ'ընէր: Ազգային եւ Քրդերէն գրականութիւնը կը ծաղկեցնէր: Քրդերէն՝ Քերական, Լապտեր Լուրատու եւ Ընթերցարան տպել կու տար եւ տպագրութեան ծախքը ժողովուրդէն կ'առնէր: Երբեմն տպարանին չէր վճարեր ծախքը. երբ տպարանապետն երթար ոտք կոխէր եւ ստակ ուզէր, այս Զուրէն ըսելով անոր ալ ջուր կու տար:

Բաւական ժամանակ հրաշագործութեամբ ապրելէն ետքը 1861ին Բալուի առաջնորդութիւնն կը ստանձնէ:

Պաշտօնատեղին երթալեն քանի մը ամիս
 ետքը իւր փոքրաւորը ճամբայ կը դրուի
 Պոլիս գալու համար, եւ զարմանալի
 գուգադիպութեամբ մը փոքրաւորին կինն
 ալ նոյն օրը Պոլիսէն կը մեկնի Բալու
 երթալու համար: Լրագիրներու մէջ գո-
 ռում գոչումը կը սկսի: Տիգրանեանը կը
 զգայ որ նորէն մոխիր խառնած է. գիրք
 ցրուելու համար Բալուէն ... կը փախչի:
 Բ. Դոնէն հրաման կը տրուի Բալուի կա-
 ռավարութեան որ Տիգրանեանը Պոլիս
 դրկէ: Կը լսէ այս լուրը, Կարին կը փախչի,
 Կարինէն էջմիածին, ուր կաթողիկոսն
 զինքն չընդունիր եւ կը ստիպուի եօթներորդ-
 անգամ Պոլիս դառնալ 1863ին: Յանձնաժողով
 մը կը կազմուի որ իւր
 յանցանքները բնկնելով տեղեկագիր մը
 պատրաստէ: Յանձնաժողովը նկատելով
 որ տեղեկագիրն տասը հատորի բարձրացաւ
 եւ յանցանքներուն վերջը գալիք չունի՝
 հրաժարեցաւ պաշտօնէն:

1866ին Հալէպի առաջնորդ
 անուանուելով Զէյթուն կը դրկուի հոն
 ծագած խռովութիւնները հանդարտեցնելու
 համար: Զէյթուն մտնելէն երկու ամիս
 ետքը հինգ տղայ կ'առնէ հոնկից եւ անոնց
 դաստիարակութեանը համար կը սկսի
 ժողովրդէն դրամ հաւաքել: Յիշեալ հինգ
 տղաները առջեւը ձգած եգիպտոս կ'երթայ,
 հոն ալ բաւական հանգանակութիւն ընելէն
 ետքը Իզմիր կու գայ, Իզմիրէն Պոլիս
 միշտ հանգանակելով - շոգեմաւի մէջ ալ:
 - Պոլիս Ալի բաշային կը ներկայացնէ
 տղաները որոնց երգ մը երգել կու տայ եւ
 յիսուն ոսկոյ գումար մ'ալ նորին
 բարձրութենէն ընդունելով՝ տղաներն իրրեւ
 աղֆատ օրիաբար Փրկիչ կը դնէ եւ,
 Հալէպի ժողովուրդը հոգեւորապէս
 միխիթարելու համար նորէն ճամբայ կ'ելնէ
 դրամ հաւաքելու:

1868ին եպիսկոպոսանալու համար
 հանրագործութիւններ պատրաստել կու տայ,
 եւ էջմիածին կը մեկնի, ուր

եպիսկոպոսութեան աստիճան կ'ընդունի:

Դարձեալ Պոլիս կը դառնայ եւ
 Զէյթունի խնդիրը կարգադրելու համար
 պարտք ըրած կարծելով՝ ստակ ժողովելու
 համար կոնդակ մը կ'առնէ եւ Ռումանիա
 կ'ուղեւորուի: Բաւական գումար մը կը
 հաւաքէ, սակայն երբ Պոլիս կու գայ եւ
 համար կը պահանջուի իրմէն՝ հաշուոյ
 տետրակները Պատրիարքարանի մէջ
 հրաշքով կը կորսուին եւ ինքն ալ ազատ
 կը մնայ հաշիւ տալէ:

1872ին Տիգրանակերտ կը քաշուի
 քիչ մը հանգստանալու համար. քայց
 որովհետեւ երկար առեւ չէ կարող հանգիստ
 նստիլ, Մշոյ դաշտը կ'ելնէ եւ որչափ կոյր,
 կաղ, խուլ, համր մարդեր որ կը տեսնէ
 ամէնն ալ քահանայ կը ձեռնադրէ ի փա-
 ռոս Հայաստանեայց եպիսկոպոս: Այս ձեռ-
 նադրութիւններուն պատճառը հարցուելով
 կը պատասխանէ թէ՝ այս խեղճերն արդէն
 քառասուն օրէ ի վեր քան մը կերած
 չըլլալով՝ իրենց ապաշխարանքն քաշած
 էին եւ հետեւապէս իրաւունք ստացած էին
 քահանայ ձեռնադրուելու: Պատրիարքա-
 րանը կը սպառնայ. Տիգրանեան կը ծի-
 ծաղի, քայց վերջապէս օր մը կը ձերբա-
 կալուի ծառի մը տակ եգ մը քահանայ
 ձեռնադրած ժամանակը: Սակայն անմիջա-
 պէս թողնելով նորընծայ եգն որուն փիղոն ալ
 տուած էր, կ'անցնելու քահանայ ... ան-
 տառներու մէջ: Երբ Ներսէս արքեպիսկոպոս
 Պատրիարքական գահուն վրայ կը
 բարձրանայ՝ կը գրէ Վեհափառ Կաթողիկո-
 սին որ շնորհ ընէ եւ Հրաշագործն իւր
 իշխանութեանը տակ առնէ: Վեհափառ
 Կաթողիկոսն՝ որուն աւելի արժանի էր
 Եօթն փորձանքն՝ չուգեր զայն իւր բովը
 պահել յայտնելով թէ Ինք արդէն բաւական
 ունի անոնցմէ: Տիգրանեան տեսնելով որ
 Ազգն դժուարութիւն կը յարուցանէ իւր
 վրայ փորձանք հրաւիրելու մասին՝
 առանց հրաւերի կ'ելնէ դարձեալ Կ. Պոլիս
 կու գայ, ուր կը գտնուի այժմ Սամաթիոյ

Սուրբ Կարապետ եկեղեցին ֆարգչութեան պաշտօնով:

Այս է ահա Հրաշագործին կեանքը՝ որուն մէկ ֆառորդն անցած է ցամբորդութեան մէջ մէկ ֆառորդը քանտերու մէջ, մէկ ֆառորդը մոխիր խառնելու մէջ եւ միւս ֆառորդն ալ ստակ հաւաքելու մէջ:

Շատ քանք գրուած եւ գրուցուած են այս անձին վրայ: Լրագիրները հրատարակած են երբեմն որ իր փոքրաւորներէն մին, ընդհանուր սովորութեան համեմատ, շրջագգեստ հագնելու տեղ սխալմամբ քանթալօն կը հագնէր: Շատերը պողացին այն ատեն թէ այդ փոքրաւորն իգական սեռէ էր. քայց ինքը հերքեց այդ գրաբարտութիւնն սա փաստերով թէ հագուստը յօդ մ'է. քանթալօնը արական գոյականներու վրայ կը դրուի իսկ շրջագգեստն իգականներու վրայ. ուստի քանի որ իւր փոքրաւորն քանթալօն կը հագնի, քերականութեան կանոնին համեմատ արական է եւ ո'չ իգական. սակայն խմբագիրներն որ քերականութիւնը շատ չեն յարգեր, այս քացատրութիւնը գոհացուցիչ չգտան:

Հրաշագործն գիտնական մ'է. սակայն շատ խնդիրներու մէջ կը տարբերի դարուս միւս գիտուններէն: Օղը չէ որ, կ'ըսէ, շրջապատած է մեր քնակած երկրագունտն, այլ խաբէութիւնն որ՝

Անօտ է, վասն զի հաշիւներու ամենափոքր մասերու մէջ կրնայ մտնալ:

Տարածական է, վասն զի պարագաներու համեմատ իւր նախկին ծաւալէն աւելի մեծ ծաւալ կրնայ ունենալ:

Թափանցիկ է, վասն զի շատ մը կրօնաւորներ անոր մէջէն կ'անցնին:

Առաձգական է, վասն զի կրնայ ճնշուիլ Պատրիարքարանէն քայց նորէն իւր առաջին ծաւալը կ'առնէ:

Գիտնականութեան շնորհիւն է որ մինչեւ այսօր այնչափ պաշտօն վարեց. եւ

մօտերս Պաղտատու առաջնորդ պիտի անուանուի այն տեղի ազգայիններն առաջ տանելու համար:

Ոմանք կ'ուզեն հաւատացնել թէ Հրաշագործն, որուն նախատէն վաթսուն հինգ շնիկ աստղ անցած է, ազգն այնչափ տարիներ զբաղեցնելուն վրայ շատ զղջացած է եւ թէ որոշած է փորձանք ըլլալ այն ամէն անձերու որոնք ազգին շահն ոտնակոխ ընել կ'ուզեն:

Մկրտիչ Եպիսկոպոս Տիգրանեան միջին հասակով, թուի դէմքով եւ փոքր աչքերով մարդ մ'է: Փողոցը գնացած ժամանակն այնպիսի ուշադրութեամբ կը նայի մարդուս երեսը, որ կը ստիպուիս ձեռքդ քանկոնիդ տանելու՝ նայելու համար թէ ժամացոյցդ քո՞վդ է: Եթէ իւր դէմքն կարելի ըլլայ կենդանի գոյներով նկարել՝ մեր առջեւ կ'ունենանք պատկեր մը որ կարծես մեզի կ'ըսէ կը քարեհաճի՞ք ձեր քսակն անուշութեամբ ինձի տալու, որպէս զի ձեզի քահանայ ձեռնադրեմ:

Իւր ամենէն նշանաւոր կարծիքներէն մին է բոլոր աշխարհականները կրօնաւոր ընել: Այս եղանակով, կ'ըսէ, աշխարհականները հոգեւորապէս միջիջարուելու համար քահանաներու դիմելու հարկ չեն ունենար եւ իրենք գիրենք կը միջիջարեն: Այս համոզմամբ է որ 4000էն աւելի քահանայ ձեռնադրած է:

ՅԱԿՈԲ ՊԱՐՈՆԵԱՆ

ՏՈՄԱՐԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՄԱՐ

ՄՈՒՏՔ

Տոմար է կոչւում այն գիտութիւնը, որը զբաղւում է ժամանակը չափելու եւ դրա հետ կապուած հարցերի ուսումնասիրութեամբ: Այն հիմնուած է օրուայ, ամսուայ, տարուայ, մի խօսքով՝ ժամանակի տեւողութեան չափումների ու աստղագիտական հաշուարկների վրայ:

Մարդիկ ժամանակը չափելու կարիքն առանձնապէս զգացել են այն ժամանակներից, երբ սկսել են զբաղուել անասնապահութեամբ, հողագործութեամբ եւ տնտեսութեամբ: Ժամանակը չափելու ամենաբնական ու պարզունակ միջոցը գիշերուայ եւ ցերեկուայ յաջորդութեան գիտակցութիւնն է եղել: Զարգացման աւելի բարձր աստիճաններում մարդիկ սկսել են ժամանակը չափել Արեգակի, Լուսնի եւ աստղերի շարժումներով, ժամանակը բաժանել շաբաթների, ամիսների ու տարիների: Այսպէս ստեղծուել է օրացոյցը: Օրացոյցն, այսպիսով, տարին հաշուելու համակարգ է. արձանագրում է գիշերուայ, ցերեկուայ, ամիսների ու բնութեան այլ պարբերական երեւոյթների հերթափոխութիւնն ու յաջորդութիւնը:

Հնուց ի վեր օրացոյցը պարունակել է տարուայ օրերի, ամիսների, եղանակների ու շաբաթների ցուցակը, կարգաւորել ժողովուրդների հասարակական-բաղադրական, կրօնական, ազգագրական ու բարոյական կեանքը, խթանել աստղագիտութեան զարգացմանը, նպաստել

ժամանակը չափելու աւելի կատարեալ ուղիներ որոնելուն:

Քանի որ շաբաթները, ամիսները, տարիները եւ ժամանակի այլ միաւորները կապուած են երկրագնդի, Արեգակի, Լուսնի, մոլորակների ու աստղերի շարժման հետ, ուստի թէ՛ հնում եւ թէ՛ այսօր տոմարագիտութեան հիմքերից մէկը աստղագիտութիւնն է:

Մեզ հասած բազմաթիւ աղբիւրների վկայութեամբ, տոմարագիտութիւնը եւ դրան առնչուող աստղագիտութիւնը զարգացման որոշակի աստիճանի էին հասել մ. թ. ա. 4րդ հազարամեակում: Արդէն մ. թ. ա. 3րդ հազարամեակի սկզբին Փոքր Ասիայում եւ Հայաստանում երկնային ոլորտը բաժանել էին համաստեղութիւնների: Ամենավաղ ժամանակներից սկսած՝ եգիպտացիները Սիրիոս աստղի միջոցով որոշում էին Նեղոս գետի յորդացման պարբերականութիւնը:

Հին աշխարհի աստղագիտութեան ու տոմարագիտութեան օրաններից մէկը Հայաստանն էր: Հայ տոմարագէտները հնուց ի վեր կարեւոր նպաստ են բերել համաշխարհային տոմարագիտութեան զարգացմանը: Տոմարն ու օրացոյցը այնպէս էին մտել ժողովրդի կենցաղ, որ հասարակ շինականն ու արհեստաւորը կարողանում էին բաւականին բարդ հաշուումներ կատարել: Սա, նշանակում է՝ տոմարն ու օրացոյցը հայ ժողովրդի մէջ ամուր արմատներ էին գցել:

Այս գրքի գրողներից իւրաքանչիւրը նուիրուած է մեր տոմարի ամիսներից մէկին: Ամէն մի գրողի մէջ, համաշխարհային տոմարի զարգացման կարեւոր փաստերին գուգակից, տեղեկութիւններ կը տամք մեր տոմարի տարբեր հարցերի մասին, կը ծանօթացնենք խոշորագոյն տոմարագէտների կեանքին ու գործունէութեանը, կ'անդրադառնանք հայոց հնագոյն տոմարի տօներին, այդ տօների հետ կապուած որոշ ծեսերի, հեթանոսական աստուածութիւններին, մեր հին դիցաբանութեանն ու ազգագրութեանը:

ԱՄԱՆՈՐ

Հնում տարբեր ժողովուրդներ նոր տարին տարբեր ժամանակ են նշել: Օրինակ, եգիպտացիների նոր տարին այսօրուայ տոմարով Օգոստոսի 29ին էր, պարսիկներինը՝ Մարտի 21ին, չինացիներինը՝ Փետրուարի 6ին, հռոմէացիներինը՝ Մարտի 1ին եւ այլն:

Հին հայերի նոր տարին Նաւասարդի մէկն էր, որը համապատասխանում է այսօրուայ տոմարի Օգոստոսի 11ին: Մեր նախնիները նոր տարուն ԱՄԱՆՈՐ են ասել: Ամանորը կազմուած է հայերէն ԱՄ (տարի) եւ ՆՈՐ քառերից: Ամանորն այնպիսի կարեւորութիւն ունէր մեզանում, որ նրան նուիրուած է եղել յատուկ աստուածութիւն: Ըստ մ. ք. չորրորդ դարի մեր պատմիչ Ագաթանգեղոսի հաւաստի վկայութեան, «Ամանորի ամենաբեր նոր պտուղների աստուածը հիւրընկալ Վանատուրն էր»՝ այգեգործութեան, պտղաբերութեան ու բերքի հովանաւորը:

Վանատուրը քնիկ հայերէն քառ է. նշանակում է՝ օթեւան տուող, հիւրընկալ: Նրա գլխաւոր մեհեանը գտնուում էր Բագրեւանդ գաւառի Նպատ լեռան ստորոտին կառուցուած Բագաւան

բաղաւոյն, որը կոչոււմ էր նաեւ Դիցաւան, այսինքն՝ աստուածների աւան:

Վանատուրի՝ հիւրընկալութեան աստուած լինելու մասին ուղղակի վկայութիւն ունի նաեւ քերթողահայր Մովսէս Խորենացին: Նա իր «Պատմութիւն հայոց» աշխատութեան երկրորդ գլխի ԿԶ հատուածում գրում է. «Հայոց Թագաւոր Տիգրան վերջինը պատուել էր իր եղօր՝ Մաժան քրմապետի գերեզմանը Բագաւանում, Բագրեւանդ գաւառում, գերեզմանի վրայ քազին շինելով, որպէս զի այդտեղի գոհերից վայելեն բոլոր անցորդները եւ հիւրեր ընդունուեն գիշերելու համար»: Որոշակի անձի կողմից հիւրանոց կառուցելու մասին քերթողահօր այս տեղեկութիւնը համաշխարհային պատմագիտութեան հնագոյն փաստերից է:

Հայ մատենագրութեան մէջ եղած տեղեկութիւններից իմանում ենք նաեւ, որ Վանատուրը միաժամանակ հայոց գերագոյն աստուած Արամազդի մականունն էր:

Վանատուրին եւ Ամանորին նուիրուած ամենամեայ բերքի տօնը սկսուել է Նաւասարդի մէկին՝ Ամանորին, եւ շարունակուել մինչեւ Նաւասարդի վերջը: Այդ տօները կոչոււմ էին «Նաւասարդեան տօներ», որոնց քնոյթին կը ծանօթանանք յաջորդ գրողի մէջ:

Նաւասարդի մէկին հայոց Թագաւորի գլխաւորութեամբ Վանատուրի տաճարի սրբավայրում ամէն տարի գումարում էին նախարարների, քարձրաստիճան քրմերի, ազատների, գիւղական աւագների ու շինականների աւանդական «աշխարհաժողովները»: Այս աշխարհաժողովների մասին հնագոյն յիշատակութիւնը գտնում ենք մ. ք. առաջին դարի հրեայ պատմիչ Յովսեփոս Փլաբիոսի աշխատութիւններում:

Պատմագիտական աղբիւրներից

յայտնի է, որ աշխարհաժողովը համահայկական հաւաք էր, որտեղ քննարկւում էին պետական ու ազգային կարեւոր հարցեր, ընդունւում էին օրէնքներ ու կանոններ: Պատահական չէ, որ «աշխարհաժողովները» գումարւում էին վանատուրի սրբավայրում: Հրաւիրեալները հիւրեր էին, ուստի նրանց ժողովատեղին ընտրուած էր հենց վանատուրի տաճարում, որտեղ այդ առիթով կատարւում էին տօնախմբութիւններ եւ զանազան թատերական ներկայացումներ:

Քրիստոնէական շրջանում աշխարհաժողովները մեծ մասամբ գումարւում էին հայոց թագաւորների քնակատեղերում՝ Շահապիւանում եւ Վաղարշապատում:

Գիտնականները պարզել են, որ Ամանորը առանձին աստուածներ չէին: Ղ. Ալիշանի կարծիքով, վանատուրն ու Ամանորը լատինացիների այգեգործութեան հովանաւոր վարտումնոս եւ Պոմոնա ամուսին աստուածների նման նոյնպէս ամուսիններ էին:

Ըստ պատմագիտական ու ազգագրական քաղմաթիւ տուեալների, վանատուրի ու Ամանորի պաշտամունքի հետքերը ժողովրդի մէջ գոյատեւել են մինչեւ մեր դարի սկիզբները: Օրինակ՝ ազգագրագէտ Վարդ Բդոյեանի կարծիքով, վանատուրի եւ Ամանորի պաշտամունքի ծիսական տարրերը պահպանուել են Նուրին-Պուրպատիկների ու «երկթէ մարդ» կոչուող տիկնիկատիպ էակների մէջ: Հայկական ժողովրդական երգերում իգական նուրիներին զգեստը նկարագրուել է «շալէ-շապիկ, կարմիր գօտիկ» խօսքերով, իսկ արական Նուրիներինը՝ «շալէ (բրդէ) շապիկ, կեմէ (խոտից հիւսուած) գօտիկ» քառերով: Նուրիներն ու պուրպատիկները

փաստօրէն հենց վանատուր եւ Ամանոր ամուսին - աստուածութիւնների ձեւափոխուած անուններն են, որ ժողովուրդը պահել էր մինչեւ մեր դարի կէսերը: Նուրիները ցախաւելից սարքած խրովիլակներ էին կամ մեծ չափի տիկնիկներ: Գիւղացի կանայք յաճախ ընտրում էին մի աղջնակ՝ մաղը կործում գլխին, սպիտակ սաւանով ոտքից գլուխ ծածկում էին՝ նրան դարձնելով կենդանի նուրին: Կանանց թափօրը նուրիներին առաջներն առած, իսկ ցախաւելից պատրաստած լինելու դէպքում՝ ցախաւել-նուրիներին ձեռքերով գլխներից վեր պարզած, գիւղացիների դուռներից անցնելով, մթերքներ եւ չարագեղէն էին հաւաքում: Իսկ երաշտի ժամանակ, նուրիները ձեռներից, զանազան ծիսական աղօթքներ ու երգեր ասելով, թմբուկ խփում, ասած ուց անձրեւ էին խնդրում:

Մենք արդէն գիտենք, իր հնում տարբեր ժողովուրդներ ամանորը տարբեր ժամանակ էին տօնում: Այսինքն՝ միասնական նոր տարի չի եղել: Դա այդպէս էլ պիտի լինէր, որովհետեւ հին աշխարհի պետութիւնների միջեւ առեւտրա-տնտեսական, մշակութային ու գիտական կապերն այսօրուայ համեմատ շատ աւելի թոյլ են եղել: Ամէն մի ժողովուրդ պարփակուած էր իր կենցաղի, սովորոյթների եւ հաւատալիքների մէջ: Ուստի, նայած երկրի աշխարհագրական դիրքին, հաւատալիքներին ու ապրելակերպին, նոր տարին տարբեր ժամանակ է տօնուել: Ամանորը առաջին անգամ Յունուարի 1-ից սկսել են հռոմէացիները՝ Յուլիոս Կեսարի օրօք՝ մ. թ. ա. 46 թուին:՝ Յուլիոս Կեսարի հրամանով կազմուած այդ նոր տոմարը նրա անունով

*Գիտնականների մեծ մասի կարծիքով, հռոմէացիք նոր տարին Յունուարի մէկից են սկսել աւելի վաղ՝ մ.թ.ա. VII դարում՝ Նումա Պոմպիլիոս կայսեր հրամանով:

էլ կոչուում է Յուլեան տոմար, եւ աշխարհի շատ ժողովուրդների ծառայել է մինչեւ 18-19րդ դարերը: Պատմական որոշ տեղեկութիւններ գիտնականներին թոյլ են տուել ենթադրելու, որ հայերը Յուլեան տոմարին ծանօթ էին դեռեւս Յուլիոս Կեսարի ժամանակներից: Իսկ աւելի հաւաստի տուեալներով, հայերը սահմանափակ ճեղքով (արժունիքում եւ քանակութեամբ) հուլեան տոմարը պաշտօնապէս ընդունել են մ.թ. 122թ. Բայց Բրիտանական Հայաստանը Յուլեան տոմարին անցնելու մասին պաշտօնական որոշում կայացրեց միայն 1317թ., Ադանայի եկեղեցական ժողովում: Սակայն այդ տոմարը շատ նեղ շրջանակներում է գործածուել, իսկ գործածուելիս էլ՝ անպայման հայոց տոմարի զուգադրութեամբ:

Յուլեան տոմարի տարին ունէր ոչ թէ 365 օր 5 ժամ, 48 րոպէ 46 վայրկեան, այլ 365 օր, 6 ժամ: Այսինքն՝ ճշգրիտ հաշուումներով որոշուած տարուց 11 րոպէ 14 վայրկեանով երկար էր: Անճշտութիւնը վերացնելու նպատակով Հռոմի Գրիգոր 13րդ պապը (XII դար) Եւրոպայի նշանաւոր տոմարագէտներին հրահրում է Հռոմ, որպէս զի մշակեն նոր տոմար: Բազմաթիւ նախագծերից ընդունուում է իտալացի բժիշկ եւ աստղագէտ Ալոիս Լիլիոյի նախագիծը, որը սկսում է կիրառուել 1582թ. Հոկտեմբերի 15ից:

Քանի որ Յուլեան տոմարի 11 րոպէ 14 վայրկեանի սխալը մ.թ.ա. 46թ. մինչեւ 1582 թիւը կուտակուել դարձել էր 10 օր, այսինքն՝ ժամանակը 10 օր եւ էր ընկել, ուստի սխալը ուղղելու համար որոշուեց 1582թ. Հոկտեմբերի 4ից յետոյ ոչ թէ Հոկտեմբերի 5 ընդունել, այլ՝ հոկտեմբերի 15:

Այսպէս սկսուեց նոր տոմարը, որը Հռոմի Գրիգոր պապի անունով կոչուեց «Գրիգորեան»: Հայերը աշխարհի առաջին ժողովուրդներից էին, որ թեւեւ խիստ սահմանափակ, բայց գործածեցին Գրիգորեան տոմարը: Հայ իրականութեան մէջ նոր տոմարի առաջինը իտալահայերն անցան (1584թ.). ապա՝ Ամստերդամի (XVII դ.) հայոց գաղթավայրի կաթոլիկները, հետագայում՝ պոլսահայ կաթոլիկները, իսկ 1783 թուականից՝ նաեւ լեհահայերը:

Գրիգորեան տոմարը, մօտ 340 տարուայ ընթացքում, ընդունեցին աշխարհի գրեթէ բոլոր ժողովուրդները: Վերջինն ընդունեց Եգիպտոսը (1928 թ.), իսկ Ռուսաստանը նոր տոմարին անցաւ 1918 թ. Յունուարի 1ին: Քանի որ 1582 թ. մինչեւ 1918 թ. այսինքն՝ 336 տարում վերոյիշեալ 11 րոպէ 14 վայրկեանը կուտակուել-դարձել էր 3 օր, ուստի այդ երկրում նոր տոմարը հնից երկար էր ոչ թէ 105 այլ 13 օրով: Այստեղից էլ հին տոմարի 13 օրուայ տարբերութիւնը:

Ստորեւ բերուած ժամանակագրութիւնը ցոյց է տալիս, թէ աշխարհի երկրներից ու ժողովուրդներից որը երբ է ընդունել նոր տոմարը:

1582 թ. Հոկտեմբերի 15	- Իտալիա, Իսպանիա եւ Պորտուգալիա
1582 թ. Դեկտեմբերի 20	- Ֆրանսիա
1583 թ. Յունուարի 1	- Հոլանդիա
1583 թ. Յունուարի 16	- Բաւարիա
1584 թ. Յունուարի 1	- Իտալիայի հայկական կաթոլիկ գաղթօջախը
1584 թ. Յունուարի 17	- Գերմանիայի կաթոլիկ համայնքը
1587 թ. Յունուարի 1	- Լեհաստան
1587 թ. Նոյեմբերի 1	- Հունգարիա

1610 ք.	Սեպտեմբերի 2	- Պրուսիա
1668 ք.	Յունուարի 1	- Ամստերդամի հայոց գաղութի կաթոլիկ համայնքը
1697 ք.	Յունուարի 1	- Պոլսի հայոց գաղութի կաթոլիկ համայնքը
1700 ք.	Մարտի 1	- Դանիան եւ Գերմանիայի բողոքական հատուածը
1752 ք.	Սեպտեմբերի 14	- Անգլիա
1753 ք.	Մարտի 1	- Շվեդիա
1783 ք.	Յունուարի 1	- Լեհահայ գաղութը
1873 ք.	Յունուարի 1	- Ճապոնիա
1911 ք.	Նոյեմբերի 20	- Զինաստան
1914 ք.	Յունուարի 1	- Վենետիկի հայոց միսիթարեան միաբանութիւնը
1918 ք.	Յունուարի 1	- Ռուսաստան
1919 ք.	Փետրուարի 1	- Սերբիա
1920 ք.	Դեկտեմբերի 2	- Խորհրդային Հայաստան
1923 ք.	Մարտի 20	- Յունաստան
1927 ք.	Յունուարի 1	- Թուրքիա
1928 ք.	Հոկտեմբերի 1	- Եգիպտոս

ՌԱՖԱՅԷԼ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

Ս. ԹԱԴԵՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ
ՄԱՍՈՒՆՔՆԵՐԻ ՅԱՆՁՆՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ապրիլի 22ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց մի պատուիրակութիւն Հռոմի Սրբազան Քահանայապետ Յովհաննէս-Պօղոս Երկրորդի կողմից, նախագահութեամբ Արեւելեան Եկեղեցիների Ս. Ժողովի նախագահ կարդինալ Սիլվեստրինիի՝ Ամենայն Հայոց կաթողիկոսին յանձնելու Հայաստան աշխարհի առաջին լուսաւորիչներ Ս. Թադէոս եւ Ս. Բարդուղիմէոս առաքելների մասունքները:

Հռոմից ժամանած պատուիրակութեան մաս էին կազմում Անդրկովկասում Պապական Նուիրակ Եպիսկոպոս Ժան-Պոլ Գոբելը, գերապայծառներ՝ Վարդան Պօղոսեանը (Բրազիլիա), Սթերնը (ԱՄՆ), Ներսէս Արքեպս. Ներսիսեանը (Հայ Կաթողիկոսների առաջնորդ) Հայր Կուլեբրոտին եւ այլ անձինք:

Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետի կողքին էին Տ. Յուսիկ, Տ. Ներսէս, Տ. Ոսկան, Տ. Անանիա, Տ. Ասողիկ Սրբազաններն ու Մայր Աթոռի միաբաններն ու ֆահանայ հայրերը:

Պատուիրակութիւնը Քափօրով առաջնորդուեց Մայր տաճար: Մայր տաճարում կրօնական արարողութիւնից յետոյ, յանուն Հռոմի Սրբազան Քահանայապետի, ելոյթով հանդէս եկաւ Կարդինալ Սիլվեստրինին.

«Մեծ պատիւ ունեմ Ձեզ քերելու մուէրը Սրբազան Քահանայապետ Յովհաննէս Պօղոս Բ-ի: Այս մուէրով Սրբազան Քահանայապետը ուզում է արտայայտել իր մեծ սէրը, յարգանքը եւ գնահատանքը Հայ Առաքելական

Եկեղեցւոյ հանդէպ: Առնելով Ս. Աթոռի մշտարմերի գանձարանից Ս. Բարդուղիմէոս եւ Ս. Թադէոս առաքելների մասունքները, մեմֆ յանձնում եմք Ձեզ: Այս երկու առաքելներին Հայ Առաքելական Եկեղեցին մայում է մեծ ուրախութեամբ եւ վստահութեամբ, որովհետեւ մրամք են, որ հիմնեցին Հայ Եկեղեցին:

«Սրբազան Քահանայապետը այս մուէրով ցանկանում է արտայայտել այն մեծ յարգանքը, որ ունի Հայ Առաքելական Եկեղեցւոյ, մանաւանդ Հայ Առաքելական Եկեղեցւոյ հիմնարկութեան հանդէպ: Իր այս մուէրով Հռոմէական Եկեղեցին արտայայտում է իր սէրը եւ յարգանքը, որ հիմնուած է Ս. Պօղոս եւ Ս. Պետրոս Առաքելների փարոզութեամբ հանդէպ Հայ Առաքելական եկեղեցիին, որ հիմնուած է Ս. Բարդուղիմէոս եւ Ս. Թադէոս Առաքելների փարոզութեամբ: Առաքելները, երբ իրենց փարոզութիւնն էին անում, անշուշտ, ունէին եղբայրասիրութիւն իրար հանդէպ եւ ուզում էին մասն, որ այդ եկեղեցիները, որ իրենք էին հիմնել, ունենային այդ մոյմ եղբայրասիրութիւնը իրար հանդէպ: Դրա համար, երբ ասում եմք ժոյր եկեղեցիներ, ուզում եմք հասկանալ եւ ասել միեւնոյն եկեղեցիները, որոնք հիմնուել են Քրիստոսի միեւնոյն առաքելներից: Եւ երկուսիս միեւնոյն առաքելական այս հիմքը ուժեղացնում է մեր կապերը, եւ մեզ միացնում է Քրիստոսին, որ մեզ համար չարչարուեց, մեռաւ եւ յարութիւն առաւ: Այս

Առաքելական հիմքը, որ մենք ունենք մեզ անլի է միացնում Քրիստոսի Ս. Աւետարանին: Դրա համար Սրբազան Քահանայապետը իր այս մուշտով ուզեց արտայայտել կապը քոյր եկեղեցիների միջեւ, որոնք միեւնոյն մատակարարում են: Սրբազան Քահանայապետը՝ Յովհաննէս Պօղոս Բ-ը ինձնից խնդրեց, որ Ձեզ հաղորդեմ իր եղբայրական ողջոյնը եւ սէրը: Նա ամէն օր իր աղօթքներում յիշում է Ձերդ Սրբութիւնը, Հայ եկեղեցին եւ աշխարհի բոլոր եկեղեցիները: Նա աղօթում է ամէն օր որպէս զի այդ եղբայրութիւնը եւ սերտ կապերը, որ մենք ունենք իրար հանդէպ օրէցօր անլի գօրանայ եւ կարողանամք մի օր իրականացնել Յիսուս Քրիստոսի աղօթքը միութեան մկատմամբ: Եւ աղօթում է մաեւ, որ քոյր եկեղեցիները իրար հետ աշխատակցելով կարողանան հասցնել ամբողջ աշխարհին Յիսուս Քրիստոսի Աւետարանը, մաեւ այն մարդկանց, ովքեր դեռեւս չեն լսել Յիսուս Քրիստոսի մասին:

«Սրբազան Քահանայապետը աղօթում է մաեւ հայ ազգի համար, որ շատ-շատ չարչարուեց իր պատմութեան ընթացքին: Եւ աղօթում է մաեւ, որ հայ ազգը ապրի խաղաղ, որի համար այդքան պայքարեց:

«Թող Աստուած Ձերդ Սրբութեանը շնորհի երկար կեանք, առողջութիւն, որպէս զի շարունակէք ձեր առաքելութիւնը: Եւ Թող Աստուած շնորհի տայ մեզ, որ երկու քոյր եկեղեցիները իրար հետ անլի մօտ կերպով աշխատեն տարածել Աստուծոյ խօսքը: Եւ Թող երկու Առաքելները՝ Թադէոսն ու Բարդուղիմէոսը օգնեն մեզ, որպէս զի կարողանանք իրականացնել մեր առաքելութիւնները: Թող Աստուծոյ կամքը լինի»:

Յաւարտ իր խօսքի, Կարդինալ

Սիլվեստրինին Վեհափառ Հայրապետին յանձնեց առաքելների մատուցմանը, ինչպէս մաեւ՝ մատուցմանը հաւաստող վկայագրերը:

Պատասխան խօսքով հանդէս եկաւ Վեհափառ Հայրապետը:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր կեանքի մանապատմական օրերից մէկն է ապրում այսօր: Իսկապէս պատմական է այս պահը, երբ հեռու Հոռմից Սրբազան Պապը ուղարկում է մի պատուիրակութիւն իր գլուխ ունենալով Կարդինալ Սիլվեստրինին եւ ուրիշ հոգեւորականներ, բերելու համար մեզ բոլորիս Սրբազան Պապի օրհնութիւնն ու ամենաբարի մաղթամքները, որի մասին մենք յուզումով լսեցինք Կարդինալ Սիլվեստրինիի խօսքերից: Մենք իրապէս զգացուած եւ շնորհակալ ենք այս բարի, եղբայրական եւ քրիստոնէական իսկական զգացմունքների համար հանդէպ մեր փոքր եւ տառապեալ եկեղեցին:

«Թոյլ տուէք իմ զգացումը արտայայտել մաեւ այս պահին: Երկրորդ անգամ լինելով իմ կեանքում միայն պատմական պահ եմ ապրում, երբ դէմ յանդիման եմ գտնում պատմական մեծ կենտրոնին քրիստոնէական Հոռմին եւ մեր Քահանայապետին, ինչպէս այդ տեղի ունեցաւ իմ առաջին այցելութեան առիթով Հոռմ՝ Պօղոս Զ. Պապի օրերին: Ամմտոնալի պահեր ապրեցինք մենք այն ատեն Հոռմում՝ Սուրբ Պետրոս Տաճարում եւ Սիմոնեան մատուռում միատեղ աղօթքներով եւ միատեղ մեր զգացմունքների փոխանակումով: Եւ ահա փառք եմ տալիս Աստուծոյ Ամենակալին, որ եւ կրկին ապրում եմ այդ զգացմունքները, այս անգամ Մար Աթոռ Սուրբ Էջմիածնում, Պապական մուրաբակի եւ Կարդինալ Սիլվեստրինիի մերկայութեամբ: Եւ կարծում եմ չեմ սխալուի եթէ ասեմ, որ այս այցելութիւնը, եւ մեր

հանդիպումը, եւ բարի ողջոյնները Սրբազան Պապի ոչ միայն սովորական իմաստով քրիստոնէական եղբայրութեան զգացումներ են, այլ մաքու իսկական հաղորդակցութիւն քրիստոնէական իսկական իմաստով մեր միջեւ եւ մեր եկեղեցիներին միջեւ:

Մեր այս հանդիպումը առաւել պատմական նշանակութիւն է ստանում այն մուտքներով, որ ներկայացրեց Կարդինալ Սիլվեստրինին Հռոմի Սրբազան Պապի անունով՝ Սուրբ Թադէոսի եւ Սուրբ Բարդուղիմէոսի մասունքները զգուշութեամբ եւ ապահով պահուած Հռոմում, եւ այսօր մրամբ գալիս են իրենց հայրենիքում մի տեսակ հանգչելու այն հողի վրայ, որտեղ իրենք դարեր առաջ Քրիստոսի Լոյսը սկսեցին առաջին անգամ տարածել Հայոց աշխարհի մէջ: Այս առիթով եւ զգում եմ եւ վկայութիւնն եմ բերում իմ, որ այս յիշատակները, ինչպիսին են Սուրբ Թադէոսի եւ Սուրբ Բարդուղիմէոսի մասունքները, որոնք բերուեցին այստեղ, մեզ միացնում են իսկապէս իբրեւ Քրիստոսի ծառայող եւ Քրիստոսի փառաբանող ժողովուրդներ:

«Նրբեմն պատահում է, որ մենք մեր առօրեայ գործերի մէջ մխրճուած մոռանում ենք որոշ նշմարտութիւններ: Մոռանում ենք, որ մոյն անդամներն ենք:

«Զերդ Գերագանցութիւն Կարդինալ Սիլվեստրինի, ընդունեցէ՛ք մեր խորին շնորհակալութիւնն այս քանկագին յիշատակների համար՝ մասունքները մեր

երկու Առաքեալների, որոնք դուք յանձնեցիք Նորին Սուրբ Օծութիւն Սրբազան Պապի անունով: Զեր խօսքի մէջ, Զերդ Գերագանցութիւն, յիշեցիք, որ Սրբազան Պապը յաճախ իր աղօթքներում յիշում է մաքու մեր եկեղեցին եւ մեր ժողովուրդը:

«Իսկապէս մեր եկեղեցին եւ մեր ժողովուրդը, մանաւանդ այս օրերին, կարիք ունի Սրբազան Պապի աղօթքներին: Մեր ժողովուրդը իր պատմութեան ամենածանր շրջաններից մէկն է ապրում: Գրեթէ ամէն օր, ամէն ժամ մահատակում են հայ հերոսամարտիկները յանուն ազատութեան, արդարութեան եւ յանուն քրիստոսի: Ահա թէ ինչո՞ւ իսկապէս մեզ համար խորապէս մխիթարական է, որ Սրբազան Պապը չի մոռանում մաքու մեզ: Իր աղօթքներում ո՛չ միայն յիշում, այլ մաքու մաղթում է, որ հայ ժողովրդի Ղարաբաղեան արդար դատը յաջողութեամբ ի կատար ածուի եւ հայ ժողովուրդը գտնի իր բնականոն եւ խաղաղ կեանքը:

«Մաղթում եմ Զեզ բարի ճանապարհ: Վստահ եմ, որ Դուք եւս տպաւորուեցիք այս հանդիպումով եւ Դուք եւս չպիտի մոռանաք մեզ ինչպէս մաքու մենք՝ Զեզ:

«Եւ տարէ՛ք Զեզ հետ Աստուծոյ օրհնութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից»:

Յաւարտ արարողութեան վեհարանի ընդունելութիւնների դահլիճում տեղի ունեցաւ ջերմ հիւրասիրութիւն:

ԳԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու գահակալները՝ Նորին Սուրբ Օծուքին Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Նորին Սուրբ Օծուքին Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, Ամենապատիւ Տ. Թորգոմ Արքեպիսպոկոս Մանուկեան՝ Պատրիարք Հայոց Երուսաղէմի, Ամենապատիւ Տ. Գարեգին Արքեպիսպոկոս Գազանեան՝ Պատրիարք Հայոց Թուրքիոյ, հրաւերովը Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Ս. Էջմիածնի Մայր Աթոռին մէջ, Մայիսի 6ին, 7ին եւ 9ին ունեցան խորհրդակցական երեք հանդիպումներ, որոնց ընթացքին անոնց բննարկման գլխաւոր առարկան հանդիսացաւ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հոչակման (301 թ.) 1700 ամեակի արժանավայել նշման, եւ պանծացման պարագան մեր Եկեղեցւոյ եւ ազգի կեանքին եւ համաշխարհային քրիստոնէութեան շրջագծին մէջ:

Խորհրդակցութեանց ընթացքին անոնք վեր հանեցին այն կենսական անհրաժեշտութիւնը որ 1700 ամեակը դառնայ աղբիւր Հայաստանեայց եկեղեցւոյ ներքին վերանորոգութեան, անոր հոգեւոր եւ ազգային առաքելութեան ուժեղացման եւ միանգամայն ըլլայ առիթ մը համաշխարհային եւ համաքրիստոնէական մակարդակի վրայ արժանապէս ներկայացնելու անոր կարեւորութիւնն ու արժէքը:

Առ այդ որոշեցին՝

ա. 2000-2001ը, երրորդ հազարամեակի առաջին տարին հոչակել Հանդիսական Տօնակատարութեան տարի, սկսելով 2000 թուի Ս. Էջմիածնի տօնէն մինչեւ 2001 թուի նոյն օրը:

բ. Կազմել Կեդրոնական Յանձնաժողով մը, բաղկացած նուիրապետական Աթոռներու ներկայացուցիչներէ: Կանոնադրովը իր առաջին նիստը պիտի գումարէ յառաջիկայ աշնան (նախընտրաբար Սեպտեմբերի երկրորդ կէսին):

գ. Կեդրոնական Յանձնաժողովէն առաջացնել Գործադիր Մարմին մը որ պիտի ըլլայ գլխաւոր պատասխանատուն բոլոր ծրագիրներու մշակման եւ գործադրութեան, սկսեալ 1995էն մինչեւ 2001 թուականը:

Մայիսի 9ին, խորհրդակցական երրորդ նիստին ներկայ գտնուեցաւ Հայաստանի Հանրապետութեան փոխ-նախագահ Պրն. Գագիկ Յարութիւնեանը, որ հոգեւոր պետերուն ներկայացուց Հայաստանի Հանրապետութեան նախագահ Պրն. Լեւոն Տէր-Պետրոսեանի, Մայիս 1994 թուակիր հրամանագիրը:

Յետ խորհրդակցութեան որոշուեցաւ որ հայաստանեայց եկեղեցւոյ կազմելիք Կեդրոնական Յանձնաժողովն ու անկէ առաջանալիք Գործադիր Մարմինը եւ Հայաստանի Հանրապետութեան նախագահին կազմած Պետական Յանձնաժողովը սերտ գործակցութեամբ յառաջ տանին 1700-ամեակի հետ առնչուած աշխատանքները:

ԴԻԻԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

ԼՈՅՍԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

«Եկեալքս ի մտանել արեգական տեսաք զլոյս երեկոյիս»:

(ԵԳԿ Կիրականտից)

Այս Շաբաթ երեկոյեան, Կիրակմուտին, արեգակին մարը մտնելու ատենը, մեր հաւատացեալներու հոգիները կը լեցուին անիմանալի լոյսին խորհուրդով՝ տեսնելով երեկոյեան լոյսը, որ կ'աւտէ յաջորդ առաւօտեան Յարութեան լոյսը: Որովհետեւ մեր եկեղեցական օրէնքով, ինչպէս նաեւ հրեական՝ արեգակի մայրամուտէն ետք, կը սկսի յաջորդ օրը: Ինչպէս կը կարդանք Մատթէոսի Աւետարանին մէջ. «Եւ յերեկոյի Շաբաթուն, որում լուսանայր Միաշաբաթին եկն Մարիամ Մագդաղենացի եւ միւս Մարիամն տեսանել զգերեզմանն» (Մտթ. ԻԸ.1):

Ստեղծագործութեան առաջին օրը, Աստուած ստեղծեց երկինքն ու երկիրը եւ ապա ըսաւ. «Եղիցի լոյս. եւ եղեւ լոյս» (Մննդ. Ա. 3): Այս լոյսը կը յատկանշէ Աստուծոյ Բարութիւնը, սէրը եւ Գեղեցկութիւնը: «Եւ Լոյսը խաւարէն գատեց» (Մննդ. Ա. 4): Նոյն ատեն սկսաւ խաւարի եւ Լոյսի յաւիտեական պայքարը, այսինքն՝ Բարիին եւ չարին: Այս երեք գլխաւոր յատկանիշներով ստեղծուեցաւ աշխարհս:

Այստեղ անմիջապէս աւելցնենք թէ՛ այս առաջին Լոյսը չշփոթենք արեգակի լոյսին հետ, ինչպէս գիտենք ստեղծագործութեան պատմութենէն թէ՛ չորրորդ օրը միայն Աստուած ստեղծեց «արեգակը, լուսինը եւ աստղերը» (Մննդ. Ա. 16-19):

Այս աստուածային առաջին Լոյսին մասին ակնարկելով՝ Քրիստոս կ'ըսէ. «Եւ եմ աշխարհին լոյսը» (Յովհ. Թ. 5), եւ իրեն հաւատացողներուն ալ կը կոչէ. «Լուսոյ Որդիներ եւ Յարութեան Որդիներ» (Ղկս. ԺԶ. 8, Ի. 36):

Չենք կարծեր թէ որեւէ մի ուրիշ ազգ, ժողովուրդ այսօր սիրահար եղած ըլլայ լոյսին որքան մեր Հայ ժողովուրդը: Ապացոյց՝ մեր շարականագիրները, բանաստեղծները, որոնք յաճախ փառաբանած եւ երգած են լոյսի գաղափարը: Ճիշդ այս պատճառով, մեր ազգը անմիջապէս ընդունեց, հետեւեցաւ Քրիստոսի լոյսի վարդապետութեան եւ գայն պետական կրօնք հռչակեց 301 թուականին, որուն 1700 ամեակը պիտի տօնախմբուի համազգային մեծ հանդիսութեամբ եւ մեծ շուքով 2001 թուականին:

Լատինական Կաթոլիկ աշխարհը մեզմէ 13 տարիներ ետք միայն ընդունեց Քրիստոնէութիւնը, ոչ թէ՛ իրրեւ պետական կրօնք, այլ ի շարս միւս հեթանոսական կրօնքներուն: Քրիստոնեայ հաւատացեալները այլեւս պիտի կարենային իրենց կրօնքը պաշտել ազատօրէն, առանց հալածանքի:

Հայերս ըլլալով՝ ամենէն առաջ լուսոյ որդիներ, դարեր շարունակ այս լոյսի հաւատը պահելու համար շատ պայքարներ մղած ենք, պատերազմներ ունեցած ենք խաւարասէր թագաւորներու եւ պետութիւններու դէմ: Յաճախ պարտուած ենք, շատ քիչ անգամներ միայն յաղթանակ ունեցած ենք թշնամիին դէմ. սակայն երբեք չենք կորսնցուցած մեր Յարութեան Լոյսի հաւատը:

Այստեղ մի պզտիկ դրուագ մը պատմեմ ձեզի.

Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Ամեն. Թորգոմ Արք. Մանուկեանին հետ այցելութեան գացած էինք Հ.Բ.Միութեան-Գթութեան հոգեւոր գրատունը: Այնտեղ գուգադիպութեամբ հանդիպեցանք «Սղրէս» հոգեբուժական հիւանդանոցի հիւանդապահուի՝ Սեդա Յարութիւնեանի,

որ շատ խնդրեց որ Պատրիարքը անպայման
երթար իրենց հիւանդանոցը, տեսնելու,
մխիթարելու եւ աղօթելու Արցախ-
Ղարաբաղի հաշմանդամ դարձած քաջ
մարտիկներուն ...:

Մեր ճամբու ընթացքին տեսնա՞մ
Արցախի մէջ զոհուած երիտասարդ քաջ
մարտիկներու յուղարկւորութիւնը: Շատ
յուզիչ էր պահը, մարդուն էութիւնը
ցնցելու աստիճան: Հիւանդանոց հասնելով՝
տեսնա՞մ կարգ մը հաշմանդամ մարտիկներ,
որոնք ծխելով՝ նարտի կը խաղային: Այս
մէկը յուսադրիչ էր, ի հարկէ: Սրահին մէջ
տեսնա՞մ այդ հաշմանդամները, մէկը
ձեռքը կորսնցուցած, միւսը՝ ոտքը, իսկ
ուրիշ մը՝ աչքը, ուրիշ մէկն ալ ջղային
դրութեան մէջ էր: Հագիւ կրնային մեր
արցունքը զսպել: Բարեբախտաբար մոռալ
ունէին: Պատրիարքը իր մխիթարական
խօսքին մէջ ըսաւ. «... Սիրելի եղբայրներ,
Հայ ժողովուրդի Քաջ Մարտիկներ, ինչ
վիճակի մէջ ալ ըլլանք՝ քնաւ պէտք չէ
յուսահատիլ: Յուսահատիլը հայու ոգին
չէ: Միշտ պէտք է ապաւինիլ ամենագոր
Աստուծոյ: Դուք ձեր կեանքի գնով
կռուեցա՞ք Արցախ - Ղարաբաղի
ազատագրութեան եւ Հայ ժողովուրդի
խաղաղութեան համար: Աստուած ձեզ
բոլորդ օրհնէ եւ զօրացնէ:

Պատրիարք Սրբազանին այս խօսքերէն
ոգեւորուած՝ իրենց Գնդապետը
արտասանեց Յովհաննէս Շիրազի «Հրաշք
Ոգեգալուստի» բանաստեղծութիւնը.

.....

«Հայր իմ, ասի լալահառաչ,
«Հայը յոյսից չի գատուի,
«Երդըւում եմ շիրմիդ առաջ՝
«(Ղարաբաղն) էլ կ'ազատուի:»

Նամանաւանդ մենք որ զաւակներն
եմք քաղաքաբնակ Գրիգոր Լուսաւորչին,
մեր տկարացած, յուսահատած պահերուն
մեր աչքերը սեւեռեմք լուսաւորիչ
Հայրապետին, որ 13 տարիներ շարունակ
խոր վիրապին մէջ տոկալէ ետք, յոյսի
յաղթութեամբ պսակուեցաւ ի Հայաստան
աշխարհ: Մենք ալ անկասկած պիտի
ունենանք այդ յոյսի յաղթանակը խաւարի
դէմ:

Ահաւասիկ այս անասան հաւատով
մեր հայրերը դարեր շարունակ երգած են
եւ մենք ալ ամէն կիրակմութի
արարողութեան ընթացքին՝ «Լոյս Զուարթ»ը
կ'երգենք. «Եկեալքս ի մտանել արեգական
տեսա՞ք զլոյս երեկոյիս»:

Ս. Էջմիածին, 11 Մայիս 1994
Խօսուած՝ «Խորան Լուսոյ»
հեռատեսիլէն

ՎԱԶԷ Ծ. ՎԴԻ. ԻԳՆԱՏԻՈՍԵԱՆ

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐ

«Բարի մարդը իր սրտի բարի
գանձերից բարին է բխեցնում, իսկ
չար մարդը՝ չարն է բխեցնում,
որովհետև սրտի անլցուկից է,
որ խօսում է նրա բերանը»:
(Ղուկաս Զ. 45)

ԱՄՆ-ի Փենսիլվանիա նահանգի շտաբ օգնությունը մեքենայի արկածից վիրավորուած մի 22 տարեկան երիտասարդի արագօրէն հիւանդանոց է հասցնում: Թէեւ վիրաւորը շտապ պէտք ունի արեան ներարկման, նա յամառօրէն մերժում է ներարկումը, որովհետեւ նա մի «Նեոլաի վկայ» է: Մի քանի րոպէից նա ջղաճգութիւններով հոգեվարքի մէջ է մտնում եւ մահանում:

Ովքե՞ր են Նեոլայի վկաները, որ գերադասում են մեռնիլ, քան արիւն ներարկել: Զեն տօնում Քրիստոսի ծնունդը եւ երկրային դրախտին են սպասում:

Ծագումը.-- Նեոլայի վկաների հիմնադիրն է Ջարլզ Թէյզ Բասըլը: Նա ծնունել է 1852թ. ԱՄՆի Փենսիլվանիա նահանգի Փիտսբըրգ քաղաքում: Ջարլզի ծնողները բարեկեցիկ դասակարգի Շոտլանդացի-Իրլանդացի խառնուրդ էին եւ հաւատով պատկանում էին Նրիցական եկեղեցուն: Փոքրիկ Ջարլզը իր կրթութիւնը ստանում է մինչեւ տարրական 7րդ դասարանը եւ ապա իր հօր հետ սկսում է գործել մի հագուստեղէնի վաճառատան մէջ: Նրիցատան եկեղեցու որոշ վարդապետութիւնից դժգոհ մնալով նա շուտով միանում է Ժողովական եկեղեցուն: Ջարլզի պատանեկութեան շրջանը եղել է շատ փոթորկոտ: Ջարլզը յանախ դժոխային վախերով շրջապատուած, գիշեր ու ցերեկ տառապում էր ոգիների

հետապնդումից: Այս պարագան հոգեբանական լուրջ հիւանդութիւնների շարքին նանաչւում է որպէս մտային խելագարութիւն: Շատ չանցած Բասըլի դժգոհութիւնը սկսում է նաեւ ժողովական եկեղեցում: Նա շատ վրդովուած է զգում նախասահմանութեան եւ յաւիտեական դատապարտութեան վարդապետութիւնից: 1870թ. Բասըլը միանում է Շաքաքական-Գալստական եկեղեցուն եւ մասնակցում է Աստուածաշունչ մատեանի ուսումնասիրութիւններին: Ջարլզը մեծ եռանդով սկսում է Սուրբ Գրքի սերտողութիւնը՝ հակառակ իր 7րդ դասարանի կրթութեան եւ առանց Աստուածաբանական դաստիարակութեան, ինքն իրեն լիագօրուած է զգում Աստուածաշունչը թարգմանել եւ իր թարգմանածից էլ քարոզել: Իր քարոզութիւններից քաջալերուած նա կազմակերպում է Սուրբ Գրքի սերտողութեան մի դասարան Փիտսբըրգում 1870-1875 թ.թ.: Բասըլը եւ իր գործակիցները չհամաձայնուելով Գալստականների դիրքի եւ նրանց վարդապետութեան սկզբունքներին՝ իրենց յարաբերութիւնը խզում են նրանց հետ: 1872թ. պարոն Ջարլզ Թէյզ Բասըլը իր անունին աւելացնում է Վերապատուելի Հովիւ (Փաստոր) տիտղոսը: Նա քարոզում է պերնախօս հոնտորութեամբ ու ժողովրդին արգելում է եկեղեցին գնալ փրկութեան համար: Նա քարոզում է, որ դժոխք ասուածը ցնորական մտայնութիւն է

անհիմն երեւակայութիւն է: Այսպիսով նա ուրանում է քրիստոնէական հաւատքի հիմնական վարդապետութիւնները իր հոգին ազատելու համար դատապարտութիւնից: 1879թ. Բասըլը հրատարակում է «Դիտարան» ամսաթերթը 6000 տպաքանակով, որ հիմա միլիոնների է բարձրացել: Շուտով գրքեր եւ յօդուածներ են լոյս տեսնում «Փաստոր» Բասըլից: Ամէն անգամ, որ մի յօդուած է թերթի մէջ տպւում, նա իր դէմքի շփեղ նկարին եւ փշոտ մօրուքին երկար ժամանակ նայում է ինքն իրենից հիացած: Հաստատուած իրողութիւն է, որ Զարլըզ Բասըլը աննկարագիր, մոլորուած ու մոլորեցնող մարդ է եղել իր կեանքի ամբողջ ընթացքին: Ճանաչուած է որպէս խաչագող, ստախօս եւ կնամոլ: Վերոյիշեալ ածականները հաստատուում են պատմական հետեւեալ դէպքերով:

Բասըլը աշխատում է իր մօտ կուտակուած մեծ քանակութեամբ ցորենը ծախել կրօնը միջոց գործածելով: Ուստի 1911թ. նա հրապարակ է հանում «հրաշագործ Ցորենի» վաճառումը: Իր փարպիկ գովասանքներով մի կիլօ ցորենը ծախում է 6 տոլար, հաւաստիացնելով, որ այդ ցորենը իր մէջ պարունակում է մի հրաշքի գաղտնիք, որ աշխարհը իր նմանը տակաւին չէր տեսել: Այս կեղծիքի համար նա դատարան է յանձնուում եւ դատարանում խոստովանում է, որ իր ծախած ցորենը ոչ մի առաւելութիւն չունի շուկայի մէջ ծախուած հասարակ ցորենից: Դատարանը նրան տուգանում է 100.000 տոլար:

1912ին Վերապատուելի Զ. Բոս Օնթարիոյի Հըմլըթըն քաղաքի Մկրտչական եկեղեցու հովիւը մի թերթիկ է հրատարակում, որի մէջ երեւան է բերում Փաստոր Բասըլի վերաբերեալ որոշ դառը նշմարտութիւններ: Զարլըզ Թ. Բասըլը վերոյիշեալ հովիւը դատարան է յանձնում իր հասցէին վատահամբաւ գրութիւն

հրատարակած լինելու յանցանքով: Մի տարի տեւող դատավարութեան վերջը Բասըլը դատապարտուում է իբր սուտ երդում անող: Երբ վերապատուելի հովիւի պաշտպան փաստաբանը դատարանի մէջ Բասըլից հարցնում է «Թէ արդեօ՞ք յունարէն գիտէք». - «Անշուշտ» - պատասխանում է Բասըլը: Փաստաբանը նրան տալիս է մի յունարէն Աւետարան եւ պահանջում է, որ վրայի գրերը զանազանի, նա ապշելով նայում է գրքին եւ խոստովանում է, որ ինքը բնաւ յունարէն չի ուսանել իր կեանքի մէջ: Վերջ ի վերջոյ փաստաբանի հարցումների տեղատարափի տակ Բասըլը տեղի է տալիս եւ խոստովանում է, որ ինքը բնաւ չի ձեռնադրուել ոչ մի եպիսկոպոսի եւ ոչ էլ որեւէ կրօնական հաստատութեան կողմից: Այս պէտքը պատմական փաստաթղթերում մինչեւ այսօր մնում է Ամերիկայի դատարանի տոմարի մէջ:

1913թ. Տիկին Բասըլը գանգատուում է դատարան եւ ամուսնալուծում խնդրում՝ իր ամուսնու անբարոյական վարմունքի համար: Դատարանը ազատ է արձակում Տիկինը եւ դատապարտում է Բասըլին:

«Վան Բէլլըն» «Աղանդների Քառսը» գրքի հեղինակը այդ գրքի մէջ հետաքրքիր ակնարկութիւն է անում Բասըլի փամբորդութեան մասին դէպի Ճապոնիա եւ Զինաստան: Ճամբորդութեան վերադարձին Նիւ Եորքում մի համագումարի ընթացքին ուրանում է այդ երկրներում գործող, երկար տարիներ ջանք, քրտինք, գոհողութիւն եւ դրամ թափող քրիստոնեայ միսիոներների գոյութիւնն ու գործունէութիւնը: Նա հպարտութիւնով ձայնասփռում է թէ առաջին անգամ ինքն էր տարել Աւետարանը այդ հեթանոս երկրները, եւ թէ ինչ մեծ հիացմունքով ընդունելութիւն էր գտել իր պատգամը այդ խաւար երկրների մէջ: Ահա այս գրապարտութեան վրայ կրօնական

իշխանութիւնների առաջնորդները, որ բազմաթիւ անտարանիչներ էին ուղարկել Ճապոնիա եւ Չինաստան, Բասըլին դատարան եւն յանձնում: Ներկայացուցիչների տեղեկութիւնները կարդացուելուց յետոյ Բասըլը ըստ սովորութեան ամօթից գետին նայելով խոստովանում է, որ ինքը բնաւ յարաբերութեան մէջ իսկ չէր եղել այդ երկրներում գտնուող որեւէ կրօնական կազմակերպութեան հետ: Հաստատում է, որ նա միայն նաւով շատ հանելի ծովային պտոյտ է կատարել:

Բասըլի համար ասում է, որ աղանդների մէջ ամենաշատ մամուլը գործածող մէկն է եղել, գրել է 7 մեծադիր հատորներ «Սուրբ Գրոց Սերտողութիւններ» խորագրով, որից ծախուել է 13.000.000 օրինակ որը կոկիկ մի գումար շահ է ապահովել գրողի համար: Բասըլը հրապարակով քարոզում էր, որ անելի լաւ կը լինի, որ մարդիկ Սուրբ Գրքի փոխարէն կարդան իր գրած գրքերը:

Բասըլը քարոզում էր թէ Եհովա է Աստըծոյ երկնային հարագատ անունը, որ քրիստոնեաները միտումնաւորապէս սխալ են մեկնաբանում: Թէ կրօնը մի ժխոր ու աղմուկ է, որ ներշնչուած է սատանայից եւ քաջալերուած եկեղեցիների կողմից: Թէ Յիսուս մի ստեղծուած էակ է, ուստի պէտք չէ որ նա պաշտուի: «Նա մեռած է եւ մեռած յաւիտեան»:

Չարլըզ Թէյզ Բասըլ՝ արհեստով փերեզակ, կոչումով սուտանուն մարգարէ, կեղծիքով վերապատուելի հովիւ, իր մահկանացուն կնքում է 31 Հոկտեմբեր 1916 թուականին գնացփի մէջ, երբ մի բանախօսութիւնից տուն էր վերադառնում: Բասըլի բնաբաններից մէկը սա էր որ յաճախ կրկնում էր թէ «միլիոնաւոր մարդիկ, որ ապրում են հիմա, բնաւ մահ չպիտի մաշակեն», ինքն էլ նրանց մէջ լինելով անշուշտ: Սակայն ինքը այդ մեծաշնորհից զրկուելով մահով փակում է աչքերը: Նա իր հետեւից թողում է մեծաքանակ հարստութիւն, որ չկարողացաւ իր հետ տանել:

ՌԱՖԻԿ ԱՂԱՍԵԱՆ

ԱՂԹԱՄԱՐԵԱՆ ՆՇԵՆԻՆ ԿԸ ԾԱՂԿԻ ՎԵՀԱՐԱՆԻ ԲԱԿՈՒՄ

Խրիմեան Հայրիկ անունը իր մնայուն տեղն ունի հայ մեծանունների աստղաբոյլում: Լուսաւորչական գործունէութեամբ է նա զբաղուել թէ հասարակական-քաղաքական, մշակոյթով, գրականութեամբ, թէ՛ հոգեւոր, հասնելով Հայ Առաքելական եկեղեցու բարձրագոյն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Աթոռին, նա ամբողջ էութեամբ ծառայել է մայր ժողովրդին, պայքարել յանուն նրա վառ ապագայի: Եւ ապրում է Խրիմեան Հայրիկը իր ժողովրդի յիշողութեան մէջ ու կ'ապրի

դարեր, քանզի այն գործը, որին նա նուիրուեց, յիրաւի սուրբ էր: Նրա անունը երիցս թանկ ու հարագատ է վան-վասպուրականցիների համար: Եւ դա բնական է: Չէ որ նրան ծնել ու սնել է Վանայ հողը ... եւ այսօր Հայաստանում գործող հայրենակցական միութիւնը, որն իր շուրջն է համախմբել վասպուրականցիների, նրանց ժառանգներին, Խրիմեան Հայրիկի անունը դարձրել է իր յիւրովի նշանաբանը: Միութեան ամենամեայ անանդական առաջին միջոցառումը

նուիրում է մեծ վանեցուն: Ամեն տարի Ապրիլի 4ին, Խրիմեանի ծննդեան օրը, վասպուրականցիները մեծ խմբերով այցի են գալիս Էջմիածին՝ իրենց հայրենակցի շիրմին, երախտագիտութեան խօսքեր մրմնջում նրա մարմարեայ տապանաքարերի առաջ ...

Այսպես էր այս տարուայ Ապրիլի 4ին: Վասպուրականցիները գարնանային ծաղիկներով զարդարեցին Մկրտիչ Խրիմեանի շիրմը: Ապա Սուրբ Էջմիածնի հոգեւորականները, նախագահութեամբ Տ. Յուսիկ Արքեպիսկոպոս Սանթրուքեանի հոգեհանգստեան պատարագ մատուցեցին Խրիմեանի յիշատակին:

Սրտառուչ էր «Վասպուրական» միութեան պատուաւոր նախագահ, նարտարապետութեան դոկտոր, պրոֆեսոր Վարագդատ Յարութիւնեանի խօսքը:

«Վան-վասպուրականցիները հպարտ են - ասաց նա - որ իրենց աշխարհը տուել է հայոց կաթողիկոսներից լաւագոյններից մէկին՝ մեծ հոգեւորական, գրող, մտաւորական, նաեւ ազգային գործիչ Մկրտիչ Խրիմեանի, որի անունը դարձել է անչափ սիրելի հայ ժողովրդի համար: Այսօրուայ մեր այցելութիւնը համընկնում է մեծելոցի օրուան, գուցէ դրանում եւս մեծ խորհուրդ կայ: Այսօր եկել ենք ոչ միայն այցելելու սիրելի Հայրիկի՝ մեր մեծ համերկրացու շիրմին, մեր յարգանքի տուրքը մատուցելու նրան, այլեւ եկել ենք մայրավանքի տարածքում մեր հայրենեաց երկրից մի յիշատակ թողնելու համար: Ինչպէս գիտե՛ք, 2-3 տարի առաջ վասպուրականցիների մի խումբ երջանիկ առիթունեցաւ այցելելու մեր հայրենիք՝ Վասպուրական: Շրջեցինք վանայ լճի շուրջը, ողբացինք, թէ ինչեր ենք թողել այն կողմերում, բայց մեզ հետ բերեցինք բարի յիշատակներ, որոնցից էին Աղթամար կղզուց վերցրած նշի կորիզները: Նրեանում մեր աւագագոյն վասպուրականցի,

89ամեայ Սիրակ Մանանեանի ջանքերով այդ կորիզներից մէկը ծլարձակեց, շիվ դարձաւ: Եւ մենք որոշեցինք այն տեղափոխել Էջմիածին, տնկել Վեհարանի բակում: Զգիտեմ, այդ մատղաշ տնկին ինչպէս կը զգայ նոր միջավայրում, իրեն խորթ կը զգայ, թէ՛ ոչ, բայց ըստ երեւոյթին պիտի որ իրեն հարազատ զգայ, քանի որ տեղ է գտնում Սուրբ Էջմիածնի տարածքի վրայ: Ուրեմն բարի յիշեմք մեր սիրելի Հայրիկին: Ափսոս, որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ն տկարութեան պատճառով այս անգամ չի կարող ընդունել Վասպուրականցիների պատուիրակութիւնը: Ցանկանք Վեհափառին շտապ ապաքինում, առողջութիւն...»:

Ապա վասպուրականցիները շարժուեցին դէպի Վեհարանի բակ, որտեղ փաթաւօրէն անած ծառերի շարքում տեղ էր յատկացուել աղթամարեան դալար նշենուն: Ինչպիսի յուզմունքով քաշը վերցրեց ձեռքը բժշկուհի Զեմմա Մանասեանը՝ մայր հողում տեղ բացելու տնկիի համար, որի սերմերը ինքն էր հաւաքել Աղթամար կղզում, հաւաքել էր սրտի թրթիռով, հաւաքել իրրեւ մասունք, այնքան էլ չհաւատալով, որ այն կարող է ծլարձակել, արմատներ գցել: Եւ հրաշքը կատարուեց: Դա քնութեան հրաշքն էր, թերեւս արմատների կանչը: Եւ ես հաւատում եմ, որ կ'անցնեն տարիներ, ու Վեհարանի բակում մի գարուն կը ծաղկի աղթամարեան նշենին, մեր այն բոլոր 31 վասպուրականցիներիս նշենին, որոնց բախտ վիճակուեց 1991ի աշնանը այցելել աւետեաց երկիր՝ Վան:

Այդ այցելութիւնն էլ մի հրաշք էր, մի անհաւատալի բան: Աւելի քան ութ տասնամեակներ նախնեաց երկրի երկաթէ վարագոյրները բացուում են, եւ մեզ թոյլ են տալիս այցելել Վասպուրական: Եօթ օր միայն, բայց այդ սեղմ օրերի ընթացքում մենք հասցրեցինք տեսնել մի ամբողջ

աշխարհ, համարեայ այն ամենը, որի կարօտից շնչահեղձ էին լինում մեր մամիկներն ու պապիկները: «Երկիր չէր մեր վան, ծաղկած բուրաստան էր - ասում էին նրանք ու շարունակում - էնոր հողէն-ջրէն լինէր, թափէինք վրը մեր գլխուն ...»: Եւ մենք շատ հող ու ջուր քերինք վասպուրական աշխարհից ու դրանցով ցօղեցինք այս կեանքին արդէն հրաժեշտ տուած մեր հարազատների շիրիմները ...

Դէպի վան մեր ուղեւորութիւնը սկսուեց հայոց հնամենի քաղաքից՝ Կարսից, ապա անցաւ Անիի աւերակներով, Սարիղամիշով, Խորասանով, ուրապտոյտ Արաֆսի ափամերձ գամբաներով, հասաւ Արմէշ ու թեփուեց դէպի լճի արեւելեան ափերը: Մենք եղանք նոր կառուցուած վանում, խորացանք այգեստաններում, որոնց այժմեան տէրերը նոր սրբազրում են մտցնում նրա յատակագծում, քարճրացանք վանայ քերդը եւ այդ քարճրութիւնից ըմբռնեցինք մեր երազների լճի կոհակների, Սիփամայ սարի ներմակ գեղեցկութիւնը: Այցելեցինք վարագ, մտախոհ կանգնեցինք վանական համալիրի դեռեւս կանգուն պատերի տակ, եղանք Աղթամարում, մեր նախնաց երկրի խորհրդանշիչը դարձած կղզում: Ափից ամենամօտ հեռաւորութիւնը 3-3,5 կիլոմետր է: Այդ ուղին էլ բռնեց մեր նաւը, որը վանի ալիքները նեղում էր վասպուրական միութեան արծուանշան կապոյտ դրօշակի ներքոյ (որն աւաղ այլեւս չկայ, կորաւ անփութութեան պատճառով): Նաւազը հանելի անակնկալ մատուցեց ուղեւորներին, պտոյտ գործելով ամբողջ կղզու շուրջը՝ մօտ 4 կիլոմետր, խոռվելով կղզու քարճրաքերճ ժայռերում ապաստանած քիւրաւոր թռչունների անդորրը:

Առաջին բանը, որ գրաւեց հայաստանցի ուխտագնացների ուշադրութիւնը,

դէպի Սուրբ Խաչ եկեղեցին տանող աստիճանների երկու կողմերում տարածուած արդէն տերեւագուրկ նշենիներն էին, մերկացած ծառերին դեռ պահպանուել էին հատ ու կեմտ պտուղներ, իսկ ծառերի տակ՝ որքան ասես: Զգիտեմ, առաջինը ում մտնով անցաւ, որ այդ կորիզները հրաշալի յուշանուէր են հայրենակիցների համար, միայն քիչ անց, բոլորը տարուեցին «քերֆահաւաքով», չմոռանալով նաեւ պայուսակներում տեղաւորել նշենու չորացած ճիւղեր:

Իսկ մեր հայացքի առաջ 10րդ դարի հայ նարտարապետութեան հրաշք կոթողներից մէկն էր՝ Սուրբ Խաչ եկեղեցին, որին մենք ծանօթ էինք միայն գրքերում վերատպուած նկարներից: Ինքը հրաշք, հրաշքով փրկուած, նաեւ որոշ չափով պահպանուած: Մենք եկեղեցի ենք մտնում գլխաւոր մուտքից, եւ մեր առջեւ բացուած է աղօթատանն անյարիր մի տեսարան:

Եկեղեցու գաւթում իրար գլխի թափուած նստարաններ են, վրանների ու փալանների կոյտեր: Իսկ ներսում տասնամեակներն իրենց սեւ գործն արել են, պատերի ծեփերը այստեղ ու այնտեղ թափուել են, աղաւաղելով կամ ի սպառ ջնջելով աշխարհիկ ու հոգեւոր սիւժէներով գեղեցիկ որմնանկարները, քանդուել, տեղաշարժուել են քեմի, խորանի յատակի սալերը, իսկ բաց լուսանցքներից ելումուտ են անում կղզու թեւաւոր բնակիչները, լրացնելով ժամանակի սառն ու անտարբեր ձեռքի աւերածութիւնները:

Անցած մօտ ութ տասնամեակների ընթացքում թերեւս առաջին անգամ հարիւրաւոր մոմեր վառուեցին այնտեղ, ու խնկի հոտը քարճրացաւ աշխարհից մոռացուած, աշխարհից խոռված այս չքնաղ տաճարում:

Մէկ-երկու ժամ նաեւ եկեղեցին ապրեց իր երանելի օրերը: Վարագդատ Յարութիւնեանը կատարեց Ամենայն Հայոց

Կաթողիկոս Վազգէն Առաջինի ցանկութիւնը՝ երգեգ Խրիմեան Հայրիկի երգը:

«Հայրիկն ասաց. տես հայրենեաց փուշն անուշ է, քան ըզվարդ ...

Ես այդ փշոց մէջը դարձեալ կը որոնեմ քննուշ վարդ ...»

Արցունքները խեղդում են ուխտագնացներին: Եւ Օֆելյա Շուշանեանը՝ Վանի հերոսամարտի քաջերից մէկի թոռը, որ նախնիների հայրենիք այցելութեան է եկել ծեր մօր հետ, քնկրեկուն ձայնով կատարում է «Դիւ յամանը»:

Հնչում է նաեւ ուխտագնացների խմբի ղեկավար, Վասպուրական միութեան նախագահ Լեւոն Միրիջանեանի քասը, նա կարդում է «Հայր Մերը», ապա երգում «Տէր Ողորմեան», որ կիսաւեր վանքի կամարներից ներքոյ հնչում է որպէս բողոք առ Աստուած:

Մենք կղզուց հեռացանք, հոգու խորքում տանելով Աղթամարի խորհուրդը,

նաեւ ծիծաղախիտ ծովի կոհակներին յանձնելով Երեւանեան «Աղթամար» կոնյակը՝ ի նշան մեր այցելութեան: Դրանից մէկ օր առաջ մենք կապտակոհակ լնի ալիքներին էինք խառնել Սեւանից բերուած մի շիշ ջուր:

Քնարական բազում երգերի հեղինակ Յասմիկ Մանասերեանը Վան է եկել ամուսնու՝ Լեւոն Յովնանեանի հետ (Վանի երեսիլի մարդկանցից մէկի թոռը), որը լուսանկարների մի գեղեցիկ շարք ստեղծեց ուղեւորութեան ընթացքում՝ Ղարս, Անի, Վան, Աղթամար, Դատվան ... Ինքը՝ Յասմիկն էլ իր հոգեթով երգերի ցանկը լրացրեց Վան-Աղթամարին նուիրուած բանաստեղծութեամբ, որը կղզուց վերադառնալիս մենք անգիր ապրեցինք ու սկսեցինք երգել հեղինակի «Ծփում է Սեւանը» երգի մեղեդիներով:

Իսկ Երեւանում նա յօրինեց մի գողտրիկ երգ՝ նուիրուած Աղթամարին: Դա էլ նրա ծլարձակած նշենին է ...

ՆՈՐԱ ՄԵԼԻՔԵԱՆ

ԸՆԹԵՐՅՈՂԷՆ ՆՈԹԵՐ

ԱՄԱՆՈՐ, ԳԻՐ

Նոր տարուայ նախօրէին, ուսուցիչը դիմեց աշակերտներուն.

– Եկե՛ք ալպով պատրաստենք դպրոցին համար այնտեղ գրի առնենք Նոր տարուայ առթիւ ժողովրդական մաղթանքները խաղաղասիրութեան վերաբերեալ: Դիմեցե՛ք տնեցիներուն, ձեր ազգականներուն ու քարեկամներուն եւ տեղեկացե՛ք, թէ նման ինչ մաղթանքներ գիտեն անոնք: Գուցէ այդպիսի մաղթանքներու հանդպի՛ք ձեր ընթերցած գրքերուն մէջ: Այդ մաղթանքները մենք կարող ենք ուղարկել աշխարհի տարբեր կողմերը ապրող դպրոցականներուն եւ անոնցմէ ալ ստանալ նոյնատիպ մաղթանքներ: Ամէնքը համաձայնեցան գործի անցան: Բանի մը օրեր յետոյ աշակերտները ուսուցչին ներկայացուցին առաջին գրառումները: Ուսուցչին ամենէն շատ դուր եկան հետեւեալ երկու մաղթանքները:

«Մաղթենք, որ Ամանորը խաղաղա-
ռատ, քերտառատ ու լուսառատ ըլլայ եւ
անկատար չբողէ ոչ մէկուն քարի
ցանկութիւնը»:

«Բարի խօսքով պիտի սկսի Նոր
տարին, որպէս զի բոլոր շարունակութիւն-
ները քարի ըլլան»:

Բայց ուսուցիչը կշտամբանքի խօսք
ըսաւ անոր, ով Ամանորը գրած էր երկու
(ամանօր), իսկ Նոր տարին՝ մէկ (նոր
տարի) տառապստանքով:

– Տառապստը նման է նոր կարուած
շֆեղ հագուստին կպած ցեխի, ըսաւ
ուսուցիչը:

Եկե՛ք մենք ալ մեր դասն սկսինք այդ
տառապստանքէն: Նոր տարի եւ Ամանոր
քառերը կը գրուին մեծատառով: Աշակերտը

սխալած է. Ամանոր քառին ո տառին
փոխարէն գրած է օ, կարծելով թէ ան կապ
ունի օր քառին հետ: Այժմ վերլուծենք
Ամանոր քառը քառը: Ան կազմուած է
ամ-ա-նոր մասերէն: Ամ կը նշանակէ
տարի. ա-ն յօդակապ է. նորն ալ ձեզ
ծանօթ նոր քառն է: Այսպիսով, Ամանոր
կը նշանակէ Նոր տարի: Մեր նախնիները
Նոր տարուան տուած են քանի մը
անուններ. Ամանոր, Նոր տարի,
Նաւասարդ, Տարեգլուխ եւ այլն: Այս չորս
անուններուն մէջ ձեզ անծանօթը
Նաւասարդն է: Բառացի ան եւս կը
նշանակէ Նոր տարի. Նաւ (նոր) ասարդ
(տարի) – Նոր տարի: Աւելցնենք, որ սարդ
արմատը պահպանուած է երիտասարդ
(չափահաս)) եւ աւասարդ (պառաւ կին)
քառերուն մէջ: Աս չպէտք է շփոթել միւս՝
սարդ (հատուածոտանի կենդանի) քառին
հետ: Ոչ բոլոր քառերը նոյն իմաստն
ունին:

Բայց չկարծե՛ք, թէ ամը Ամանոր քա-
ռին սեփականութիւնն է: Հայերէնն՝ ամ
արմատով կազմուած շատ քառեր ունի:
Նախապէս ըսենք, որ ամ կը նշանակէ ոչ
միայն տարի, այլեւ՝ տարիք: Զառամեալ
(խիստ ծեր) քառին միջնամասին ամ
արմատը տարիք կը նշանակէ: Ամ արմատէն
կազմուած է նաեւ ամիկ քառը, որ կը
նշանակէ մէկ տարեկան արու ուլ:

Հայերէնի հին քառերէն է գիրը, որ
կը նշանակէ տառ, գրուածք, գրութիւն,
նամակ, գիրք, մատեան: Մշակոյթին հետ
կապուած որեւէ միտք արտայայտելու
համար գիրը համապարփակ
հասկացութեան դեր կը կատարէ: Մեսրոպ
Մաշտոցը հայերէն այբուրէնը ստեղծեց

405 թուականին: Մաշտոցեան այրուքները կը պարունակէ 36 տառ (մնացած երեքը անկցուած են հետագային): Աշխարհա-հոչակ լեզուաբան Անթուան Մեյէն այրուքներին մասին գրած է այսպէս. «Ամենքին յայտնի է, որ հայերէն այրուքներին համակարգը գլուխգործոց է: Հայերէնի հնչունական համակարգին ամեն մի հնչիւնը նշուած է յատուկ տառանշանով, եւ համակարգը այնքան լաւ հաստատուած է, որ ան հայ ազգին տուած է հնչիւնական համակարգին վերջնական արտայայտութիւն. արտայայտութիւն մը, որ մինչեւ օրս պահպանուած է առանց որեւէ փոփոխութիւն կրելու, առանց բարեւարման կարիք գգալու, որովհետեւ ան սկիզբէն իսկ կատարեալ է»:

Այրուքէն կամ տառ ըսելու փոխարէն մենք յաճախ կը գործածենք գիրը: Այսպէս, կ'ըսենք՝ Մեսրոպ Մաշտոցն ստեղծեց հայերէն գրերը: Կամ՝ Մաշտոցեան գրերը ամենահզօր գէնքը եղած են հայ ժողովրդին ազգային ինքնութիւնը պահելու համար: Գիր արմատէն կազմուած են հետեւեալ բառերը. գրել, գրիչ, վերագրել, գրածն, արագագիր, մեքենագիր, անգիր, ձեռագիր, երկաթագիր, ամսագիր, տպագիր, գրասենեակ, գրավաճառ եւ այլն:

Հիմէն գրիչ կոչուած է այն մարդը, ով արտագրած է պատրաստի քնագիրը:

Այժմ, գրիչ կը կոչուի թանաքով գրելու սարքը: Գրագետ կը կոչուի գրել-կարդալ իմացող մարդը, իսկ արեւմտահայերէնի մէջ գրագետ ըսելով կը հասկցուի նաեւ գրող (գրող արուեստագետ): Գիր բառը կը ստուգարանեն այսպէս, *գիրթել*, այսինքն՝ գրել: Մեր հները տառերը փորագրած են քարերու վրայ, ադոր համար ալ այդ արարողութիւնը կոչուած է *գիրթել*, *գրել*:

Այստեղէն առաջացած է *գիրթող* բառը, որ կը նշանակէ քանաստեղծ, քերական, քերականագետ: Դերթումով բառը կը նշանակէ գրուածով, ստեղծագործութիւն: Հայ ամենամեծ պատմիչ Մովսէս Խորենացիին տուած են Դերթողահայր եւ պատմահայր տիտղոսները: Պատմահայր կը նշանակէ ամենամեծ պատմաբանը, պատմութեան ամենամեծ գիտակը: Դերթողահայր կը նշանակէ մեծ պատմիչ ու գիտնականներու, պատմիչներու եւ գրիչներու հայր:

Հիմա դառնանք ծան արմատին: Ծան կը նշանակէ քանչեւ: Ծանուցանել կը նշանակէ իմաց տալ, յայտարարել, ծանօթ, նաեւ գիտակ, տեղեակ (օրինակ, ծանօթ մարդ, ծանօթ վայրեր, եւ այլն), ծանիր՝ քանչեւ, վերծանել՝ անծանօթանը մեկնել, բացատրել: Ծանչնալ բառին նախնայն ծ-ն ազդուելով չ-էն վերածուած է ց-ի, եւ քանչեւալը դարձած է քանչնալ:

ԲԱՌԵՐՈՒ ԽԱՂԵՐ

Ֆրասերէնէ հայերէն Լուսինեան բառարանը ճիշդ է դրած ինչ որ դրած է *aube*ին դիմաց: Թողունք այս բառին նշանակութիւնը իբր եկեղեցական շապիկ: Հոս նկատենք միայն հետեւեալ երկու նշանակութիւնները: *Aube*՝ հայերէն՝ արշալոյս. սա հորիզոնին վրայ

տեսնուած՝ օրուան առաջին լոյսը. ասոր կը յաջորդէ *aurore*՝ արեւագալէ առաջ. հայերէնի մէջ արշալոյսին կը յաջորդէ այգը՝ դարձեալ արեւագալէ առաջ: Այսու հանդերձ - Մալխասեանց է որ կ'ըսէ - բառին ընդարձակումով «այգ» կը գործածուի նաեւ օրուան առաջին ժամերուն

համար (արեւագալէ յետոյ), այգուցի կարգը գերեզմանի վրայ՝ թաղման յաջորդ օրն. վաղը այգուն կու գամ տեսնել գեղգ:

Գամֆ հիմա ջրային անիւներու aube-երուն որոնք հայերէնի մէջ կ'ըսուին փառ (յոգնակի՝ փառեր) կամ թեւ կամ թաթ, բայց նամանաւանդ փառ: Եւ կը նախընտրեն փառ-աւոր (փառեր ունեցող) անիւ, բայց կը տեսնեմ որ կարելի է ըսել նաեւ թաթաւոր, թաթակիր եւ թեւաւոր: Այս փառերուն վրայ կը հոսեցնեն վերէն ջուր որ կը դարձնէ անիւը որ կ'ըլլայ շարժիչ (moteur, trice), որ իր կարգին կը դարձնէ երկամաքը որ կ'աղայ ցորենը: Նոյն տեսակ փառեր կը կատարեն բիւր դեր այն նաւերուն վրայ որոնք կը յառաջանան իրենց բովերուն վրայ դարձող անիւներով: Հոս միջանկեալ մ'ընենք. moteur՝ եղածին պէս կը նշանակէ շարժիչ (շարժող), երբեք չվարանիմ հայերէնի մէջ գործածելու «շարժիչ» իբր «moteur». բառը կու գայ բայէն որ է շարժել: Emouvoir ալ որ է յուզել, նոյնպէս շարժում կ'ենթադրէ: Emouvoir եւ յուզել կը գործածուին անիւի ներքին հոգեկան շարժումներու համար. բայց փիզիքական տեսանելի շարժումներու համար ալ կընան գործածուիլ. այս առտու լեզուներէ գացի, քամին կը փչէր, ջուրերը յուզուած էին. «Տէր, ոչ գո՛ք ունիմ գի յորժամ ջուրքն յուզիցին, արկցէ զիս յաւազանն:»

Պոստան տոլապի ... Զգիտեմ ինչպէ՛ս կոչել այն փոքրիկ դոյլերը որոնք ագուցուած են դարձող շղթային վրայ. երբ դէպի ջուրին մէջ դառնալով կը լեցուին եւ միւս կողմէն վեր կ'ելնեն՝ բերանը դէպի վեր, ապա վերը հորիզոնական դիրք մը

կ'առնեն եւ կը թափեն ջուրը տեսակ մը առուի կամ ջրանցի մէջ, ուրկէ կ'երթայ ոռոգել արտը: Մալխասեանց լուռ է այս մասին: Larousse եւս ոչինչ կը յայտնէ այս առընչութեամբ, «aube»ի բացատրութեանց մէջ: Եւ անգամ մը ֆրանսայի մէջ տեսած եմ, պատահմամբ, «պոստան տոլապի», եւ զարմացած եմ - նման էր յամենայնի Պոլսոյ մէջ եղածներուն: Պոստան տոլապի ըսելու համար կա՞յ հայերէն բառ՝ չեմ գիտեր, եթէ չկայ՝ կարծեմ որ շատ յարմար էր ըսել ջրհան անիւ, բայց ոչ՝ ջրանիւ կամ ջուրի անիւ, զի այսպէս կընայ կոչուիլ ամէն անիւ որ ջուրի մէջ կամ ջուրով կը դառնայ. roue hydraulique:

Մալխասեանց կը սովորեցնէ ինձ հետեւեալները եւս.-

1.- «Փառատրական մեղեդի, գոր կ'երգեն նախատօնակներուն, եւ ուրիշ կցորդներ: Կիրակամտի եւ այլ տօներու փառեր: «Լոյս գուարթը» փառ մըն է:

2.- Բարակ մաշկ, թաղանթ, ինչպէս այն որ կը պատէ սոխի գլուխը եւ սոխի ամէն մի խաւը: Հակիթը պատած է փառով մը որ կը գտնուի կնեպին ճիշդ տակը եւ կնեպին փակած. ընդհանրապէս կ'ելնէ կնեպին հետ, բայց երբեմն ալ չելներ, եւ պէտք է գտնուի հանել զայն, ինչ որ կը դժուարացնէ գործը:

3.- Աչի վրայ գոյացող բարակ սպիտակ թաղանթ որ կը խանգարէ տեսողութիւնը. փառը կտրել տուաւ եւ հիմա լաւ կը տեսնէ: Ֆրանսերէնի մէջ գաղարագդ ըսուածը: Ուրեմն այսուհետեւ չըսեմք՝ «Կուռնելիոսի աչիին վարագոյր է իջեր», այլ՝ փառ է իջեր կամ գոյացեր:

4.- Փառ = կախովի կողպէք: Մինչեւ հիմա եւ կախիկանք կ'ըսէի:

Վ. Ն.

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՍՆԵՐ ԺԱՌԱՆԳԱԿՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՅԱՐԱՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՁԱՑ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

1994 Յունիս 4-ին եւ 5-ին, Շաբաթ եւ Կիրակի երեկոներում, Սրբոց Յակոբեանց Վանքի երկու կրթական հաստատութեանց Ամավերջի հանդեսները տեղի ունեցան, առաջինը՝ Ժառանգաւորաց Վարժարանի հանդիսարահին մէջ, երկրորդը՝ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ, մախազահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, եւ մերկայութեամբ Միաբան Հայրերու, ուսուցիչներու, ծնողներու եւ հանդիսատես ժողովուրդի:

Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտէզի կարմիր գոգնոցաւոր փոքրիկները կատարեցին իրենց պարի, երգի եւ արտասանութեան բաժինները, զուարեացնելով իրենց ծնողքը եւ մերկաները, Մայիս 29, Կիրակի յետ միջօրէին, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ:

Նախակրթարանի եւ երկրորդական Վարժարանի ուսանողները եւ Շրջանաւարտ դասարանը, երգերով, արտասանութեամբ եւ Հայ Մանրանկարչութեան մասին առեմախօսութեամբ, ճշիւ յայտագիր մը մերկայացուցին, եւ ստացան իրենց մրցանակները եւ Շրջանաւարտից վկայականները, ըստ վարժարանի տեսուչ՝ Գեր. Տ. Կիրեղ Նպս. Գաբրիէանի տեղեկատուութեան:

Ժառանգաւորաց Վարժարանի եւ

Ընծայարանի աշակերտները հանդէս եկան դաշնամուրի դասական եւ արդի հեղինակներէն կատարումով, մեներգի մուսկալցութեամբ, խմբերգներով, արտասանութեամբ, ուղերձով եւ բացման խօսքով, երախտագիտութիւն յայտնելով իրենց տրուած դաստիարակութեան համար: Զ. դասարանէն երկու աշակերտներ ստացան իրենց Շրջանաւարտի վկայականը: Ընծայարան Գ. դասարանի սարկաւազներ տարի մը եւս պիտի շարունակեն իրենց ուսումը, եւ իւրաքանչիւրը իր ընտրած նիւթի մասին իր աւարտագրող պիտի ամբողջացնէ եւ մերկայացնէ յաջորդ տարեշրջանի վերջաւորութեան:

Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը, Միաբանութեան անդամներուն հետ, մասնակցեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի շրջանաւարտներու ի պատիւ տրուած ճաշկերոյթներուն, Հ. Ե. Միութեան եւ Հ. Օ. Միութեան վարչութեանց կարգադրութեամբ, իրենց ակումբներու սրահներուն մէջ, երգի, արտասանութեան, մուսիկայի եւ խօսքի հանելի յայտագիրով, 16 եւ 23 Յունիսին: Շրջանաւարտները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին իրենց ծնողաց, ուսուցիչներուն եւ վանական իշխանութեան, իրենց ստացած հայեցի դաստիարակութեան համար:

ԶԱՏԿԱԿԱՆ ԾՆՈՐՀԱԿՈՐԱՆՔ

Պատրիարք Սրբազան Հայրը Զատնուան տօնին առիթով իր բարեմաղթութիւնները եւ շնորհաւորանքի գիրքը յղեց Հոգեւոր եւ Կառավարական պետներուն, որոնցմէ ստացած է բարի մաղթանքներու գիրքը:--

– Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն, Տ. Տ. Վազգէն Առաջին Սրբազանազոյն Կաթողիկոսէն.

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետ, Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսէն

– Հոռովմէական Կաթողիկ եկեղեցւոյ Սրբազան Քահանայապետ, Նորին Սրբութիւն Յովհաննէս Պօղոս Բ. Պապէն.

– Մոսկուայի եւ Ռուսիոյ Օրթոտոքս եկեղեցւոյ Ամեն. Տ. Տ. Ալեքսէյ Բ. Սրբազան Պատրիարքէն

– Թուրքիոյ Հայոց Ամեն. Տ. Գարեգին Պատրիարք Գազանճեանէն

– Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան Նախագահ Տիար Ռոպերթօ Կիւլպէնկեանէն, ի Լիզպոն

– Թեմակալ Առաջնորդներէն, Պետական եւ Ազգային Հաստատութեան ղեկավարներէն

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ ԲԵՄԱԿԱՆՔ

Ուր. 1 Ապրիլ.- Եաֆայի Ս. Նիկողայոս վանքին մէջ կատարուեցաւ Հսկման Կարգ: Նախագահեց եւ ֆարոգեց Ապաշխարութեան մասին լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, մասնակցութեամբ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջոջանեանի, Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայեանի, Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Այնանեանի, Արք. Սրկ. Գարանեանի եւ Գեորգ Սրկ. Տէվէնեանի:

Շր. 2 Ապրիլ.- Սրբոցն՝ Յովհաննու Երուսաղիմայ Հայրապետին եւ Հայրապետաց եւ Վարդապետացն Մերոց:

Պատարագը մատուցուեցաւ Սուրբ Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Այնանեան:

- Կէսօրէ ետք Գեորգ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Զիթենեաց լեռ ուր Համբարձման Սրբավայրին վրայ կատարուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ:

Կիր. 3 Ապրիլ.- Քառասներորդաց Տնտեսին: Առաւօտուն Գեորգ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Զիթենեաց լեռ ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին, ուր եպիսկոպոսական խորհրդի գլուխ պատարագեց եւ ֆարոգեց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Գշ. 5 Ապրիլ.- Հսկումին ի Ս. Հրեշտակապետաց ֆարոգեց Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Գշ. 6 Ապրիլ.- Միջին: Երեկոյին, Պատրիարք Սրբազան Հօր հրաւերով, Միաբանութեան հոգեւորական Հայրերը Մեծ Պահոց Միջինի իրենց ընթրիքի միասին ունեցան Պատրիարքարանի դահլիճին մէջ:

Եշ. 7 Ապրիլ.- Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ ֆարոգեց Գեորգ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

- Նոյն օրը Հայֆայի Ս. Եղիա մատրան մէջ կատարուեցաւ Հսկման Կարգ: Նախագահեց եւ ֆարոգեց Աղօթքի մասին Լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան, մասնակցութեամբ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջոջանեանի, Հոգշ. Տ. Հայրիկ Վրդ. Գալայեանի եւ Նորայր Սրկ. Զաֆրեանի:

Ուր. 8 Ապրիլ.- Կէսօրէ ետք Ս. Հրեշտակապետաց Եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Խաղաղական ժամերգութիւն:

- Իրիկնադէմին, յաջորդ օրուան Քառասուն Մանկանց տօնին առիթով, Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Հսկման մասնաւոր արարողութիւն: Նախագահեց եւ ֆարոգեց լուսարարապետ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան:

Ապա Հոգշ. Տ. Բագրատ Արք. Պուրնէֆեանի գլխաւորութեամբ Սարկաւագները Քառասուն Մանկանց եկարին առջեւ կարգաւորուած սեղանին դիմաց ծունկի գալով երգեցին օրուան տօնին յատուկ շարակներ:

Շր. 9 Ապրիլ.- Սրբոց Մանկանցն Քառասնից Որք ի Սեբաստիա կատարեցան:

Սուրբ Պատարագը մատուցուեցաւ ի Սուրբ Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան: Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած սեղանին վրայէն. որուն դիմացը, կաթսայի մէջ կը պլպլային ֆառասուն գոյնգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիւր խորհրդանշող:

- Կէսօրէ յետոյ, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Սուրբ Յարութեան Տաճար, ուր Սուրբ Գեորգեանին եւ Գիւտ Խաչի այրին ուխտերէն ետք, վերջնոյս կից՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Ջոջանեան:

Կիր. 10 Ապրիլ.- Քառասներորդաց Դատաւորին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ: Առաջին մուտքին հանդիսապետն էր Գեորգ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Երկրորդ մուտքին, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, որ մատոյց օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը Քրիստոսի Սուրբ Գեորգեանին վրայ: Օրուան սպասարկող վարդապետներն էին Հոգշ. Տ. Բագրատ Արք. Պուրնէֆեան եւ Հոգշ. Տ. Աւետիս Արք. Իփրանեան: Պատարագիչ Սրբազան Հայրը ֆարոգեց «Հայր Մեր»էն առաջ: Ապա նախագահեց Սրբավայրին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ թափօրին, որ արտօնեցաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Գշ. 12 Ապրիլ.- Իրիկուն Հսկումին ի Սուրբ Հրեշտակապետաց նախագահեց եւ ֆարոգեց Աւետիս Արք. Իփրանեան:

Եշ. 14 Ապրիլ.- Իրիկուն Հսկումին ի Սուրբ Յակոբ նախագահեց եւ ֆարոգեց Գեորգ. Տ. Յուսիկ Եպս. Պաղտատեան:

Ուր. 15 Ապրիլ. — Քառասներորդաց Գալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Երուսաղէմի Հրեական քաժմին մէջ գտնուող Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պուրնէֆեան:

Դշ. 19 Ապրիլ. — Աւետման նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտասեան:

Դշ. 20 Ապրիլ. — Առաւօտուն, Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտասեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իջան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Սուրբ Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

Եշ. 21 Ապրիլ. — Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ քարոզեց Հոգշ. Տ. Անուշաւան Մ. Վրդ. Զոյաճեան:

Ուր. 22 Ապրիլ. — Խ. օր մեծ պահոց: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Արեւագայ»ի, իսկ երեկոյեան՝ «Խաղաղական»ի վերջին ժամերգութիւնը:

— Հսկումին ի Ս. Հրեշտակապետաց, նախագահեց եւ քարոզեց Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պուրնէֆեան:

Եր. 23 Ապրիլ. — Այս տարուան Ապրիլ 24ը, Կիրակի, զուգահիշած ըլլալով Մաղկազարդին, նահատակաց յիշատակին հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Պատարագեց եւ քարոզեց Գերշ. Տ. Սեւան Նպս. Ղարիպեան: Մեր բիւրաւոր նահատակներուն համար կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն նախագահութեամբ Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր: Ապա՝ երկարածիգ թափօր կազմուած Զ.Է.Բ.Միութեան, Հ.Ն.Միութեան եւ Հ.Մ.Ը.Միութեան սկաւառ-արեւոյշներէ, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամներէ եւ Հայ հասարակութենէ, բազմաթիւ պատաստներու եւ ծաղկեպսակներու շարանով, յառաջացաւ դէպի Ս. Փրկիչ եկեղեցին եւ ազգային գերեզմանատունը, Հանգստեան շարականներու երգեցողութեամբ: Արարայի Նահատակաց Յուշարձանին շուրջ հաւաքուած, կարդացուեցաւ հանգստեան Աւետարանը: Յուշարձանին ոտին գետեղուած էին ազգային զանգան կազմակերպութիւններէ եկած ծաղկեպսակներ: Նորին Ամենապատուութիւնը նոյնպէս գետեղեց ծաղկեպսակ յանուն Միաբանութեան: Ապա խօսք առաւ Տիար Կարապետ Յակոբեան, Երուսաղէմի Հայ Բարեսիրաց Միութեան իբրեւ ներկայացուցիչը Յանձնախումբին մէջ:

Բազմալեզու պատաստները վեր բռնած,

հաղափին մէջէն քազմութիւնը վանք վերադարձաւ, ուր ժառանգաւորաց Վարժարանի բակին մէջ հոգեհոգեւոր երաժշտուեցաւ:

Իսկ 25 Ապրիլ, Երկուշաբթի երեկոյ, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ Ապրիլեան Նշոննի 79 ամեակի յիշատակին կազմակերպուած յայտագիրին մաս կազմող ատենախօսներէն, խմբերգներէն յետոյ, ժառանգաւոր սաներ բեմադրեցին Նիկիարդի «Վարդանանք» թատերգութիւնը շնչեղով պատգամը մեր բոլոր նահատակներուն, շարունակելու «հոգիի պատերազմը»:

Եր. 23 Ապրիլ. — Կէսօրէ ետք, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցաւ Մաղկազարդի ժամերգութիւնն ու նախատեսակը մեր վերնամատրան մէջ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Պիլիսէն ուխտաւորաբար եկած Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպս. Մուրաֆեան:

Կիր. 24 Ապրիլ. — Մաղկազարդ: Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արղ. Պուրնէֆեան: Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանաւորոյն շուրջ: Թափօրականք ի ձեռնին ունէին ծիթենեաց եւ արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց թափօրները: Կատարուեցաւ նաեւ «Անդաստան»: Թափօրապետն էր Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը: Վանք վերադարձին, Հայոց թաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրներ «Որ զիտրիտը» շարականը երգելով յառաջացան եւ բարձրացան Պատրիարհարան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդաստան»ին նախագահեց Պիլիսէն ուխտաւորաբար եկած Գերշ. Տ. Տահան Արք. Ավանեան, իսկ «Դոմբաջէք»ի արարողութեան նախագահեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, աղըներ ունենալով Հոգշ. Տ. Գուսան եւ Հոգշ. Տ. Կոմիտաս վարդապետները: Իսկ Մայր Տաճարի Աւագ խորանին, փակեալ վարագոյրին ետեւը կը գտնուէր լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Հոգշ. Տ. Աւետիս Արղ. Իփրանեան կարդաց վարագոյրներու բացման մասնակցողներուն անունները: Կատարուեցաւ

հանգանակութիւն՝ Ազունիէի Ազգային բուժարանին ի նպաստ:

Գշ. 26 Ապրիլ.՝ Աւագ Երեմիայի: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթի Սուրբ Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ:

Հանդիսացան էր Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն:

Հանդիսացան Հայր Սուրբը գլխաւորեց տաճարէն ներս կատարուած «Ուխտաւորաց թափօր»ը եւ տուաւ բացատրութիւններ:

Եշ. 28 Ապրիլ.՝ Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեան): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Վարդ Ապաշխարութեան»:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ Լուսարարացի Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Ուխտաւորներ եւ ժողովագաւորաց սաներ ընդունեցին Ս. Հաղորդութիւն:

Վէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ «Ոսկուայի» սրտագրաւ կարգը: Հանդիսացան էր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Ներկայ էին օտար բարձրաստիճան հիւրեր, որոնց կարգին Անկլիկան Եպիսկոպոսը որ շուրջառով եւ ջաթալքազ ի գլուխ բարձրացաւ Աւագ խորան եւ Աւետարանէն հատուած մը կարդաց՝ Անգլերէնով:

Ժամ մը ետք, փոքր թափօր մը, գլխաւորութեամբ Հոգշ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեանի այցելեց Քրիստոսի զոյգ բանտերը: Ս. Հրեշտակայտաց վանուց գաւթիքը, Ս. Զիքնիի ծառին մօտ, նաեւ Ս. Փրկչի կիսաւեր մատրան մէջ: Հոգշ. Հայր Սուրբը պատմականը տուաւ սրբավայրերուն:

Գիշերուան ժամը 7-12 Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման Կարգը»: «Փառք ի բարձունսն» ետք Տաճարին խորհրդաւոր մթութեան մէջ, «Յայսմաւուրքի Ամպինն» քարոզեց Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեան: Ժամերգութեան աւարտին Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի քո Քրիստոս»ի խնկարկութիւնը:

Ուր. 29 Ապրիլ.՝ Աւագ Ուրբաթ (Յիշատակ Խաչելութեան):

Վէսօրը քիչ անց, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ «Վարդ Խաչելութեան» նախագահութեամբ Գերշ. Տ. Կիրեղ Եպս. Դաքիկեանի:

Վէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր «Թաղման Կարգ»: Հանդիսացան էր Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը:

Եր. 30 Ապրիլ.՝ Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Ս. Զատիկ): Առաւօտեան ժամը 9ին, Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէն, բանալին առնուելով Աւագ Թարգման Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեանի ձեռքէն:

Ժամը 11ին Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր յաջորդաբար կատարուեցան Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները, սկսելով Ս. Գրեթմանի դրան կնքումէն: Յունաց թափօրէն ետք, մեր լուսահանը Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան, Յունաց Ամենապատիւ Տ. Տիոտորոս Պատրիարքին հետ, մտաւ Ս. Գրեթման, ուրկէ հինգ վայրկեան յետոյ, դուրս դուրսեցաւ նուիրական լոյսը, որ ակնթարթի մը մէջ լուսակիրներու կողմէ փոխանցուեցաւ մեր վերնամատրան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր, որ անով օրհնեց վարի խուռներամ քաղմութիւնը: Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր կողքին կը գտնուէր Կ. Պոլիսէն Գերշ. Տ. Շահան Արք. Սվանեանը:

Այս տեղի ունեցաւ եռադարձ թափօր: Թափօրականք երգեցին «Քրիստոս Յարեալ» շարականը: Լուսահան Հայր Սուրբը եպիսկոպոսական խոյրով գլխաւորեց թափօրը:

Մեր թափօրին կը հետեւէին Դպտոց եւ Ասորաց թափօրները: Ժամը 15ին, վանք դարձին, ճամբու կէսին, թափօր կազմուեցաւ: Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, լուսահանը՝ ձեռք ունենալով նուիրական լոյսը, զգեստաւորուած՝ եւ դպիրներ շարականներ երգելով եւ զանգակահարութեամբ, թափօրով մուտք գործեցին Մայր Տաճար: Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը Մայր Տաճարի դասին մէջ կարդաց Ս. Զատկական Աւետարանը եւ «Կապանի» արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Ժամ մը ետք, ճրագալոյցի արարողութիւն կատարուեցաւ Մայր Տաճարին մէջ: Ճրագալոյցի Ս. Պատարագը մատուցեց Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Մուրաֆեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ նախատօնակ Գերշ. Տ. Շահան Արք. Սվանեանի նախագահութեամբ, որմէ ետք Միաբան Հայրեր եւ դպիրներ «Այսօր յարեալ» շարականը երգելով՝ բարձրացան սեղանատուն: Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան կարդաց Զատկական Աւետարանը եւ տեղի ունեցաւ միաբանական ընթրիք:

Կիր. 1 Մայիս. — Ջատիկ Յարութեան Տեան: Կես գիշերին երկու ժամ ետք, Մայրավանքի մեծ զանգը ռոֆի հանեց Միաբանութիւնը, որ Գերշ. Տ. Կիրեղ եպս. Գաբրիէանի գլխաւորութեամբ, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Ս. Գողգոթայի ուխտէն յետոյ, մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութեան մէկ մասը, մինչեւ «Հարց» շարականը: Ապա իջնելով Ս. Գերեզմանի շրջափակը, մնացեալը շարունակուեցաւ թափօրական զմացով: Մեր թափօրին կը հետեւէին Դպտոց եւ Ասորոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան» իսկ Պատանաւորիին վրայ կարդացուած Աւետարանէն ետք, Ս. Գերեզմանին վրայ երգուեցաւ «Խաչի բռնիստոս»: Կարճ դադարէ ետք Գերշ. Տ. Շահան Արք. Սվանեան մատոյց հանդիսաւոր Ս. Պատարագը Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Նաեւ քարոզեց որ ձայնասփռուեցաւ Իսրայէլի ռատիօկայանէն: Վանք դարձին Միաբանութիւնը եւ դպիրներ եւ ուխտաւորներ Հայոց թաղի մուտքէն «Այսօր յարեաւ» շարականը երգելով բարձրացան դէպի Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Ջատիկական մեծ «Անդաստան»ին:

Բշ. 2 Մայիս. — Բ. օր Ջատիկ: Յիշատակ Մեծնոց: Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ եւ քարոզեց: Սպասարկողներն էին Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան եւ Հոգշ. Բագրատ Արդ. Պուրեհեան: Ապա Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, ամպշովանիին ներքեւ Ս. Խաչափայտի մասունքէն ի ձեռնին, նաեւ Միաբան Հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որմէ ետք Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատարագիչ Սրբազան քուրինն նշխար բաժնեց:

Գշ. 3 Մայիս. — Գ. օր Ս. Ջատիկ: Մայր Տաճարի Ս. Դիւանդարի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Գերշ. Տ. Շահան Արք. Սվանեան նախագահեց Հոգեհանգստեան պաշտամունքին:

Շր. 7 Մայիս. — Դիւանդարի մատրան Կարապետին: Մայր Տաճարի Ս. Դիւանդարի մատրան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Ռուբէն Վրդ. Յովակիմեան:

Կիր. 8 Մայիս. — Նոր Կիրակէ (Կրկնագատիկ): (Յիշատակ Նահատակաց): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց լուսահան Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Ապա կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ նախագահեց Գերշ. Տ. Կիրեղ եպս. Գաբրիէան:

— Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան» նախագահեց Գերշ. Տ. Յուսիկ եպս. Պաղտատեան:

Շր. 14 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւանդարի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէթեան:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիրեղ եպս. Գաբրիէանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը, «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 15 Մայիս. — Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ): Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Կիրեղ եպս. Գաբրիէան: Հանդիսապետ Սրբազանը օրուան Ս. Պատարագը մատոյց Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ:

Ապա Հանդիսապետ Սրբազանը նախագահեց Բրիստոսի Ս. Գերեզմանին աղջեւ կատարուած «Անդաստան»ի արարողութեան:

Շր. 21 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւանդարի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 22 Մայիս. — Կարմիր Կիրակէ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան եպս. Դարիպեան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Աւետիս Արդ. Իփրահեան:

— Կէսօրէ ետք ի Ս. Յակոբ կատարուեցաւ «Անդաստան»ի արարողութիւն: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սեւան եպս. Դարիպեան:

Շր. 28 Մայիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւանդարի: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեան:

Կիր. 29 Մայիս. — Տօն Երեւման Ս. Խաչին (351): Առաւօտեան ժամերգութեան աւարտին Գերշ. Տ. Սեւան եպս. Դարիպեան ընթերցաւ Ս. Կիրեղ Հայրապետի թուղթը յղուած Կոստանդ կայսեր, ապա տեղի ունեցաւ «Անդաստան»: Հանդիսապետն էր Գերշ. Սրբազանը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Աւագ Սեղանին վրայ, որում վերելք գետեղուած էր վառ կանթեղներով Ս. Խաչին նշանը:

Ժամարարն էր Հոգշ. Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 4 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ

ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Համբարձում վրդ. Քեշիշեան:

Կիր 5 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութին մեր վերամատարան մէջ: Հանդիսացան էր Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտանան: Ժամարարն էր Հոգշ. Տ. Բագրատ Արդ. Պուրնէքեան:

- Կէսօրէ ետք տեղի ունեցաւ «Անդաստան»: Հանդիսացան էր Գերշ. Տ. Յուսիկ Նպս. Պաղտանան:

Դշ. 8 Յունիս.- Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Յուսիկ Նպսիկոպոսի գլխաւորութեամբ Հոգշ. Հայրեր ինքնաշարժով բարձրացան Զիքեմեաց լեռ, ուր Համբարձումն սրբավայրին մօտ կառուցուած վերամատարան մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

- Երեկոյեան, մոյն վայրին մէջ պաշտուեցաւ «Նկեսցէի» եւ Հսկման կարգերը, նախագահութեամբ Գեր. Տ. Յուսիկ Նպս. Պաղտանանի:

Եշ. 9 Յունիս.- Համբարձումն Տեառն: Առաւօտեան ժամը Յին, Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժով Համբարձումն լեռ բարձրացաւ, ուր կատարուեցաւ «Հրաշափառ»ով պաշտօնական մուտքը Սրբավայրէն ներս, եւ Հայկական բաժինի վրանին ներքեւ մատուցուեցաւ Ս. Պատարագը: Պատարագիչն էր Գեր. Տ. Յուսիկ Նպս. Պաղտանան որ քարոզեց Համբարձումն եւ բարձունքներէն օգնութիւն հայցելու խորհուրդի մասին, ուրկէ միայն ճշմարիտ երջանկութիւն եւ խաղաղութիւն կրնանք աւանդել:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձին առիթով կատարուած Հայրապետական մաղթանքին: Պատարագի վերջաւորութեան սրբատեղւոյն առջեւ կատարուեցաւ «Անդաստան»ի արարողութիւնը, նախագահութեամբ պատարագիչ Սրբազանին, Գեր. Տ. Յուսիկ Նպս. Պաղտանանի:

Շբ 11 Յունիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուղին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս վրդ. Շերպէքեան:

- Շաբաթ երեկոյեան ժամերգութիւնը եւ երկրորդ Մաղկազարդի նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Սեւան Նպս. Ղարիպեանի:

Կիր. 12 Յունիս.- Երկրորդ Մաղկազարդ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռազմիկ վրդ. Պողոսեան:

ՊԱՇՏՏՈՆԱԿԱՆՔ

Գշ. 5 Ապրիլ.- Առաւօտուն Միաբանութիւնը Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հօր գլխաւորութեամբ, այցելեց Ֆրանչիսկեան Միաբանութեան եւ Լատիններու Պատրիարքին՝ Միշէլ-Սապպահին, Ս. Զատիկը շնորհաւորելու: Ապա Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրը, Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ վրդ. Պողոսեան այցելեցին Պապական նուիրակին:

Միաբան Հայրեր Գերշ. Տ. Սեւան Նպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ գացին Յոյն Կաթոլիկներուն, Մարօնիքներուն եւ Լուտերականներուն:

- Յետ միջօրէին Միացեալ Նահանգաց Ընդհանուր Հիւպատոսը Երուսաղէմի մէջ, Էտուրտ Ապինկըն պաշտօնական իր այցելութիւնը տուաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր:

Եշ. 7 Ապրիլ.- Փօնթիֆիքի Միշէլն վերահսկիչ եւ նոր նշանակուած Հայր Տէնիս այցելեց Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, եւ միասին միաբանական սեղանատան մէջ միաբանից հետ ճաշի մասնակցեցան:

Գշ. 12 Ապրիլ.- Նիւ Եօքէն, Գարսիմալ ՕՔօնըրի օգնականներէն եւ Փօնթիֆիքի Միշէլն նախագահ Մօսիները Սըըըն, ընկերակցութեամբ իր գրասենեակի վերահսկիչ եղբայր Տանըլտ Մանուրի, եւ Երուսաղէմի գրասենեակի վարիչ Հայր Տէնիսի, այցելութիւն տուին Պատրիարքարան, եւ Պատրիարք Սրբազան Հօր ընկերակցութեամբ, Միաբանական սեղանատան մէջ Միաբանից հետ միասին ճաշեցին: Զաշին հրաւիրուեցաւ մահ Տիար Արմանդ Նորհատեանը, որ Շիֆակօէն Նպիկոպոսական եկեղեցւոյ ուխտաւորներու խումբի մը հետ Երուսաղէմ կը գտնուէր:

Եշ. 14 Ապրիլ.- Իսրայէլի Անկախութեան տօնին առթիւ Քաղաքապետարանի կողմէ դրկուած հրաւերին ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան եւ Հոգշ. Տ. Ռազմիկ վրդ. Պողոսեան Դաւիթ աշտարակին մէջ:

- Շիֆակօէն Նպիկոպոսական եկեղեցւոյ ուխտաւորներու խումբին ղեկավարներէն չորս անձեր, իրենց ընկերացող Տիար Արմանո Նորհատեանի եւ իր տիկնոջ հետ ներկայացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր:

- Իսրայէլի Անկախութեան տօնին առթիւ, Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Յուսիկ Նպս. Պաղտանանի, մասնակցեցաւ Նախագահ Ռայզմանի հրաւերով ընդունելութեան:

- Նոյն գիշերը ժամը Յին Թէլ Ավիվի մէջ,

ընկերակցութեամբ Հոգ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի, Պատրիարք Սրբազան Հայրը մասնակցեցաւ Վարչապետ Ռապիին հրաւերով կազմակերպուած ընդունելութեան:

Դր. 16 Ապրիլ.- Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր այցելութեան եկան Պուկարիայէն խումբ մը Հոգեւոր Առաջնորդներ, որոնք անդրադարձան Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդին սիրալիր յարաբերութեանց Պուկար Ուղղափառ եկեղեցւոյ եւ ժողովուրդին հետ:

Կիր. 17 Ապրիլ.- Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի, Ամման մեկնեցաւ, Յունաց եւ Լատինաց Պատրիարքներու հետ ընդառաջելով Յորդանանի Վեմ. Հիւսէյն Թագաւորի հրաւերին, մասնակցելու համար ծրագրուած մեծ յայտագրին ուր երախտագիտութեամբ եւ քացադէկ գնահատմով նշուեցաւ Վեմ. Թագաւորին ուրբ միլիոն տիւնարի անձնական նուիրատուութիւնը, Նրուսաղէմի մէջ Սողոմոնի Տաճարի Մօսէ Աֆսայի Գմբէթին նորոգութեան եւ ոսկեգօծման համար:

Երկուշաբթի առաւօտ, քազմահազար ժողովուրդ, քազմաթիւ երկիրներու պետական ներկայացուցիչներ, կրօնական պետեր, արուեստագէտներ, քազաւորական ընտանիքի եւ խորհրդարանի անդամներ, լեցուցած էին Ամմանի ընդարձակ պողոտաները: Սաքալայթ հեռուստատեսիլի միջոցաւ, յայտագրին մէջ որոշուած պահուն, բոլոր ներկաները հանդիսատես եղան Նրուսաղէմի Տաճարին մէջ նոյն պահուն վարագործուած յիշատակարաններու քացումին:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերանային Յորդանանի մէջ Պատրիարքի Փոխանորդ Գեր. Տ. Վահան Եպ. Թօփալեան, Գեր. Տ. Սեւան Եպս. Ղարիպեան, եւ Ազգ. Տեղական Խորհուրդէն անդամներ: Կէսօրէ յետոյ ժամը 2ին, հանդիսութեան աւարտին, երեք Պատրիարքները իրենց հետեւորդներով միասին ճաշեցին, Յունաց կեդրոնին մէջ, Յունաց Ամմանպատիւ Պատրիարքին հրաւերով: Երեքշաբթի առաւօտ, երեք Պատրիարքները Նրուսաղէմ վերադարձան:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, կարճ այս այցելութեան ընթացքին առիթ ունեցաւ հանդիպումներ ունենալ Պատրիարքի Փոխանորդ Սրբազանին եւ Տեղական Խորհուրդի անդամներուն հետ: Երկուշաբթի գիշեր, Տեղական Խորհուրդի պաշտօնական նիստին մէջ նկատի առնուեցան օրակարգի կրթական, կրօնական, եւ իրաւական հարցերը:

Ուր. 22 Ապրիլ.- Պոլիսէն 24 ուխտաւորներու խումբ մը ժամանեց, գլխաւորութեամբ Գեր. Տ.

Շահան Արք. Սմանեանի որ 35 տարի յետոյ առաջին անգամ կ'այցելէր Ս. Աթոռ, եւ Գեր. Տ. Մեսրոպ Արք. Մուրափեանի որ կազմակերպիչն էր ուխտագնացութեան:

Ուխտաւորներ ունեցանք Գալիֆոքմիայէն, Աւստրալիայէն, Նիւ Եօքէն, Բարիզէն եւ այլ վայրերէ, որոնք մասնակցեցան Աւագ Շաբթու եւ Ջատկական արարողութեանց:

Կիր. 1 Մայիս.- Միացեալ Նահանգաց Նիւ Ճըրզի Նահանգի Ներկայացուցչական Տան անդամ Կարապետ Հայթեան եւ իր տիկինը, իրենց հետեւորդներով հիւրը եղան Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, Ջատկի առաւօտուն մասնակցելով Քրիստոսի Գերեզմանին վրայ մատուցուած Ս. Պատարագին եւ Ս. Հաղորդութիւն ստանալով: Ապա շրջեցան վամֆապատկան հաստատութիւնները, եւ կէսօրին ճաշի հիւրը եղան Հ.Ե.Միութեան Ջատկական աւանդական սեղանին, Սրբազան Պատրիարք Հօր եւ Միաբանութեան անդամներուն հետ միասին: Կարապետ Հայթեան իր շնորհակալութեան խօսքին մէջ յոյս յայտնեց որ յառաջիկայ Նոյեմբերի ընտրութեանց մէջ պիտի յաջողի ընտրուիլ իրրեւ Նիւ Ճըրզի նահանգի կողմէ ընտրուած անդամ Միացեալ Նահանգաց Մերակուտական Տունին:

Դշ. 3 Մայիս.- Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, Միաբանութեան անդամներով, այցելութիւն տուաւ Յունաց Սրբազան Պատրիարքին, ըստ աւանդութեան շնորհաւորելու համար Սուրբ Ջատիկը: Ապա Ասորիներու եպիսկոպոսը իր Միաբանութեամբ, Հապէշներու եպիսկոպոսը իր Միաբանութեամբ, Լուտերականները, Լատինաց Պատրիարքը իր Միաբանութեամբ, Ֆրանչիսկեանները, Ղպտիներու եպիսկոպոսը իր Միաբանութեամբ եւ Պապական նուիրակը, եկան Հայոց Պատրիարքարան, շնորհաւորելու համար Հայերուն Ջատիկը: Անկլիկան եպիսկոպոսը երկրէն քացակալ էր:

Դշ. 4 Մայիս.- Առաւօտ ժամը 10ին Յունաց Ամմանպատիւ Տ. Տիոտորոս Պատրիարքը իր Միաբանութեամբ եկաւ Հայոց Պատրիարքարան, շնորհաւորելու համար Հայոց Ջատիկը:

Ապա Միաբանութիւնը Գերշ. Տ. Սեւան Եպս.ի գլխաւորութեամբ գնաց, Ասորիներուն, Ղպտիներուն եւ Հապէշներուն Ջատիկը շնորհաւորելու:

Եշ. 5 Մայիս.- Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը ճամբորդեց դէպի Ս. Էջմիածին, մասնակցելու համար Ամմանայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրաւերով գումարուելիք ժողովին, Կիլիկիան Աթոռի Վեհ. Կաթողիկոսին եւ Թուրքիոյ Հայոց Սրբազան Պատրիարքին հետ, ծրագրելու համար

Հայաստանի մէջ Քրիստոնէութեան պետականացման (301թ.) 1700 ամեակի հանդիսութիւնները եւ առաջադրութիւնները, գործակցաբար Անկախ Հայաստանի Հանրապետութեան Նախագահի նշանակելիք Յանձնախումբին հետ: Ամեն Պատրիարք Սրբազան Հայրը Ս. Աթոռ վերադարձաւ Մայիս 15ին:

Եւ. 5 Մայիս.— Ֆրեզնօէն Ս. Գրիգոր Քինյ.— Հայրապետեան, որ Մարտ 10էն ի վեր ուխտի եկած էր Երուսաղէմ, տուն վերադարձաւ: Ս. Գրիգոր Քահանան Ս. Աթոռ իր կնքութեան շրջանին օգտական ծառայութիւններ մատոյց քարոզութեամբ եւ ժառանգաւորաց վարժարանի եւ Ընծայարանի աշակերտներուն նոր Կտակարան դասաւանդելով եւ Ս. Գրիգորի ընթերցանութեան նիստերուն առաջնորդելով: Ան իոյններուն ունեցաւ նաեւ հրապարակային հաւաքներուն ընթացքին, թէ՛ ժառանգաւորաց եւ թէ՛ Ե. Հ. Բ. Միութեան սրահներուն մէջ:

Գշ. 17 Մայիս.— Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր այցելութեան եկաւ Եափայի քաղաքացիներ իր օգնականներով եւ ընկերակցութեամբ Եափայի Հոգեւոր Հովիւ Հոգ. Ս. Անուշահան Մ. Վրդ. Զղանեանի եւ համայնքիս գործունեայ անդամներէն Օր. Աղանի Գրիգորեանի:

Մը. 21 Մայիս.— Մահմետականաց Ատհա (Ղուրպան Պայրամի) տօնին առթիւ Օրիէնթ Հառուշներհաւորութեան այցելութիւն տուին Գեր. Ս. Սեւան Եպս. Ղարիպեան եւ Հոգ. Ս. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան:

Եւ. 26 Մայիս.— Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր այցելութեան եկան Հոռմէն Սրբազան Պապի ներկայացուցիչ Գարտիմալ Գասիթի, ընկերակցութեամբ Գեր. Ս. Տիւփրէ Եպիսկոպոսի եւ Երուսաղէմի մէջ Պապական նուիրակ Մօն. Անտրէա Մօնթէզամօյօի:

— Նոյն յետ միջօրէին Սրբազան Պատրիարք Հայրը ընդունեց այցելութիւնը Հայաստանի Տնտեսութեան նախարար Տիար Սեպուհ Թաշեանի (Երուսաղիմածին) օգնականներէն Տիար Գարեգին Նազարեանի:

Մը. 28 Մայիս.— Գերմանիայէն Լուտերական մտաւորականներու խումբ մը, Հոգ. Ս. Բագրատ Արդ. Պուրնէմանի առաջնորդութեամբ, Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր հետ տեսակցութիւն մը ունեցան, այցելել յետոյ Վանուցս կարգ մը հաստատութիւնները:

Բշ. 30 Մայիս.— Ֆրանչիսկեան Միաբանութեան Ընդհանուր Մեծաւորը՝ Հերման Շալիւֆ, Երուսաղէմ այցելեց: Դիմաւորութեամբ Դաւթի Դուռէն եւ առաջնորդութեամբ Ս. Յարութեան Տաճարը: Մեր Միաբանութեան անունով

դիմաւորողներուն մէջ էին Գեր. Ս. Սեւան Եպս. Ղարիպեան, Գեր. Ս. Վաղարշ Եպս. Խաչատրեան (Ս. Յարութեան Տնույ), Ս. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան (Աւագ Թարգման):

Ֆրանչիսկեան Մեծաւորը, ընկերակցութեամբ Երուսաղէմի Ֆրանչիսկեանց Կիւսքոտ Հայր Ժիւզէփիէ Նազարօի եւ Միաբան եղբայրներու, այցելութիւն տուաւ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, ապա առաջնորդութեամբ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճար, Ուրբաթ, 3 Յունիսին: Իսկ Շաբաթ առաւօտ, 4 Յունիսին, այցելեց Բեթղեհէմ, ուր դիմաւորողներուն մէջն էին Գեր. Ս. Սեւան Եպս. Ղարիպեան, Հոգ. Ս. Ոսկի Վրդ. Որդիքեան (Վանուց Տնույ), Հոգ. Ս. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան (Աւագ Թարգման):

Կիրակի, 5 Յունիսին, Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Ս. Սեւան Եպս. Ղարիպեանի մասնակցեցաւ Միաբանական ճաշկերոյթին, գոր Ֆրանչիսկեանց Կիւսքոտը կարգադրած էր ի պատիւ ընդհանուր Մեծաւորին, իրենց վանքի ընդարձակ սեղանատան մէջ:

Բշ. 6 Յունիս.— Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Ս. Սեւան Եպս. Ղարիպեանի եւ Գեր. Ս. Յուսիկ Եպս. Պաղտասեանի մասնակցեցաւ Իտալական ընդհանուր Հիւպատոս Տիար Ֆրանսէսօ Սփինօլայի հիւրասիրութեան:

Եւ. 9 Յունիս.— Իսրայէլի մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգաց դեսպանը, հայազգի Տիար Նդուարդ Ժէրէմեան, Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր այցելութեան եկաւ Թէլ Ավիվէն: Իր հետ բերած էր իր երկու զաւակները՝ Գրիգորը եւ Աննան, որոնք երկուքն ալ նոր շրջանաւարտ եղած էին Ուաշինկթըն մայրաքաղաքի Ժօրնթաուն համալսարանէն: Զաւակները առաջին անգամն էր որ Երուսաղէմ կ'այցելէին: Ս. Յարութեան Տաճարէն յետոյ, Հոգ. Ս. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի առաջնորդութեամբ տեսան Մայր Տաճարը, եւ Վանքէն ներս գոյութիւն ունեցող հաստատութիւնները:

Եւ. 16 Յունիս.— Անգլիոյ Թագուհիին տարեդարձին առիթով Երուսաղէմի Անգլիական Հիւպատոսի կազմակերպած հիւրասիրութեան ներկայ եղաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Գեր. Ս. Սեւան Եպս. Ղարիպեանի, Հոգ. Ս. Ռազմիկ Վրդ. Պօղոսեանի եւ Հոգ. Ս. Բագրատ Արդ. Պուրնէմանի:

Ս. ԱԹՈՌՈՑՍ ԿԻԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ
ՍՏԱՑԱԾ Է ՀԵՏԵԻԵԱԼ ԳԻՐԲԵՐԸ

1. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ
Մեսրոպ Մաշտոց. Ասողիկ. Պոեմ: Երեւան Արեւիկ, 1991 էջ 79
2. ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ
Մեսրոպ Մաշտոց. Պարոյր Սեւակ: Երեւան, 1991 էջ 79
3. Ի՞ՆՉ Է ՏԵՂԻ ՈՒՆԵՑԵԼ ՀԱՆԴՐՈՒԹՈՒՄ
Արթուր Մկրտչեան. Հրտրկթն. Հ.Յ. Դաշնակցութեան: Երեւան, ԴէՊԻ ԵՐԿԻՐ
Մատենաշար թիւ 3, 1991 էջ 16
4. ԱՆԳԼԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ ՊԱՏԿԵՐԱԲԱՌԱՐԱՆ
Սամվել Մկրտչեան. Երեւան, Սահակ-Պարթեւ, 1993 էջ 48
5. ԲԱՔՎԻ ԶԱՐԴԵՐԸ
Իրինա Մոսեսովա եւ Ավդա Հովնանյան: Երեւան, ՆԱՐԵԿԱՑԻ, 1992 էջ 275
6. ՄԱՀՎԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԻՆՉՊԷՍ ՀՈԳԻՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է ՄԱՐՄՆԻՑ
Ալբերտ Նալչաջյան: Երեւան, ՓՅՈՒՆԻԿ, 1992 էջ 123
7. ԳԷՐՈԳ ԶԱՎՈՒՇԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ
Աշոտ Ներսիսյան: Երեւան, ՀԱՅԱՍՏԱՆ, 1992 էջ 51
8. ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Մ.Գ. Ներսիսյան: Փաստաթղթերի եւ Նիւթերի ժողովածու: Երեւան, ՀԱՅԱՍՏԱՆ,
1991 էջ 757
9. ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀԱՐՑ
Յ. Բ. Ներսիսեան, Վ. Հ. Թովմասեան եւ Վ. Ա. Աթաջանեան: Երեւան, ՄԱՇՏՈՑ
Բ. Ստեփանակերտ, 1991 էջ 174
10. ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՀԱՆՋ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՅՈՒԹԵԱՆ
Լեւոն Շանթ: Երեւան, Երեւանի Համալսարանի Հրտրկթն. 1991 էջ 160
11. ՀԱՅՈՑ ՏԱՆԹԷԱԿԱՆԸ
Յովհաննէս Շիրազ: Հայ Կոտորածների Հավերժասուգին: Երեւան, ՆԱԻՐԻ, 1991
էջ 347
12. ՀԱՅԵՐԸ
Ջէյմս Քրիստոֆեր եւ Լանգ Դէյվիդ Մարշալ: Երեւան, Հայկական Հանրագիտարանի
Գլխաւոր Խմբագրութիւն, 1992 էջ 83
13. ԲԱՑԻԿՆԵՐ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ
Ծատուր Պերպերեան: Փարիզ, տպ. Փորպեա, 1990 էջ 158
14. ԽՄԲԵՐԳԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
1825-1925
Ծատուր Պերպերեան: Փարիզ, Տպ. Փորպեա, 1993 էջ 118
15. ՍՓԻՒՌԲԱՀԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
Ծատուր Պերպերեան: Նորավայ. Փարիզ, Տպ. Փորպեա, 1991 էջ 155
16. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ԹՈՒՐԿԻԱՆ
Ա. Կ. Ջիվիեգով: 1946 Փետր. 20ին Մոսկվայում կարդացած զեկուցման
սղագրութիւնը: Երկրորդ Հրատարակութիւն Երեւան, ԳԻՏԵԼԻԲ, 1991 էջ 25
17. ՍԱՐԴԱՐԱՊԱՍԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ
Սերժ Աֆանասեան: Ռուբէն Սահակեան - Քարգմանիչ -: Հայաստան, Մայիս
1918 Երեւան, Իրաւաբանական Գրականութեան Հրտրկթն. 1991 էջ 110

(շարունակելի)

ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅՃԵԱՆ

Քարտուղար Կիւլպէնկեան մատենադարանի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

- | | | |
|----------------------------------|------------------|--------|
| - Վեհ. Հայրապետի Զատկուան Քարոզը | Վազգէն Կաթողիկոս | 95-97 |
| - Հոգիի Պատերազմ | Թ.Ա.Մ. | 98-100 |

ԿՐՕՆԱԿԱՆ

- | | | |
|--------------------|--------------------------|---------|
| - Զօանձրանալ | Թ.Ա.Մ. | 101-103 |
| - Անառակի Կիրակի | Գրիգոր Քինյ. Հայրապետեան | 104-106 |
| - Համբարձման Քարոզ | Գրիգոր Տաթեւացի | 107-109 |

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

- | | | |
|--|-------------|---------|
| - Աշխարհի եւ Մարդու Ընկալման
Նարեկացու Հայեցակէտը | Ա. Ղազինեան | 110-116 |
|--|-------------|---------|

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

- | | | |
|---|-----------------------------------|---------|
| - Լորտ Պայրընի Հարուտի Որդւոյն
Պանդխտութիւնը | Թրգմն. Մուրատ Մանուկեան | 117 |
| - Հայոց Տանթեականը (Գլ. Քսաներորդ) | Յովհաննէս Շիրազ | 118-119 |
| - Դիւրաբեկ Սրտին | Աննի | 120 |
| - Answered Questions | Arthur Hagopian | 121-122 |
| - Պատասխաններ | Թրգմն. Շէն-Մահ
Արթիւր Յակոբեան | 123-125 |

ԳՐԱԿԱՆ

- | | | |
|---|-------------------|---------|
| - Երգիծականը եւ Ողբերգականը
«Ընկեր Փանջունու» վէպում | Սամուէլ Մուրատեան | 126-134 |
|---|-------------------|---------|

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

- | | | |
|--|------------------|---------|
| - Մեր Բախտի Փշոտ Շուշաններ
Նահապետ Մելքոնեանի «Կարմիր Շուշաններ
Ազատութեան Ճանապարհին» | Գեորգ Քրիստինեան | 135-136 |
|--|------------------|---------|

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

- | | | |
|---|---------------------------|---------|
| - Երուսաղէմի Հայոց Կրօնական
Հանդիսութիւնները | Կոմիտաս Ա. Քինյ. Շիրինեան | 137-142 |
|---|---------------------------|---------|

ԵՐԳԻՇՄԱԿԱՆ

- | | | |
|--------------------|----------------|---------|
| - Մկրտիչ Տիգրանեան | Յակոբ Պարոնեան | 143-148 |
|--------------------|----------------|---------|

ՏՈՄԱՐԱԿԱՆ

- | | | |
|-----------------------------------|-----------------------|---------|
| - Հայկական Տոմար - Մուտք - Ամանոր | Ռաֆայէլ Համբարձումեան | 149-153 |
|-----------------------------------|-----------------------|---------|

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ

- Ս. Թադևոս եւ Ս. Բարդղղիմէոս Առաքեալների Մասունքների փոխանցումը Հռովմէն էջմիածին	Դիւան Մայր Աթոռոյ	154-156
- Հաղորդագրութիւն	Դիւան Մայր Աթոռոյ	157
- Լոյսին Յաղթանակը	Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեան	158-159
- Ենթակայի Վկաներ	Ռաֆիկ Աղասեան	160-162
- Աղբամարեան Նշենին կը ծաղկի Վեհարանի Բակում	Նորա Մելիքեան	162-165

ԸՆԹԵՐՑՈՂԷՆ ՆՕԹԵՐ

- Ամանոր, Գիր		166-167
- Բառերու Խաղ	Վ. Ն.	167-168

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՄՆԵՐ

- Ժառ. Վրժ. եւ Ընծայարան		
- Ս. Թարգմանչաց Վարժարան		169
- Շնորհաւորանք		169
- Ս. Յակոբի Ներսէն		170-176
- Ցանկ՝ Կիւլպէնկեան Մատենադարանի կողմէ ստացուած գիրքերու	Սահակ Գալայնեան	177

ԵՐՈՒՍԱՂԷՄ ՏՊԱԳՐՈՒԱԾ «ԳԻՐԲ ՀԱՐՑՄԱՆՑ» ԵՒ «ԳԻՐԲ ԹՂԹՈՑ»

«Երուսաղեմի Պատրիարքության վերջին երկու կարեւոր հրատարակութիւններն են Գրիգոր Տաթեւացիի «Գիրք Հարցմանցը» եւ Քաղկեդոնի Ժողովի (451) երկարակութեան հարցին առնչութեամբ թղթակցութեանց հաւաքածոյ մը նկատուած «Գիրք Թղթոցը», կ'ըսէ Թորգոմ Պատրիարք Մանուկեան:

Գիրք Հարցմանցը վերատպումն է Կոստանդնուպոլիս 1739ին տպուած օրինակին, անոր կցելով հասկնալի պատճառներով դուրս ձգուած «Ընդդէմ Տանկաց» գլուխը, որ Բարգէն Նպս. Կիւլէսէրեանի ուսումնասիրութեամբ տպուած էր Վիեննայի մէջ, 1930ին:

Իսկ Գիրք Թղթոցին 1901ի տպագրութիւնը, Թիֆլիս տպուած Յովսէփ Իզմիրլեանցի կտակով հաստատուած մրցանակին եւ հրատարակութեանց Ն. հատորն է, որ պէտք էր նոյնութեամբ վերատպուէր: Թուղթերէն ումանք անամբողջ են, ումանք ոչ մէկ կապ ունին Քաղկեդոնի Ժողովին մէջ նկատի առնուած հարցերուն հետ: Թորգոմ Պատրիարք մտահոգ էր թէ՛ «Ո՞վ պիտի վերահսկէր աշխատանքները վերատպուելիք Գիրք Թղթոցի հրատարակութեան»: Նոյն ատեն ունէր պատասխանը իր մտահոգութեան. «Նա, իննսունամեայ եւ ֆիզիքական մարմնի տկարութեանց հետեւանքով իր սենեակի շրջափակէն հեռանալու անկարող Ծովականն էր, Գեր. Տ. Նորայր Արքեպս. Պողոսեանը: Մեր ձեռագիրներու լեզուն հասկցող մասնագէտն է, գրաբարի հմուտ եւ մեր մատենագիրները ուսումնասիրող գիտուն պատմագէտը»:


Եւ Նորայր Արքեպիսկոպոս իր բացատրականով կը յայտնէ. «Կատարած ենք զանազան փոփոխութիւններ. Ա. Նիւթերը դասաւորած ենք ժամանակագրական կարգին համաձայն. Բ. Այն թուղթերը որ բերի էին լրացուցած ենք զանազան ձեռագիրներու եւ տպագիրներու հետեւելով. Գ. Կատարած ենք շատ մը սրբագրութիւններ ...: Դ. Օգտագործած ենք մեծանուն բանասէր Նղիշէ Նպս. Դուրեանի օրինակը ...:» Զեղչուած են եօթը տարբեր գրութիւններ, մօտ 120 էջ: Աւելցուած են հինգ ուրիշ գրութիւններ:

«Այս հատորին արժանիքը - կը հաւաստէ Թորգոմ Պատրիարք - պէտք է նկատել միութիւնը նպատակին որուն այնքան նախանձախնդրութեամբ հետամուտ է Ծովական: «Այս հատորին մէջ իր ներկայացուցած Ծանօթութիւնները (էջք 669-674) եւ Բացատրականը (էջք 712-713), մինչեւ անգամ Ցանկ Ցատուկ Անուանցը (էջք 675-711), ինքնին ցոյց կու տան ահագնութիւնը աշխատանքին, արժանիքը մասնագէտ աշխատասիրողին, եւ բժախնդրութիւնը բանասէրին»:

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան ֆաջալերանքով հրատարակուած Գիրք Հարցմանցը (1070 էջ) եւ Գիրք Թղթոցը (752 էջ) «Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ դաւանութեան սկզբնաղբիւրներ կը ներկայանան - կ'ըսէ Թորգոմ Պատրիարք - զորս կ'ընծայենք մեր Եկեղեցւոյ զաւակներուն, իբրեւ հոգեւոր սնունդ եւ «Վահան ամբուրեան որով կարասցեն զամենայն նետս մուխս չարին շիջուցանել»:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻԻԱՆ

Ս. ԱԹՈՌՈՑ



Երուսաղէմ
Տպարան Սրբոց Յակոբեանց
1993

CALOUSTE GULBENKIAN FOUNDATION
ARMENIAN LIBRARY

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԷՆԿԻԱՆ
ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ ԹՂԹՈՑ

ԵՐԿՐՈՐԴ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ



ԵՐՈՒՍԱՂԷՄ
ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
1994



23 Ապրիլ 1994, Երուսաղեմ, Արարայի Յուշարձանին առջև Կարապետ Յակոբեանի ուղերձը Եղեռնի յիշատակին



23 Ապրիլ 1994, Ապրիլեան Եղեռնի 79 ամեակի յիշատակութիւն Արարայի Յուշարձանին շուրջ



23 Ապրիլ 1994, Ապրիլեան Նդեռնի 79 ամեակի յիշատակին հաւաք Նրուսադէի հայոց



23 Ապրիլ 1994, Հայ Ցեղասպանութեան յուշագիր պատահունք 79 ամեակի



10 Ապրիլ 1984, Դատաւորաց Կիրակիին, Ս. Յարութեան Տաճարէն թափօրով Վանք վերադարձին, Թորգոմ Պատրիարք դէմ դիմաց կ'եկէ դէպի Ս. Յարութին այցի գացող Միացեալ Նահանգաց Քաղաքական դէմքերէն Rev. Jesse Jackson-ին եւ Երուսաղէմի քաղաքացիու Ehud Olmert-ին հետ



24 Ապրիլ 1994, Ծաղկազարդ, Ս. Յարութեան Տաճարի Հայոց Տեսչարանին մէջ
Զախէն Աջ-- Ս. Յուսիկ Եպս. Պաղտասեան, Տ. Շահան Արք. Սվանեան, Պատրիարք Սրբազան,
Տ. Դաւիթ Արք. Սահակեան, Տ. Մեսրոպ Արք. Մուրափեան, Տ. Սեւան Եպս. Դարիպեան



24 Ապրիլ 1994, Ծաղկազարդ, Քրիստոսի Գերեզմանին շուրջ եռադարձ թափօրը, հետեւակ Դպտի եւ Աստրի թափօրներով



24 Ապրիլ 1994, Ծաղկազարդ, Ս. Թարութեան Տաճարէն թափօրով եւ երգով վերադարձ դէպի Հայոց Պատրիարքարան



28 Ապրիլ 1994, Աագ Հիմզաբքի, Ոսնյուայ.-

Զախեն Աջ.- Հայրիկ Վրդ. Գալայնեան, Կոմիտաս Վրդ. Շերպեքեան, Ռուբեն Վրդ. Յովակիմեան, Յուսիկ Նպս. Պաղտանեան, Շահան Արք. Սվանեան, Դաւիթ Արք. Սահակեան, Թորգոմ Պատրիարք, Կիրեղ Նպս. Գաբրիէան, Մեսրոպ Արք. Մուքաֆեան, Սեւան Նպս. Ղարիպեան, Անուշաւան Վրդ. Զդէանեան, Վանիկ Վրդ. Մանկասարեան, Համբարձում Վրդ. Քէշիշեան



28 Ապրիլ 1994, Ոսնյուայի հրաւիրեալներն

Զախեն Աջ.- Տիկին Թիգտէյլ Քաղաքապետի տեղակալ, Ճաֆ Ռուստէն Նիւ Եօրքէն, Հայր Տէնիս Պապական Միսիոնի Վարիչ, Թորգոմ Պատրիարք, Ճան Տրիգֆօլ Նիւ Եօրքէն Այօնա Գօլէնի տեսուչ, Ուրի Մօր Կրօնից Նախարարի տեղակալ, Ճօնաքան Նպս. Անկլիկան Եկեղեցւոյ, Փիլքըր Փիլքըն Անկլիկան Գօլէնի տեսուչ



28 Ապրիլ 1994, Ոսնկուայ, Տաճարի Աջակողմեան դասի մէջ հրաւիրեալներ եւ ժառանգաւոր երգեցիկներ



28 Ապրիլ 1994, Ոսնկուայ, Ձախակողմեան դասի մէջ հրաւիրեալներ եւ ժառանգաւոր երգեցիկներ



30 Ապրիլ 1994. Աւագ Շաբաթ, Լոյսի արարողութիւն, Յունաց Տէտտորոս Պատրիարքը եւ Հայոց Լուսահան Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան Քրիստոսի Գերեզմանէն դուրս ելլելու պահուն



30 Ապրիլ 1994. Աւագ Շաբաթ, Լոյսի արարողութիւնէն յետոյ Միաբանութիւնը Վանք կը վերադառնայ



1 Մայիս 1994, Ջատիկի Անդաստան, յ.մ. 4ին, վանքի մեծ բակին մէջ



1 Մայիս 1994, Ջատիկի Անդաստան, յ.մ. 4ին, վանքի մեծ բակին մէջ. «Օրհնեսցի ... հիւսիսային կողմն աշխարհի ...»:



1 Մայիս 1994, Զատիկի Անդատամ, յ.ժ. 4-ին, վանքի մեծ բակին մեջ, բաժնորով վերադարձողի
Ս. Յակոբայ Մայր Տաճար



4 Յունիս 1994 ժողովադատաց Վարժարանի Ամսվերջի Հանդեսին իւրաքանչիւր դասարանի առաջնութեան մրցանակ շահող աշակերտներ



4 Յունիս 1994 ժողովադատաց Վարժարանի Զ. դասարանէն շրջանաւարտ երկու աշակերտներ Զախէն Աջ.- Վրէժ Պերպերեան, Թորգոմ Պատրիարք, Վաչագան Պապայեան




10 Մայիս 1994, Երևան, Թորգոմ Պատրիարքի տեսակցությունը Հայաստանի Արտաֆին Գործոց Նախարար Վահան Փափազեանի և իր օգնականներ՝ Հենրիկ Գրիգորեանի և Եղուարդ Մելիքեանի հետ



10 Մայիս 1994, Երևան, Թորգոմ Պատրիարքի տեսակցությունը Մաշտոցեան Մատենադարանի Տնօրեն Սեմ Արեւշատեանի և Լուսաւորութեան Նախարար Հայկ Ղազարեանի հետ



10 Մայիս 1994, Երևան, Ժողովրդավարական վարժարանի համար ուսանողներ եւ դասախոսներ ավագանիները հարցերով զբաղող Մովակ Աւագանի գրասենյակին մէջ. Ջախեն Աջ.- Վաչէ Մ. Վրդ. Իգնատիոսեան, Մովակ Աւագան, Թորգոմ Պատրիարք, դասախոսներ՝ Նուրի Պապեան, Գրիգոր Գարախանեան



9 Մայիս 1994, Երևան, Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի հոր մահուան առիթով դրկուած ծաղկեպսակը՝ «Նրուաղէմի Թորգոմ Պատրիարքից»



10 Մայիս 1994, Երևան, Ղարապաղի Մարտիկներին վիրավորները հիւանդանոցի մէջ. Թորգոմ Պատրիարք գնահատանքի եւ փառանքանքի խօսքերով կը մխիթարէ. իր աջին՝ Տ. Յովսէփ Քհնյ. Յակոբեան



8 Մայիս 1994, Երևան, Արարատեան Թեմի եւ Հ.Բ.Ը.Մ.ի նախաձեռնութեամբ 18 երիտասարդացւան խումբերու մշակութային-կրօնական յայտագիրը Հայորդիներու / Տան (Պիոներներու) սրահին մէջ. Թորգոմ Պատրիարք փակման խօսքով, ձախին՝ Արարատեան Թեմի առաջնորդ Գարեգին Արք. Ներսէսեան



5 Յունիս 1994, Ս. Թարգմանչաց Վարժարանի Շրջանաւարտ դասարանը եւ ուսուցչական կազմը